28
Σ-39

N 102.

172.260

Редка

12004

1602 Դաւիթ 902-ԱՀ
28
Հ-39 ան

# ՀԱՒԱՔՈՒՄՆ

# ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

# ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ

յաղագս ամենայն ուսմանց քրիստոնէական հաւատոց. ժողովեալ 'ի սուրբ գրոց, և յօրինեալ ըստ կարգին հրահանգի քրիստոնէական վարժապետութեան, որ տպեցաւ 'ի Տփխիս յամի 1825.

'Ի հայրապետութեան Տեառն ԵՓՐԵՄԻ սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն հայոց.

Հրամանաւ Ընծարեալ քահանայապետութեան Տեառն Ներսիսի Առաքելագործ սրբազան Արհիեպիսկոպոսի և վիճակաւոր առաջնորդի ամենայն հայոց վրաստանի և այլոց.

1829. ՌՄՀԸ.

'Ի ՇՈՒՇԻ.

Պատրաստք լիցէք տալ պատասխանի ամ̃ի՝ որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ։ Ա՛յլ հեզութ̃բ և երկիւղիւ . . . զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօ՛թ լիցին՝ որք բամբասեն զձեր բարւոք գնացս ՚ի Քրիս-տոս։

Ա̃. Պետր. Գ̃. 15 և 16։

ԳՐԱԴ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍԽՀ ... Ր.
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
5693
38
28

## Յաղագս Ա՟ծաշունչ գրոց։

ԲԱԶՈՒՄ մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Ա՟Ծ ընդ հարս մեր մարգարէիւք։ Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի. որով և զյաւիտեանս արար։ Եբր. ա. 1. 2։

Ամենայն գիրք ա՟ծաշունչք և օգտակարք, ՚ի վարդապետութիւն են՝ և յանդիմանութիւն, և յուղղումն՝ և ՚ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Ա՟յ, յամ՟ գործս բարութեան հաստատեալ։ Բ. Տիմ. գ. 16. 17։

Կենաք

## Ա՟ծաշունչ գրքերին համար։

ՇԱՏ կերպերով և շատ օրինակներով առաջուց խօսեց Աստուած մեր հէրերի հետ մարգարէներով։ Այս վերջի օրերումս մեզ հետ խօսեց որդւովը, որ նորան ամէն բանի ժառանգ դրաւ, որ նորանով էլ յաւիտեանները արաւ, Եբր. ա. 1. 2։

Ամէն ա՟ծաշունչ գրքերն օգտակար են սովորցնելոյ՝ մեղքը երեսը տալոյ՝ ուղղելոյ, և արդարանալոյ խրատի համար։ Որ ա՟յ մարդն կատարեալ լինի, ամէն բարի գործքերում հաստատուած, Բ. Տիմ. գ. 16. 17։

Ա՟յ

Կենդանի է բանն Այ՝ և ազդօղ՝ և հատու քան զամենայն սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ՝ ոգւոյ՝ և յօդից՝ և ուղղոյ. և քննիչ է մտաց՝ և խորհրդոց սրտից, և չի՛ք արարած աներևոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա։ Եբրայ. Դ. 12. 13։

Օրէնք Տեառն անբիծք են և դարձուցանեն զհոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ է. և իմաստուն առնէ զտղայս։ Արդարութիւնք Տեառն ուղիղք են, և ուրախ առնեն զսիրտս. պատուիրանք Տեառն լոյսք են, և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է, և մնայ յաւիտեան։ Դատաստան Տեառն ճշմարիտ է, և արդար է ՚ի նոյն. ցանկալի է նա քան զոսկի՝ և քան զականս պատուականս բազումս, քաղցր է նա՝ քան զմեղու խորիսխ։

Բան

Այ խօսքն կենդանի է՝ և ուժով՝ և կտրող քանց ամեն երկու բերանի սուր, և ներս է մտնում մինչև շնչի՝ հոգւոյ՝ խաղերի և ըղուղի բաժանվիլն. և մտքի և սըրտի խորհուրդների քննօղ է. և ստեղծված չկայ՝ որ նորա երեսից ծածկված էինի. բայց ամեն բան նորա աչքի առաջին պարզ և յայտնի է։ Եբր. Դ. 12. 13։

Տէրի օրէնքն խատակ է և հոգիները ետ կըդարձնէ. Տէրի վկայութիւնն հաւատարիմ է, և երեխաները իմաստուն կըշինէ։ Տէրի արդարութիւններն ուղիղ են, և սիրտները ուրախացնումեն. Տէրի պատուիրանքն լոյս են, և աչքերի լոյս են տալիս, Տէրի երկիւղն սուրբ է, և մնում է յաւիտեան։ Տէրի դատաստանն ճշմարիտ է, և արդար է նորա մէջ։ Ոսկու և շատ պատուական ակների վերայ նա ցանկալի է և մեղրա-

հացի

Քանզի ծառայ քո պահեսցէ զայս, 'ի պահել նորա հատուցումն բազում ։ Սաղմ. ԺԸ. 8—12 ։

հացի վերայ նա քաղցր է ։ Պատճառը որ ես քո ծառադ կըպահէ, նը պահելոյ ժամանակն շատ հատուցումն (կըլինի) ։ Սաղմ. ԺԸ. 8—12 ։

Քննեցէ՛ք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունիլ ըզկեանսն յաւիտենականս. և նոքին իսկ են. որք վկայեն վասն իմ. որովք համարիք ունիլ կեանս ։ Յոհ. Ե. 39 ։

Գրքերը քննեցէ՛ք՝ որ դուք կարծումէք նորանցով յաւիտենական կեանքը ունենալ. և հէ՛նց նորանք են, որ ինձ համար վկայումեն. նորանցով որ կարծումէք կեանք ունենալ։ Յոհ. Ե. 39 ։

Մի՛ մերժիցես զգիր օրինացս այսոցիկ 'ի բերանոյ քումմէ՝ և խոկասցես 'ի դմա 'ի տուէ և 'ի գիշերի՝ զի իմասցիս առնել զա՛մ գրեալդ 'ի դմա. և ապա յաջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո. և ապա խելամուտ լինիցիս ։ Յես. Ա. 8 ։

Այս օրէնքիս գիրը չի հեռացնես քո բերանիցդ՝ գիշեր և ցերեկ պիտի մտածես դորանում, որ իմանաս դորանում ամեն գրածը կատարել. և յետոյ յաջողակ կըլինիս, և քո ճանապարհները կըշիտակես. և յետոյ լաւ հասկացող կըլինիս ։ Յես. Ա. 8 ։

Եղիցին պատգամքս այսոքիկ՝ զորս ես պատուիրեմ քեզ այսօր 'ի սրտի քում և յանձին քում։ Եւ իմացուսցե՛ս զայս որդւոց քոց, և

խօ

Այս խօսքերս՝ որ ես այսօր քեզ հրամայումեմ, պիտի լինին քո սրտումդ՝ և քո անձնումդ. և էս իմացում տաս քո որդւոցդ, և սրան-

ցով

խօսեսցիս սոքօք · 'ի նստիլ 'ի տան, և 'ի գնալ 'ի ճանապարհի · և 'ի ննջել, և 'ի յառնել : Բ · Օրինաց · Զ · 6 · 7 :

ցով խօսե՛ս, տան մէջումն նստած, և ճանապարհ գը- նալոյ, և քնելոյ և վեր կե- նալոյ ժամանակը : Բ · Օրինաց · Զ · 6 · 7 :

## Հանգանակ հաւատոյ :

Հաւատամք 'ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից : Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ ծնեալ յԱյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր : Աստուած յԱստուծոյ · լոյս՝ 'ի լուսոյ · Աստուած ճշմարիտ · յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ, և ոչ արարած : Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր · որով ամենայն ինչ եղև յերկինս, և 'ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք : Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի

## Հաւատքի դաւանութիւն :

Հաւատումենք մին աստուծուն՝ հօր ամենակալին, որ շինեց երկինքը և երկիրս, երևօղները և չի երևօղները : Եւ մի Տէրին Յիսուսին Քրիստոսին Այ որդուոյն՝ ծնվածին ած հօրիցն մէկ ծընվածին, այսինքն (1) հօր էութիւնիցն : Այ ածանիցն՝ լոյս լուսիցն՝ ած ճշմարիտ, ճշմարիտ ածանիցն՝ ծնված, և չի ստեղծված : Նա ինքն հօր բնութիւնիցն, որ նորանով ամեն բան էլաւ երկնքումն, և երկրի վր · երևօղներն և չի երևօղներն : Նա մեզ մարդկանցս համար, և մեզ փրկելոյ համր վեր

(1) Էութենէն

՚ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին՝ զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն, և փառօք Հօր՝ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ՚ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս, և ՚ի մարգարէս և յաւետարանս. որ էջն ՚ի Յորդանան. քարոզեաց զառաքեալսն. և բնակեցաւ ՚ի սուրբսն։ Հաւատամք և ՚ի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի. ՚Ի մի մկրտութիւն, յապաշխա-

րութիւն

վեր ելաւ երկնքիցն, մարմին հագաւ, մարդ դառաւ, ծնվեց կատարելապէս սուրբ կոյս Մարիամիցն Հոգւով սրբով։ Նորանով առաւ մարմին, հոգի և միտք, և ամեն ինչ որ մարդումն կայ՝ ճշմարտապէս, և չի կարծիքով։ Չարչարվեց՝ խաչվեց՝ թաղվեց՝ երեք օրումն յարութիւն առաւ, վերելաւ երկինքն՝ էն մարմնովն նստեց հօր աջի կողմին։ Գալու է էն մարմնովն, և հօր փառքովն. կենդանիներն և մեռածներն դատելոյ համար. նորա թագաւորութեանն վերջ չկայ։ Հաւատումենք էլ Սուրբ Հոգւոյն, որ չի ըստեղծված է և կատարեալ, նա որ խօսել է օրէնքումն, և մարգարէութիւններումն և աւետարանումն, որ վեր եկաւ յորդանան գետը, քարոզեց ուղարկվածի (առաքելոց) համար և բնակվեց սուրբերումն։ Հաւատումենք մին էլ մին մենակ հասարակ (ընդհանրական) և

առաք

քութիւն ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց ։ ՚Ի յարութիւն մեռելոց ․ ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց ։ Յարքայութիւն երկնից , և ՚ի կեանսն յաւիտենականս ։

առաքելական եկեղեցւոյն ։ Մի մկրտութեանն, ապաշխարութեանն , և մեղքերին քաւուն և թողուն լինելոյն ։ Մեռածների յարութիւն առնելոյն , յաւիտենական դատաստանին , հոգիների և մարմինների ։ Երկնքի արքայութեանն , և յաւիտենական կեանքին ։

* ～～～～～～～～～～～～～～～～ *

## ԳԼՈՒԽ․ Ե ։

### Յաղագս գոյութեան և յատկութեանց Այ ։

1․) Գոյութիւն Այ ։

Առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել Այ ․ այլ հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Ած՝ թէ է՛ Ած ․ և որ խնդրեն զնա՝ լինի պարգևատու ։ Եբրայ․ ժա․ 6 ։

### Այ լինելոյն և յատկութիւններին համար ։

1․) Լինելն Այ ․

Առանց հաւատքին անհնար է Աստուծուն ընդունելի լինել , բայց հաւատալ պէ՛տք է նորան որ մօտանումէ աստուծուն մօտ՝ որ կայ Ած ․ և որ պարգևները տալիս է նորանց , որ խընդրումեն նորան ։ Եբր․ ժա․6 ։

Գիտութիւն Այ յայտնի է ՚ի նոսա ․ քանզի Ած իսկ յայտնեաց նոցա ։ Զի աներևոյթք

Այ գիտութիւն նորանցում յայտնի է , պատճառ որ հենց Ած նորանց յայտնեց ։ Որ

ւոյթք նորա ՚ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին. յն է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն, և Աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեքին տալ պատասխանի: Հռոմ. ա. 19. 20:

Ամենայն տուն կազմի, յումեքէ կազմի. իսկ որ զամենայն արար, Այն է: Եբր. գ. 4:

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում. թէ ոչ գոյ Աստուած: Սաղմ. ժգ. 1:

---

2.) Յաղագս Միութեան Այ:

ա. Ր Է:

Լուր Իսրայէլ՝ Տէր Աստուած մեր՝ Տէր մի է: Բ. Օրինաց. զ. 4:

Մի Աստուած, և հայր ամենեցուն. որ ՚ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին՝ և յամենեսին ՚ի մեզ: Եփես. դ. 6:

Բ. Հոգէ

նորա չի երևոյթներ աշխարհքիս սկիզբէն ստեղծուածներովս իմացվումեն և տեսնվումեն. յն (1) նորա միշտ լինելն և զօրութին, և Աստուծին. որ իսկի չի գտնեն պատասխան տալ: Հռոմ. ա. 19. 20:

Ամէն տուն կը շինվի, ումենից կը շինվի. բայց նա է, որ ամենը արաւ: Եբր. գ. 4:

Անզգամ (Տղէտն) իւրան սրտումն ասեց. թէ նա չկայ: Սաղմ. ժգ. 1:

---

2.) Այ Յաղագս Միութենէն:

ա. Ր Է:

Լսի՛ր Իսրայէլի ազգ՝ Տէրն մեր նա՝ մի Տէր է: Բ. Օրինաց. զ. 4:

Մի (է) նա, և ամենին հայր, որ ամենի վերայ, և ամենին հետ, և մեր ամենիս մէջ: Եփես. դ. 6:

Բ. Հոգէ

---

(1) [illegible]

Ը. ՀՈԳԻ։

Հոգի է Ա՟Ծ՝ եւ երկրպագուաց նորա՝ հոգւով եւ ճշմարտութ՟բ պարտ է երկրպագանել։ Յոհ. Դ. 24։

Թ. ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ։

Տէր ապաւէն եղեր մեր յազգէ մինչեւ յազգ. մինչեւ լերինք հաստատեալ էին. եւ մինչչեւ ստեղծեր զերկիր եւ զա՟մ տիեզերս։ Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես։ Սաղմ. ՁԹ. 1. 2։

Յազգէ յազգ են ամք քո։ Ի սկզբանէ Տ՟ր զհիմունս երկրի հաստատեցեր. եւ գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա անցանեն. եւ դու կաս՝ եւ մնաս յաւիտեան։ Ամենեքեան ո՟պ զձորձս մաշեսցին. եւ ո՟պ զվերարկուս փոխեսցես ըզնոսա՝ եւ փոխեսցին. բայց դու նոյն ես՝ եւ ամք քո ոչ անցանեն

Ը. ՀՈԳԻ։

Ա՟Ծ հոգի է՝ եւ նորա երկրպագութիւն տուողներին պէ՛տք է, որ հոգւով եւ ճշըմարտութիւնով երկրպագուեն տան։ Յոհ. Դ. 24.

Թ. ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ։

Տէր դու մեր ապաւէն եղար՝ ազգից մինչեւ ազգ. դեռ սարերն հաստատուած չէին. եւ դեռ չէիր ստեղծել երկիրս, եւ ամեն աշխարհքս։ Յաւիտենական ժամանակից մինչեւ յաւիտենական ժամանակները դու կաս։ Սաղմ. ՁԹ. 1. 2։

Քո տարիքդ ազգից մինչեւ ազգ են։ Տ՟ր՝ դու սկիզբիցը երկրիս հիմները հաստատեցիր. եւ երկինքն քո ձեռւիդ գործքերն են։ Նորանք անցեն կենում, եւ դու կաս, եւ մնումես յաւիտեան։ Նորանք ամենքը շորի պես կըմաշվին. եւ վերարկուի (1) պես կըփոխես նորանց. եւ կըփոխվին. բայց դու էլ էն ես

(1). ԽԱԼԱԹԻՆ

անցանեն ։ Սաղմ․ ՃԱ․ 25—28 ։

Թագաւորին յաւիտենից՝ անեղծի, և աներևութի, միայն Աստուծոյ՝ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։ Ա․ Տիմ․ Ա․ 17 ։

Դ․ ամենակարօղ ։

Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և արար Տէր․ յերկինս և յերկրի․ ի ծովս և յամենայն խորս ։ Սաղմ․ ՃԼԴ․ 6 ։

Նա ասաց, և եղեն․ ինքն հրամայեաց, և հաստատեցան ։ Սաղմ․ ԼԲ․ 9 ։

Ոչ տկարասցի առ Այ ամ բան ։ Ղուկ․ Ա․ 37 ։

Ե․ ամենագէտ ։

Տէր փորձեցեր զիս՝ և ծանեար զիս ։ Դու ծանեար զնստիլ իմ․ և զյառնել իմ ։ Դու միտ առեր զխորհուրդս իմ ի հեռաստանէ․ զշաւիղս իմ, և զվիճակս իմ դու քններեր․ և զամենայն ճանապարհս իմ

յառ

ես (որ կաս) և քո տարիքդ չե՞ն անցկենում ։ Սաղմ․ ՃԱ․ 25—28 ։

Միշտ ապրող՝ չի ջնջվելի, և չի երևող Թագաւորին, մին Աստուծուն՝ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։ Ա․ Տիմ․ Ա․ 17 ։

Դ․ ամենակարօղ ։

Ամեն բան որ կամեցաւ Տէրն՝ էն արաւ, երկնքումն և երկրումս․ ծովումն և ամեն խորքի մէջումն ։ Սաղմոս․ ՃԼԴ․ 6 ։

Նա ասեց, և էլան․ ինքը հրամայեց, և հաստատվեցին ։ Սաղմ․ ԼԲ․ 9 ։

Այ առաջին ամեն բան չի՛ տկարանալ ։ Ղուկ․ Ա․ 37 ։

Ե․ ամենագէտ ։

Տէր դու ինձ փորձեցիր՝ և ինձ ճանաչեցիր ։ Դու ճանաչեցիր իմ նստելս ․ և իմ վեր կենալս ։ Հեռու տեղիցըն իմ խորհուրդներս միտքդ առար․ իմ ճանապարհներս՝ իմ բաժինս դու քննեցիր․ և իմ ամեն ճանապարհ

յառաջագոյն տեսեր ։ Ահա դու Տէր ծանեար զյետին իմ և զառաջին իմ։ Խաւարն ՚ի քէն ոչ խաւարեսցի. և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի. և խաւար նորա որպէս լոյս նմա ։ Սաղմ. ճլը. 1—4. 5. 12 ։

Որպէս զի Թէ որ տնկեաց զունկն՝ ինքն ոչ լուիցէ. կամ որ ստեղծ զակն. ինքն ոչ տեսանիցէ ։ Սաղմոս. ղգ. 9։

Ես Տէր՝ քննեմ զսիրտս՝ և փորձեմ զերիկամունս. տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց, և ըստ պտղոյ գործոց իւրոց։ Երեմ. ժէ. 10։

Գիտէ Հայր ձեր. զինչ պիտոյ է ձեզ՝ մինչև ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ։ Մատթ. զ. 8։

Փորձեա զիս Ա.Ծ՝ և ծանի՛ր զսիրտ իմ. քննեա զիս

ճանապարհներս դու առաջ տեսար։ Ահա դու Տէր իմացար իմ յետինը և իմ առաջինը։ Խաւարը քո առաջիդ չի՛ խաւարվիլ. և գիշերն ցերեկի պէս լուսաւոր կըլինի. և նորա խաւարն ինչպէս լոյս (է) նորա (փրէն) համար։ Սաղմ. ճլը. 1—4. 5. 12։

Ինչպէս Թէ նա՝ որ տնկեց ականջը՝ ինքն չի՞ լսիլ. կամ որ աչքը ստեղծեց. ինքն չի՞ տեսնիլ։ Սաղմ. ղգ. 9։

Ես Տէրս՝ քննում եմ սըրտերը և փորձում եմ երիկամունքները (1) որ տալիս եմ ամենին իւրանց ճանապարհներից, և իւրանց գործքերի պտղին չափովը։ Երեմ. ժէ. 10։

Ձեր Հայրն գիտումէ՝ Թէ ինչ պէտքէ ձեզ, որ դեռ դուք մին բան չի՛ խնդրած լինիք նորանից։ Մատթ. զ. 8։

Փորձի՛ր ինձ Ա.Ծ՝ և ճանաչի՛ր իմ սիրտս. քննի՛ր ինձ՝ և

(1) պտղըծիքները

զիս՝ և ծանի՛ր զշաւիղս իմ. և տե՛ս թէ իցեն անօրէնութիւնք 'ի ճանապարհս իմ. և առաջնորդեա ինձ 'ի ճանապարհս քո յաւիտենից։ Սաղմ. ճլը. 23. 24։

Դ. Ամենուրեք։

Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ. և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։ Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդր մօտ ես։ Եթէ առից զթեւս իմ ընդ առաւօտս. և բնակեցայց յեզերս ծովու. սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ. և աջ քո ընկալցի զիս։ Սաղմ. ճլը. 7—10։

Աստուած մերձաւոր եմ ես՝ ասէ Տէր. և ո՛չ Աստուած հեռաւոր։ Եթէ թաքիցէ մարդ 'ի թաքստեան. և ես ո՛չ տեսից զնա՝ ասէ Տէր. միթէ զերկինս և զերկիր ես ո՛չ լնուցում

ասէ

և խմացի՛ր իմ ճանապարհները. և տե՛ս թէ որ անօրէնութիւններ կ'ըլլին իմ ճանապարհներուս, և քո յաւիտենական ճանապարհները ցո՛յց տուր ինծի։ Սաղմ. ճլը. 23. 24։

Դ. Ամենուրեք։

Քո հոգուցդ ես ու՞ր գընամ. և կամ քո երեսիցդ ես ու՞ր փախչեմ։ Թէ երկինքը վեր ըլեմ՝ դու էնտեղ ես. և թէ դժոխքը վեր գամ՝ էնտեղ էլ մօտ ես։ Եթէ որ թեւեր առնեմ թռչեմ առաւօտանց. և բնակվիլիմ ծովի մօտին, բայց էն տեղ էլ քո ձեռն ինձ կառաջնորդէ. և քո աջն ինձ վեր կառնէ։ Սաղմ. ճլը. 7—10։

Տէրն ասումէ՝ ես մօտիկ (շէնօղ) Աստուած եմ. հեռու Աստուած չե՛մ։ Թէ որ ծածկվի մարդ թաքուն տեղումն՝ կը լինի՞ որ ես նորան չի տեսանեմ՝ ասումէ Տէրն. չէ՞ որ երկինքը և երկիրը ես եմ

լցնում

ասէ Տէր։ Երեմ. իգ. 23. 24։

Թէպէտ եւ գնացից ես ՚ի մէջ ստուերաց մահու. ոչ երկեայց ՚ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես։ Ցուպ քո եւ գաւազան նոքա մխիթարեսցեն զիս։ Սաղմ. իգ. 4։

Է. սուրբ։

Աստուած՝ որոյ ճշմարիտք են գործք նորա. եւ ամենայն ճանապարհք նորա իրաւամբք։ Աստուած հաւատարիմ է. եւ ոչ գոյ ՚ի նմա անիրաւութիւն. արդար՝ եւ անարատ է Տէր՝ Բ. Օրէն. լբ. 4։

Ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ՝ եւ դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք։ Վասն որոյ գրեալ է՝ եթէ եղերուք սուրբք՝ զի ես սուրբ եմ։ Ա. Պետ. Ա. 15. 16։

Ը. արդար։

Արդար ես դու Տէր. եւ ուղիղ են դատաստանք քո

լցնում՝ ասում է Տէրն։ Երեմ. իգ. 23. 24։

Թէ որ ես գնամ էլ մահի շուքներումն. չարից չեմ վախենիլ, պատճառը որ դու ար ինձ հետ ես։ Քո ձեռքի փայտը եւ գաւազանը նորանք ինձ կըմխիթարեն։ Սաղմ. իգ. 4։

Է. սուրբ։

Աստուծոյ գործքերն ճշմարիտ են եւ ամեն նորա ճանապարհներն իրաւունքով են. Աստուած հաւատարիմ է, եւ նորանում անիրաւութիւն չկայ, արդար՝ եւ անսխալ է Տէրն։ Բ. Օրինաց. լբ. 4։

Սուրբին նման՝ որ ձեզ կանչեց՝ դուք էլ ձեր ամեն ճանապարհներումն սուրբ պիտի լինիք։ Նորա համար գրված է՝ թէ սուրբ եղէք՝ ինչու որ ես սուրբ եմ։ Ա. Պետ. Ա. 15. 16։

Ը. արդար։

Դու արդար ես Տէր. եւ քո դատաստաններն ուղիղ են

քո։ Սաղմոս. ճժը. 137։

Աչք Տեառն ՚ի վերայ արդարոց. և ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա։ Երեսք Տեառն ՚ի վերայ չարագործաց. սատակել յերկրէ զյիշատակս նոցա։ Սաղմ. լգ. 16. 17։

Եթէ գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմասջի՛ք, եթէ ամ, որ առնէ զարդարութիւն՝ առ ՚ի նմանէ ծնեալ է։ ա. Յօհ. բ. 29։

ԼԹ. Ճշմարիտ։

Ծանիջի՛ք յամ սրտէ ձերմէ՝ և յամ անձնէ ձերմէ. զի ոչ վրիպեաց բան մի յամ բանից՝ զոր խօսեցաւ Տէր Ած ձեր. այլ ամ ինչ եկն եհաս ձեզ, և ոչ սխալեցաւ ՚ի նոցանէ բան մի։ Յես. իգ. 14։

Յաւիտեան Տէր բան քո կայ յերկինս, յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն քո։ Սաղմ. ճժը. 89. 90։

Խ

են։ Սաղմոս. ճժը. 137.

Տէրի աչքն արդար մարդկանց վերայ է, և նորա ականջները նորանց աղօթքին վերայ։ Տէրի երեսն չար գործողների վրէ է. նորանց յիշատակը երկրիցն սատակացնելու համար։ Սաղմ. լգ. 16. 17։

Թէ որ գիտէք՝ որ նա արդար է, (էն էլ) իմացէ՛ք, թէ ամենն, որ արդարութին է գործում՝ նորանից է ծնված։ ա. Յօհ. բ. 29։

ԼԹ. Ճշմարիտ։

Ճանաչեցէ՛ք ձեր բոլոր սրտիցն՝ և ձեր բոլոր անձնիցն, որ չի սխալվեց մին խօսք ամեն խօսքերիցն՝ որ խօսեց Տէրն ձեր Ածն. բայց ամեն բան եկաւ ձեզ հասաւ, և չի սխալվեց նորանցից մին խօսք։ Յես. իգ. 14։

Տէ՛ր քո խօսքդ միշտ կայ երկնքումն, քո ճշմարտութիւնդ ազգից մինչև ազգ կայ։ Սաղմ. ճժը. 89. 90։

Խ

Ած սէր է. և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է յԱծ. և Ած 'ի նմա բնակի ։ Ա. Յոհ. Դ. 66 ։

Ողորմութիք Տեառն անսպառք են, և ո՛չ նուազին գթութիւնք նորա ։ Ողբ. Գ. 22 ։

Գթած՝ ողորմած է Տր. երկայնամիտ՝ և բազումողորմ։ Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր. և ո՛չ յաւիտեան պահէ ոխս ։ Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ. և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ ։ Ըստ ո՛չ բարձր են երկինք յերկրէ. այնպէս զօրացոյց Տէր զողորմութի իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց։ Որչափ հեռի են արեւելք յարեւմտից. այնչափ հեռի արար 'ի մէնջ զանօրէնութիւնս մեր։ Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի Տէր յերկիւ-

ղածս

Ժ. Տարփառէք ։

Ած սէր է և որ կայ սէրի միջումն՝ բնակվածէ Այ մէջն. և Ած էլ նորանում է բնակվում։ Ա. Յոհ. Դ. 66 ։

Տէրի ողորմութի չի՛ վերջանում, և նորա խնամքն չեն նուազում ։ Ողբ. Գ. 22.

Տէրն գթած է և ողորմած. երկայնամիտ և շատ ողորմութի ունող ։ Տրն մինչև վերջը չի՛ բարկանում. և միշտ սրտումն քէն չի՛ պահում։ Մեր մեղքերի չափովն մեզ չի՛ արաւ, և մեր անօրէնութեան չափովն չի՛ հատուցում մեզ ։ Բայց ինչպէս երկինքն երկրիցը բարձր են. էնպէս զօրացրուց տէրն իւր ողորմութիւնը իւրանից վախողներին վերայ։ Որչափ որ արևելքն արևմտիցն հեռու են, էնչափ հեռացրուց մեզանից մեր անօրէնութիւնները ։ Ինչպէս կողորմի հայրն իւր

որդւոց

զկամս իւր։ Զի նա գի-տաց զստեղծուածս մեր. և յիշեաց թէ հող եմք։ Սաղմ. ճգ. 8—14։

Եթէ զմեծութեամբ քաղ-ցրութեան նորա, և զնե-րելով և զերկայնմտութեն ար-համարհեցես. չգիտե՞ս, զի քաղցրութիւնն Այ ըզ-քեզ յապաշխարութիւն ածէ։ Հռոմ. բ. 4։

ԺԱ. անքննելի։

Ո՜վ խորք մեծութեան, և իմաստութեան, և գիտու-թեան Աստուծոյ. որպէս զի առանց քննելոյ են դա-տաստանք նորա. և առանց զննելոյ ճանապարհք նորա։ Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհըր-դակից եղև նմա։ Հռոմ. ԺԱ. 33. 34։

Որ միայն ունի զանմահու-թիւն բնակեալ ՚ի լոյս ան-մատոյց. զոր ոչ՛ք ետես ՚ի մարդկանէ՝ և ոչ տեսանել

կարող

որդւոց վերայ, ինչպէս էլ կողորմի Տէրն իւրանից վախողներին վերայ։ Ինչու որ նա գիտաց մեր ստեղծվել-ը. և յիշեց թէ հող ենք։ Սաղմ. ճգ. 8—14։

Թէ որ նորա քաղցրութեն մեծութինը, ներելը և եր-կայնամիտ լինելը ոչինչ կը-համարես. չէ՞ս գիտում, որ Այ քաղցրութին քեզ ա-պաշխարութեն մէջ է տանում։ Հռոմ. բ. 4։

ԺԱ. չքննվելի։

Ի՞նչպէսի խորութին մեծու-թեն, և իմաստութեն և գի-տութեն Այ. ինչպէս չի քննելի են նորա դատաս-տաններն և չի հասկանալի նորա ճանապարհներն. Պատճառը որ՝ ո՞վ իմացաւ Տէրի միտքն, կամ ո՞վ խոր-հուրդի ընկեր էլաւ նորան։ Հռոմ. ԺԱ. 33. 34։

Նա մենակ ունի անմահութին, որ բնակված է անմօտա-նալի լուսի մէջումն. Նո-րան որ իսկի մարդ չի՝ տե-

սաւ



ՀԱՅԿ. ՍՍՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
АРМ. ССР
им. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3893 38

կարող է. որում պատիւ, և զօրութիւն յաւիտեանս. Ամէն։ Ա. Տիմ. Զ. 16

ու տեսնիլ էլ չի կարող. նորան պատիւ, և զօրութիւն յաւիտեանս։ Ամէն։ Ա. Տիմ. Զ. 16։

# ԳԼՈՒԽ. Բ։

## Յաղագս ամենասուրբ երրորդութեան։

## Ամենասուրբ երրորդութեան համար։

Ասաց աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան։ Ծննդ. Ա. 26։

Աստուած ասեց. մարդ ստեղծենք մեր պատկերին և մեր նմանութեան պէս։ Ծննդ. Ա. 26։

Բանիւ Տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա։ Սաղմ. ԼԲ. 6։

Տէրի խօսքովն երկինքն հաստատվեցան. և նորա բերանի հոգւովն նորանց ամեն զօրութիւնները։ Սաղմ. ԼԲ. 6։

Իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի։ Եւ ահա բացան նմա երկինք. և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի. և գայր ՚ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա

Երբ որ մկրտվեցաւ Յս, շուտով դուրս ելաւ ջուրից։ Եւ ահա երկինքը բացվեցին նորան. և այ հոգին տեսաւ՝ որ վէր էր գալիս աղաւնիկի պէս. և գալիս էր նորան վերայ։ Եւ ահա ձայն (էլաւ) երկնքից՝ որ աս

դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։ Մատ. Գ. 16. 17։

Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն Ս՟բյ։ Մատ. ԻԸ. 19։

Շնորհք Տեառն մերոյ Յ՟ի Քրիստոսի. եւ սէրն Ա՟յ եւ հաղորդութիւն Հոգւոյն Ս՟բյ ընդ ձեզ ամենեսին. Ամէն. Բ. Կոր. ԺԳ. 13։

Ընտրելոց . . . . . ըստ կանխագիտութեան Աստուծոյ Հօր. սրբութեամբ Հոգւոյն. 'ի հնազանդութիւն եւ 'ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի։ Ա. Պետ. Ա. 2։

Երեք են, որք վկայեն յերկինս. Հայր, Բան, եւ Հոգին Ս՟բ. եւ երեքեան մի են։ Ա. Յոհ. Ե. 7։

Ա. Յով

աստուծը. դա է իմ սիրելի որդին, դորան որ ես հաւանկացայ։ Մատ. Գ. 16. 17։

Գնացէ՛ք հիմիկացուն ՝ սովորցրէ՛ք ամեն հեթանոսներին. մկրտեցէ՛ք նորանց Հօր՝ եւ որդւոյ՝ եւ Ս՟բ Հոգւոյ անունովը, Մատ. ԻԸ. 19։

Մեր Տէր Յ՟ի Ք՟ի շնորհքը. եւ Ա՟յ սէրը, եւ Ս՟բ հոգւոյ ընկերութին ձեր ամենին հետ (լինի)։ Ամէն։ Բ. Կոր. ԺԳ. 13։

Նորանց որ ընտրված են . . . . . . Հօր Ա՟յ կանուխ գիտութեան պէս. հոգւոյն սրբութիւնովը. որ հնազանդ լինին եւ Յ՟ի Ք՟ի արիւնովը կթափվին. շնորհքն ձեզ հետ եւ խաղաղութին (ձեր մէջըն) շատանայ։ Ա. Պետ. Ա. 2։

Երեք են. որ վկայում են տալիս երկնքումն. Հայրն, բանն, (Տ՟ր Որդին) եւ Ս՟բ Հոգին, եւ էս երեքս մին են։ Ա. Յոհ. Ե. 7։

Ա. Ա՟յ

Ա. Յաղագս հօր Այ։

Ո՛չ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ո՛ւմ որդին կամիցի յայտնել։ Մտթ. ԺԱ. 27։

Ո՛չ ապաքէն մի՞ հայր է ամենեցուն ձեր. ո՞չ մի Ած հաստատեաց զձեզ։ Մաղաք. Բ. 10։

Որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Այ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա. որք ոչ յարենէ և ոչ ՚ի կամաց մարմնոյ և ոչ ՚ի կամաց առն, այլ յԱյ ծնան։ Յօհ. Ա. 12. 13։

Ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ՚ի Յս Քս։ Գաղատ. Գ. 26։

Դնեմ զծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի անուանի։ Եփես. Գ. 14. 15։



Ա. Հօր Այ համար։

Հայրը ոչ մին մարդ չի ճանաչում, հենց մենակ որդին, և նա՝ որին որ որդին կամենայ յայտնել, Մտթ. ԺԱ. 27։

Չէ՞ որ մին հայր է ձեր ամենին. չէ՞ որ մին Ած հաստատեց ձեզ, Մաղաք. Բ. 10։

Նոքա որ ընդունեցին նորան, նորանց իշխանութիւն տուեաւ. որ Այ որդիք լինին՝ նորանց որ կը հաւատան նորա անունը. նորանք որ ոչ արիւնից, և ոչ մարմնի կամքից, և ոչ մարդոյ կամքից, բայց Ածանից ծնվեցին։ Յօհ. Ա. 12. 13։

Ամենդ Այ որդիք էք Յսի Քսի հաւատովն։ Գաղատ. Գ. 26։

Ծունր եմ դնում մեր Տն Յսի Քսի հօր առաջին, որ նորանից ամեն նահապետութիւնը (*) երկնքումն և երկրումն անունեն առնում. Եփես. Գ. 14. 15։



(*) ազգերն գլուխ ընտանեաց

Տեսէ՛ք՝ զո՞րպիսի սէր շը-նորհեաց մեզ Հայր. զի որ-դիք Աստուծոյ կոչեցուք և եմք: ա. Յովհ. գ. 1:

Որ յիւր Որդին ոչ խնայ-եաց՝ այլ վասն մեր ամե-նեցուն մատնեաց զնա. զի-արդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհեսցէ մեզ: Հռովմ. ը. 32:

Մի՛ հոգայցէք, և ասիցէք. զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեց-ցուք: Զի զայդ ամ հե-թանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնա-ւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն: Մատ. զ. 31. 32.

Բ. Յաղագս որդւոյ Այ:

Ի սկզբանէ էր բանն. և բանն էր առ Աստուած. և Աստուած էր բանն: Նա էր ՚ի սկզբանէ առ Ած: Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նր եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն: Յօհ. ա. 1—3:

Որոց

Տեսէ՛ք ի՞նչպիսի սէր շը-նորհեց մեզ Հայրն. որ այ որդիք կոչվենք և ենք: Յօհ. գ. 1:

Նա՝ որ իւրան որդւոյն չի խնայեց՝ բայց մեր ամենիս համար մատնեց նորան. ի՞նչպէս չի՛ շնորհիլ մեզ ամեն բան նորա հետ: Հռով. ը: 32:

Հոգսը չի՛ քաշէք, և ա-սէք. թէ ի՞նչ պիտի ու-տենք, կմ ի՞նչ պիտի խմենք՝ կամ ի՞նչ պիտի հագնենք: Որ էդ ամենն կռապաշտ-ներն են խնդրում. պատ-ճառը որ ձեր երկնաւոր Հայրն գիտումէ՝ որ էդ ամենն ձեզ պէտք է: Մատ. զ. 31. 32.

Բ. Որդւոյն Այ համար:

Սկիզբից էր բանն (*) և էն բանն էր Այ մօտ. և Ած էր բանն: Նա սկիզ-բից էր Այ մօտ: Ամէն բան նորանով էլաւ, և առանց նորա ոչինչ չի էլաւ՝ ինչ որ էլաւ: Յօհ: ա. 1—3:

(*) Խօսքն

Նոր

Որոց ([illegible]) հարքն․ յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն․ որ է ՚ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս ։ Ամէն ։ Հռոմ․ Թ․ 5 ։

Նա (Յս Քս) է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենական ։ Ա․ Յով․ Ե․ 20 ։

Նովաւ հաստատեցաւ ամ, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, որք երևին՝ և որք ոչն երևին․ եթէ աթոռք, եթէ Տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք․ ամ ինչ նովաւ՝ և ՚ի նոյն հաստատեցաւ ։ Եւ նա է յառաջ քան զամենայն․ և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ ։ Կողոս․ Ա․ 16․ 17 ։

Ճանիցեն ամենայն եկեղեցիք՝ եթէ ես եմ, որ յանդիմանեմ զերիկամունս և

Նորանց ([illegible]) որ հերերն ([illegible])․ նահանգից որ էլ քո՞ն մարմնով կողմանից ([illegible])․ որ ամենին վերայ օրհնըված ած է յաւիտեանս ։ Ամէն ։ Հռոմ․ Թ․ 5 ։

Նա (յս քս) է ճշմարիտ Աստուած և յաւետենական կեանք ։ Ա․ Յով․ Ե․ 20 ։

Նորանով հաստատվեց ամեն բան, որ երկնքումն՝ և որ երկրումն, որ երևումեն՝ և որ չե՛ն երևում․ թէ աթոռները, թէ տէրութիւները, թէ պետութիւները ։ թէ իշխանութիւները, ամեն բան նորանով՝ և նորանում հաստատվեց․ Եւ նա է ամեն բանից առաջ՝ և ամեն բան նորանով հաստատ մնաց կատարելապէս ։ Կողոս․ Ա․ 16․ 17 ։

Պիտի ճանաչեն ամեն եկեղեցիները՝ (*) թէ ես եմ, որ յայտնի եմ անում երի

(*) [illegible]

և զիրտս. և տաց ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց: Յայտ. Բ. 23:

Բանն մարմին եղև՝ և բնակեցաւ ՚ի մեզ. և տեսաք զփառս նր. զփառս իբրև զմիածնի առ՚ի հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ: Զաստուած ոչ ոք ետես երբէք. բայց միածինն որդի՝ որ է ՚ի ծոց հօր, նա պատմեաց: Յօհ. Ա. 14. և 18:

Ոչ ոք կարէ ասել Տէր զՅս, եթէ ոչ Հոգւովն սրբով: Ա. Կոր. ԺԲ. 3:

### Գ. Յաղագս սբ հոգւոյն Աստուծոյ:

Ո՞չ գիտէք՝ եթէ տաճար էք Աստուծոյ՝ և հոգի Այ բնակեալ է ՚ի ձեզ: Ա. Կոր. Գ. 16:

Ասէ Պետրոս. անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն

երիկամունքները (*) և սրտները. տալիս եմ ձեր ամէն մէկին իւրանց գործքերի չափովն: Յայտ. Բ. 23:

Խօսքն մարմին դառաւ՝ և մեզանում բնակվեց. և նորա փառքը տեսանք. մին փառքը ինչպէս հօրիցն ծնված միածին որդուն, շնորքով և ճշմարտութիւնով լցված: Աստուծուն ոչով իսկի մին ժամանակ չի՛ տեսել, բայց (Յիսուս) միածին որդին՝ որ հօր ծոցումն է, նա պատմեց: Յօհ. Ա. 14. և 18:

Ոչով չի՛ կարող Յսին Տէր ասել, բայց մենակ սբ հոգւովն: Ա. Կոր. ԺԲ. 3:

### Գ: Սուրբ հոգւոյն Աստուծոյ համար:

Չէ՞ք գիտում՝ որ դուք Այ տաճար էք. և Այ հոգին ձեզանում բնակված է: Ա. Կոր. Գ. 16:

Պետրոսն ասեց. անանիա, ինչու՞ սատանայն քո սիրտը լցրուց՝ որ սբ հոգւոյն ստեցիր

(*) դուրշիկները

ւոյն Սբյ: Ո՛չ ստեցեր մարդկան, այլ Այ: Գործ. Ե. 3. 4:

ստեցիր: Մարդկանց չե ստեցիր, բայց Այ: Գործք. Ե. 3. 4:

Յորժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութեան որ ՚ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ: Յօհ. ԺԵ. 26:

Ինչ ժամանակ որ կըգայ մխիթարողն՝ որ ես պիտի ուղարկեմ ձեզ Հօրիցն՝ ճշմարտուեն Հոգին որ Հօրիցն է դուրս գալիս, նա կըվըկայէ ինձ համր: Յօհ. ԺԵ. 26:

Ի կատարել աւուրցն պենտեկոստէից. էին ամենեքեան միաբան ՚ի միասին: Եւ եղև յանկարծակի հընչիւն յերկնից եկեալ իբրև սաստիկ հողմոյ. և ելից զամենայն զտունն յորում նստէին: Եւ երևեցան նոցա բաժանեալք լեզուք իբրև ՚ի հրոյ. և նստաւ իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա: Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով. և սկսան խօսիլ այլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա: Գործ. Բ. 1—4:

Պենտեկոստէից օրերի կատարելու ժամանակին. ամենքն իրար հետ մին սրտով նստած էին: Եւ յանկարծ քամու ձայն եկաւ երկնքիցն, ինչպէս մեծ քամու (յոյժ). և ամեն տուն լցրուց նորանում որ նստումէին: Եւ նորանց լեզուներ երևեցին բաժանված՝ ինչպէս կրակից. և նստեց նորանց ամեն մէկի վրը: Եւ նորանք ամենն լցվեցան Հոգւով սրբով. և սկսեցին ուրիշ լեզուներով խօսիլ՝ ինչպէս որ Հոգին խօսել էր տալիս նորանց: Գործք. Բ. 1—4:

Նա (Մխիթարիչն) եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ՝

վասն

Նա (Մխիթարիչն) կըգայ և կը յանդիմանէ աշխարհքս՝

մեղքի

Վասն մեղաց և վասն ար-դարութեան՝ և վասն դատաս-տանի։ Վասն մեղաց՝ զի ո՛չ հաւատան յիս։։ Վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ. և ո՛չ ևս տե-սանէք զիս։ Վասն դա-տաստանի՝ զի իշխան աշ-խարհիս այսորիկ դատա-պարտեալ է։ Յորժամ ե-կեսցէ նա Հոգին ճշմար-տութեան՝ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութ՟ք։ Յօհ. ժզ. 8—11. 13։

Սէրն Ա՟յ սփռեալ է ՛ի սիրտս մեր, ՛ի ձեռն Հոգ-ւոյն Ս՟րբ՝ որ տուաւ մեզ։ Հռոմ. Ե. 5։

Շնչաւոր մարդ ո՛չ ընդու-նի զհոգւոյն Ա՟յ՝ զի յիմա-րութի՟ է նմա. և ո՛չ կարէ գի-տել՝ եթէ հոգեպէս քննի-ցի։ Ա՟. Կորն. Բ. 14։

Մի՛ տրտմեցուցանէք զՀո-գին Ս՟բ Ա՟յ, որով կնքե-

ցայք

մեղքի համար՝ և արդա-րութեան համար, և դատաս-տանի համար։ Մեղքի համար՝ որ ինձ չե՛ն հաւա-տում։ Արդարութեան հա-մար՝ որ ես Հօր մօտն եմ գնում. և ինձ էլ չէ՛ք տեսնելու։ Դատաստանի համար՝ որ էս աշխարհքիս իշխանն դատապարտուել է։ Ինչ ժամանակ որ նա՝ ճըշ-մարտութեան Հոգին կըգայ՝ ձեզ ամեն ճշմարտութիւնով ճա-նապարհը ցոյց կըտայ։ Յօհ. ժզ. 8—11 և 13։

Ա՟յ սէրն մեր սրտի մէջ փռուել է, Ս՟բ Հոգւոյ ձեռ-նովն՝ որ մեզ տուաւ։ Հռոմ. Ե. 5։

Մարմնական մարդն չի՛ ընդունում Ա՟յ Հոգւոյ բա-ները՝ պատճառը որ յիմա-րութի՟ է նորան և չի կարող գիտել՝ որ էն հոգևորապ՟ պէ՛տք է քննվի։ Ա՟. Կորն. Բ. 14։

Ա՟յ Ս՟բ Հոգին չի տրտմեցը-նէք, որ նորանով կնքվե-

ցէք

ցոյք յաւուրն փրկութեան։ Եսայեայ. Ղ. 30։

Նախադասութիւն։

Ոչ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր. և ոչ ճանապարհք իմ իբրև ըզճանապարհս ձեր ասէ Տէր։ Այլ որպէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք իմ ՚ի ճանապարհաց ձերոց և խորհուրդք իմ ՚ի խորհրդոց ձերոց։ Եսայ. ԾԵ. 8. 9։

Յիշեցէ՛ք զառաջինն գործսըն յաւիտենից, զի ես եմ, և չի՛ք այլ ոք բաց յինէն։ Որ պատմեցի յառաջագոյն զվերջինսն՝ մինչչև եղեալ իցեն. և միանգամայն կատարեսցին. և ասացի թէ ամ խորհուրդք իմ հաստատեսցին. և ամենայն զոր կամիմ արարից։ Եսայ. ԽԶ. 9. 10։

Ընտրեաց

ցէք (*) փրկութեան օրին համար։ Եսեա. Ղ. 30։

Առաջ առնելը։

Իմ խորհուրդներս ձեր խորհուրդներին նման չե՛ն. և իմ ճանապարհներս ձեր ճանապարհներին նման չեն՝ ասում է Տէրն։ Բայց ինչպէս որ երկինքն երկրիցս հեռու է, էնպէս էլ իմ ճանապարհներն ձեր ճանապարհներիցն. և իմ խորհուրդներն ձեր խորհուրդներիցն հեռու են։ Եսայ. ԾԵ. 8. 9.

Յիշեցէ՛ք յաւիտենից առաջի գործքերն, ինչու որ ես եմ, և ուրիշ մէկն չկայ ինձանից զատ։ Որ վերջի բաները դեռ չի եղած ես առաջ պատմեցի, և ամենն պիտի կատարվին. և ասացի թէ իմ ամեն խորհուրդներս պիտի կատարվին. և ամեն բան որ կամենամ, պիտի անեմ։ Եսայ. ԽԶ. 9. 10։

Ը.

(*) Ծօյներէկցէ

Ընտրեաց զմեզ Ա՛ծ ՚ի ըսկզբանէ ՚ի փրկութի՛ սրբութեամբ հոգւոյն՝ և հաւատովքն ճշմարտութեան, Բ. Թես. Բ. 12:

Ո՛չ եդ զմեզ Ա՛ծ ՚ի բարկութիւն, այլ ՚ի փրկութի՛ կենդանութեան ՚ի ձեռն Տեառն մերոյ Յի՛ Քի՛. որ մեռաւ վասն մեր: Ա. Թես. Ե. 9. 10:

Օրհնեալ է Ա՛ծ, և հայր Տեառն մերոյ Յի՛ Քի՛. որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ յերկնաւորս ՚ի Ք՛ս: Ո՛պ ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով: Եփես. Ա. 3. 4:

Ա՛ծ առաջուց մեզ ընտրեց փրկելոյ համար՝ հոգւոյ սրբութ՛ովն՝ և ճշմարտութե՛ հաւատովն: Բ. Թես. Բ. 12:

Ա՛ծ մեզ չի դրաւ բարկուե՛ համար, բայց կեանքի փրկուե՛ համար մեր Տ՛ Յի՛ Քրիստոսի ձեռքովն. որ մեռաւ մեզ համար: Ա. Թես. Ե. 9. 10:

Օրհնված է Ա՛ծ, և մեր Տ՛ Յի՛ Քի՛ հայրն. որ օրհնեց մեզ ամեն հոգևոր օրհնութ՛ով, երկնաւոր բաների մէջ Ք՛ով: Ինչպէս ընտրեց մեզ նորանով աշխարհքիս լինելէն առաջ, որ նորա առաջին լինինք սուրբ և անպակաս սիրով: Եփես. Ա. 3. 4:

## ԳԼՈՒԽ. Գ.

### Յաղագս արարչութեան Ա՛յ:

՚Ի սկզբանէ արար Ա՛ծ զերկին և զերկիր. Ծն՛ ե-

տես

### Ա՛յ ստեղծագործութեան համար:

Սկիզբումն արաւ Ա՛ծ երկինքը և երկիրս. Ծն՛ տեսաւ

Ա՛ծ

տես Ա՟Ծ զամենայն զոր ա-
րար, և ահա բարի են
յոյժ։ Ծննդ. ա. 1. 31։

Դու ես նոյն ինքն Տէր
Աստուած միայն, դու ա-
րարեր զերկինս՝ և զեր-
կինս երկնից՝ և զամենայն
կարգս նոցա. և զերկիր և
զամենայն կարգս նորա. և
զամենայն ինչ՝ որ է ՚ի
նմա. զծով և զամենայն որ
է ՚ի նմա. և դու կենդա-
նացուցեր զամենեսեան. և
քեզ երկրպագեն զօրք երկ-
նից՝ և զքեզ փառաւորեն
երկինք երկնից։ Բ. Եզր.
Թ. 6։

Զվեց օր արար Տէր Ա՟Ծ
զերկին և զերկիր. և զծով՝
և զամենայն որ ՚ի ն՟ս. և
հանգեաւ յաւուրն եօթ-
ներորդի։ Ելից. Ի. 11։

Հաւատովք իմանամք հաս-
տատեալ զյաւիտեանսն բա-
նիւ Ա՟Յ. յաներևութից
զեր-

ա՟ծ ամեն բան որ արաւ,
և ահա շատ բարի են։
Ծննդ. ա. 1. 31.

Դու ես հենց էն մ՟ր ա՟ծն
մենակ, դու ստեղծեցիր եր-
կինքը՝ և երկինքի երկին-
քը՝ և նորանց ամեն կար-
գերը. և երկիրս՝ և նորա
ամեն կարգերը. և ամեն
բան՝ որ նորանումն է. ծովն
էլ, և ամեն բան որ նո-
րանումն է և դու կենդա-
նացրիր ամենը. և երկինքի
զօրքերն քեզ երկիրպագում
են տալիս՝ և քեզ փառք են
տալիս երկինքի երկինքն.
Բ. Եզր. Թ. 6.

Վեց օրումն արաւ մ՟ր ա՟ծն
երկինքը և երկիրս. և ծո-
վը՝ և ամեն բան որ նո-
րանցումն է, և եօթներոր-
դի (1) օրումն հանգստա-
ցաւ։ Ելից. Ի. 11.

Հաւատով իմանումենք, որ
յաւիտենականներն (2).
ա՟յ խօսքովն հաստատված
են

(1) Եօթնէկի (2) Առաքեալք

զերևելիս եղեալ։ Եբր. ժա. 3։

են (և) չի երևողներից երևողներս եղած. Եբր. ժա. 3.

---

## Արարչութիւն Մարդոյ։

Ասաց ած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ՛ ձկանց ծովու. և թռչնոց երկնից. և անասնոց. և ամենայն երկրի. և ամենայն սողնոց՝ որք սողին ՚ի վերայ երկրի։ Եւ արար Ած զմարդն ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի Այ արար զնա։ Արու և էգ արար զնոսա։ Ծննդ. ա. 26. 27։

Ած հաստատեաց զմարդն յանեղծութիւն և ՚ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա։ Իմաստ. բ. 23։

Զգեցարո՛ւք զնոր (մարդն) նորոգեալ ՚ի գիտութիւն ըստ պատկերի արարչին իւրոյ։ Կողոս. գ. 10։

Աստուած

## Մարդոյն ստեղծվելը.

Ած ասեց. մարդ ստեղծենք մեր պատկերին և մեր նմանուե պէս, և իշխանութի ունենայ ծովի ձկներին, և երկինքի թռչուններին և անասուններին՝ և բոլոր երկրիս վերայ. և ամեն սողուններին վր, որ սողումեն երկրիս վր։ Եւ ած մարդը իւր պատկերին նման արաւ. Այ պատկերին նման արաւ նորան։ Արու ու էգ արաւ նորանց։ Ծննդ. ա. 26. 27։

Ած մարդը հաստատեց անջնջելի մնալոյ համար. և իւրան բարերարուե պատկերի նման արաւ նորան։ Իմաստ. բ. 23։

Հագէ՛ք նոր մարդը որ գիտուե հմր նորոգված է իւրան ստեղծողին պատկերին նման։ Կողոս. գ. 10։

Աստուած

Պատուէր առաքելականութեան :

Երկնչիմ, ո՞պ օձն խաբեաց զեւայ խորամանկու՟բն իւրով ապականեսցին միտք ձեր 'ի միամտու՟էն՝ որ 'ի Քրիստոս : Բ . Կորն . ժա . 3 :

Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝ և 'ի մեղաց անտի մահ . և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքեան մեղան : Հռով . Ե . 12 :

Ծնեալն 'ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ՝ հոգի է : Յօհ . Գ . 6 :

Միտք մարդոյ հաստատեալ են 'ի խնամս չարի 'ի մանկութենէ իւրմէ : Ծննդ . Ը . 21 :

Ի ներքուստ 'ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանու՟իք, ագահութիւնք, չարու՟իք,

նենգու-

Պատուէրը առաքելէն՝ փոխը գալն .

Վախումեմ, թէ ինչպես օձն խաբեց Եւային իւրան խորամանկու՟ովն (*) ձեր միտքն էլ ապականվլի միամտու՟իցն՝ որ Քրիստոսով : Բ . Կորն . ժա . 3 :

Մին մարդից մեղքն աշխարհքս մտան՝ և էն մեղքիցն էլ մահն . և էնպէս մահն փռվեցաւ ամէն մարդկանց մէջն՝ որ նորանով ամէն մարդիկ մեղք գործեցին : Հռով . Ե . 12 :

Մարմնից ծնվածն՝ մարմին է, հոգուցն ծնվածն՝ հոգի է : Յօհ . Գ . 6 :

Մարդոյս միտքն հաստատւած են չարի կամքումն իւրան երեխայ ժամանակիցն : Ծննդ . Ը . 21 :

Ներքի կողմից մարդոյս սրտից՝ չար խորհուրդներ են դուրս գալիս . շնու՟իններ, պոռնկու՟իններ, գողու՟իններ, սպանու՟իններ, ագահու՟իններ, չարու՟իններ,

նենգու-

(*) Ճարպիկութիւնովն

նենգութիւնք, գինջութիւն, չարախօսութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ Այս ամենայն չարիք 'ի ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ։ Մարկ. Է. 21-23։

նենգուններ, պղծուններ, չար աչքով ուրիշի վերայ նայօղուն, յիշոց տալուն, ամբարտաւանուն, անզգամուն։ Այս ամեն չարերս մարդուս սրտից են դուրս գալիս, և պղծում են մարդը։ Մարկ. Է. 21-23։

Խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած՝ զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի. նա և կարէ իսկ ոչ։ Եւ որք մարմնովն են, Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն։ Հռոմ. Ը. 7. 8։

Մարմնի մտածողուն թշնամուն է Այ դէմ. պատճառը որ Այ օրէնքին չի հնազանդում. միւս էլ որ խելքի չէ՛ կարող։ պատճառը որ նորանք՝ որ մարմնով են՝ չեն կարող Այ ընդունելի լինել։ Հռոմ. Ը. 7. 8։

Եթէ ասիցեմք, եթէ ոչինչ մեղաք՝ սուտ առնեմք զնա. բան նորա ոչ է 'ի մեզ բնակեալ։ Ա. Յովհ. Ա. 70։

Թէ որ ասենք, թէ մեղք չի գործեցինք՝ ստումենք նորան. և նորա խօսքն մեզանում չէ՛ բնակված։ Ա. Յովհ. Ա. 10։

Թոշակն մեղաց մահ է։ Հռոմ. Զ. 23։

Մեղքի պաշարն մահն է։ Հռոմ. Զ. 23։

Մեք ամենեքեան շրջեաք երբեմն 'ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ, և առնեաք զկամս մարմնոյ՝ և զմտաց. և էաք արդարև որդիք

բարկու-

Մենք ամենքս մին ժամանակ շուռ էինք գալի մեր մարմնի ցանկուն մէջ, և մեր մարմնի և մտքի կամքին էինք հետևում. և ու-

ղորդ

քարկութեան իբրև այլքն։ Այլ աստուած՝ որ մեծն է ողորմութ̃բ՝ վասն բազում սիրոյն իւրոյ՝ որով սիրեաց զմեզ. մինչդեռ մեռեալք էաք 'ի մեղս մեր, կենդանի արար զմեզ 'ի Ք̃ս։ Եփես. Բ. 3—5։

ղորդ որ բարկութե̃ որդիք էինք ուրիշներին նման. Բայց Ա̃ծն՝ որ ողորմութենով մեծ է՝ իւրան շատ սիրոյն համար՝ որ նորանով մեզ սիրեց. էն ժամանակ որ դեռ մենք մեռած էինք մեր մեղքի մէջը, կենդանացրուց մեզ Ք̃սով։ Եփես. Բ. 3—5

---

## Հրեշտակք։

Ո՞ արար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ։ Սաղմ. ՃԳ. 4։

Հազարք հազարաց պաշտէին զնա, և բիւրք բիւրուց կային առաջի նորա։ Դան. Է. 10։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա հզօրք զօրութ̃բ. որք առնէք զբան նորա 'ի լսել ձայնի պատգամաց նորա։ Սաղմ. ՃԲ. 20։

Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք որք

առաքին

## Հրեշտակներ։

Ո՞վ նա որ իւրան հրեշտակները հոգի արաւ, և իւրան ծառայու̃ն անողները այրող կրակ։ Սաղմ. ՃԳ. 4.

Հազար հազարները նորան պաշտումէին. և բիւր բիւրները նորա առաջին կանգնած էին։ Դան. Է. 10։

Օրհնեցէ՛ք Տ̃էրը նորա ամեն հրեշտակներ. որ ուժեղ էք զօրութիւնով, դուք որ կատարումէք նորա խօսքը ինչ ժամանակ որ լսումէք նորա հրամանքի ձայնը։ Սաղմ. ՃԲ. 20։

Չէ՞ որ ամենքն հոգի են հարկաւոր, որ ուղարկվու-

մեն

առաքին 'ի սպասաւորութի վասն այնոցիկ, որ ժառան- գելոց են զփրկութիւն. Եբր. Ա. 14.

Բանակ հրեշտակաց Տեա- ռըն շուրջ է զերկիւղածովք իւրովք. և պահէ զնոսա. Սաղմ. ԼԳ. 8.

Զգոյշ լերուք՝ մի՛ ար- համարհիցէք զմի 'ի փոքր- կանցս յայսցանէ. ասեմ ձեզ. զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յեր- կինս է. Մատթ. ԺԸ. 10.

Ուրախութիւն եղիցի ա- ռաջի հրեշտակաց Այ 'ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ. Ղուկ. ԺԵ. 10.

մեն նորանց ծառայելոյ համար որ փրկութիւն պի- տի ժառանգեն. Եբր. Ա. 14.

Տէրի հրեշտակների բա- նակն (*) իւրանից երկիւ- ղածների չորս կողմովն է. և պահում է նորանց. Սաղմ. ԼԳ. 8.

Զգուշ կացէք, որ աչ- քից չի՛ քցէք էս փոքրնե- րիցն մինը, ասում եմ ձեզ. որ նորանց հրեշտակներն երկնքումն միշտ տեսնում են իմ Հօր երեսը՝ որ երկն- քումն է. Մատթ. ԺԸ. 10.

Ուրախութին կըլինի Այ հրեշտակների առաջին, մին մեղաւորի համար՝ որ ապաշխարէ. Ղուկ. ԺԵ. 10.

---

## Սատանայ և դևք.

Զհրեշտակս՝ որք ոչ պահեցեն զիւրեանց իշխա- նութիւնն, այլ թողին

զիւրեանց

## Սատանէն և դևերն.

Էն հրեշտակները՝ որ իւրանց իշխանութիւնը չի պա- հեցին, բայց թողեցին

իւրանց

(*) զօրքն

զիւրեանց բնակութիւն, ի դատաստանս մեծի աւուրն մշտնջենաւոր կապանօք պահեաց ի խաւարի: Յուդ. ա. 6:

Դուք ի հօրէ սատանայէ էք, և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպան էր ի սկզբանէ, և ի ճշմարտութեան ոչ եկաց. զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է, և հայր նորա: Յոհ. Ը. 44:

Դու հաւատաս՝ զի մի է Աստուած. բարւոք առնես. և դևք հաւատան, և սարսին: Յակոբ. Բ. 19:

Արթուն լերուք՝ հսկեցէ՛ք, զի ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ. շրջի, և խնդրէ՝ թէ զո՛ կլանիցէ: Ա. Պետ. Ե. 8. 9:

իւրանց. բնակութիւնը, յաւիտենական կապանքով պահեց խաւարի միջումն են մեծ օրի դատաստանի. համար: Յուդ. ա. 6:

Դուք սատանայ հօրիցն էք, և ձեր հօր ցանկութիւնը կամենումէք կատարել. պատճառը որ նա սկզբիցն մարդասպանող էր, և ճշմարտութիւնումն չի կացաւ, ինչու որ ճշմարտութիւն չկայ նորանում. երբ որ խօսի սուտ՝ իւրանից է խօսում. պատճառը որ սուտ է, և նորա հայրն: Յոհ. Ը. 44:

Դու հաւատումես՝ որ Աստուած մին է. լաւ ես անում. դևերն էլ են հաւատում և դողում: Յակ. Բ. 19:

Արթուն կացէք, և աղօ՛թք արէք. որ ձեր թշնամի սատանան առիւծի պէս գոռումէ. շուռ է գալիս և խնդրումէ՝ թէ ում կուլ տայ: Ա. Պետ. Ե. 8. 9:

# ԳԼՈՒԽ Գ.

## Յաղագս խնամարկութեանն Աստուծոյ.

Աստուած՝ որ արար զաշխարհս և զամենայն որ ՚ի նմա, նա երկնից և երկրի է տէր. ոչ ՚ի ձեռագործ տաճարս բնակէ և ոչ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք. նա տայ ամենայնի կեանս՝ և զշունչ՝ և զամենայն ինչ. Արար ՚ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ՚ի վերայ ամ̃ երեսաց երկրի. Հաստատեաց կարգեալ ժամանակս՝ և սահմանադրութիւն բնակութեան նոցա՝ խնդրել զած̃. զի թերևս զննիցեն զնա՝ և գտանիցեն. նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ՚ի մէնջ, Զի նովաւ կեամք՝ և շար-

ժիմք

## Աստուծոյ խնամք տանելոյն համար.

Այն՝ որ էս աշխարհքս ստեղծեց, և ամեն բան որ նորանում կայ, նա երկնքի և երկրի տէրն է, ձեռքով շինած տաճարի մէջ չի՛ բնակվիլ. և մարդի ձեռքով էլ չի՛ պաշտվիլ մին բանի կարօտի նման նա է ամենքին կեանք և շունչ և ամեն բան տալիս ։ Մէն արիւնից արաւ ամեն մարդկանց ազգերը, որ բնակվումեն բոլոր երկրիս երեսին վերայ. Հաստատեց կարգված ժամանակներ՝ և նորանց բնակութ սահման դրաւ՝ որ ած̃ը խընդրեն. որ լինի թէ քըննեն նորան և գտնեն. մին էլ որ մեր իսկի մէկից հեռու չէ, որ նորանով ենք

ապրում

ժիմք և եմք ։ Գործ․ ԺԷ․ 24—28 ։

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան․ և դու տաս կերակուր նց ՚ի ժամու․ բանաս զձեռն քո․ լցուցանես զամենեսեան քաղցրութբ կամօք քովք ։ Սաղմ․ ՃԽԴ․ 15 ։ 16 ։

( Արարած ) զարեգակն իւր ծագէ ՚ի վերայ չարաց և բարեաց․ և ածէ անձրև ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց ։ Մատթ․ Ե․ 45 ։

Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին՝ և մի ՚ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ․ Այլ ձեր՝ և ամ խոկ հեր գլխոյ թուեալ է ։ Արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս ։ Մատթ․ Ժ․ 29—31 ։

Եթէ ոչ Տէր շինէ ըզտունն՝ ՚ի նանիր վաստակեն շինօղք նորա ։ Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդ-

ու

ապրում, և շարժվում, և կանք ։ Գործ․ ԺԷ․ 24—28 ։

Ամենին աչքերն դէպ ՚ի քեզ են նայում, և դու ես տալիս նորանց կերակուրը իւրան ժամանակին․ բաց ես անում քո ձեռդ․ լցնում ես ամենքը քո քաղցր կամքովդ ։ Սաղմ․ ՃԽԴ․ 15․ 16 ։

(Արարած) իւրան արեգակըն ծագում է չարերի և բարիների վերայ, և անձրև է ածում արդարների և մեղաւորների վերայ ։ Մատթ․ Ե․ 45 ։

Չէ՞ որ երկու ծըտերը մին դանկի են ծախվում՝ և նորանցից մինը երկիր չի՛ ընկնիլ առանց ձեր Հօրն ։ Մին էլ որ ձեր գլխի ամեն մազըն համարված է ։ Ուրեմն չի՛ վախէք՝ որ դուք լաւ էք քանց շատ ծըտերըն ։ Մատթ․ Ժ․ 29—31 ։

Թէ որ Տէրն չի շինէ տունն՝ զուր տեղն են աշխատում նորա շինողներն ։ Թէ որ Տէրն չի պահէ քաղաքը՝ զուր

տեղն

ենայն ազգէն պահապանք նորա : Սաղմ. ճի՛զ. 7.

Որ (Աստուած) զիւր որդին ոչ խնայեաց, այլ վա՛ն մեր ամենեցուն մատնեաց զնա. զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամ՛ շնորհեսցէ մեզ : Հռովմ. ը. 32 :

տեղըն են արթուն կենում նորա պահողները : Սաղմ. ճի՛զ. 1.

Որ (Աստուած) իւրան որդւոյն չի խնայեց՝ բայց մեր ամենի համար մատնեց նորան. ինչպէս չի՛ շնորհելու մեզ ամեն բանն նորան հետ : Հռոմ. ը. 32.

---

# ԳԼՈՒԽ. Ե.

## Յաղագս Համբարձման որդւոյն Ա՛յ.

Որպէս սիրեաց Ա՛ծ զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի ա՛մ որ հաւատայ 'ի նա մի՛ կորիցէ՝ այլ ընկալցի զկեանս յաւիտենականս : Յով. գ. 16 :

Մեծ է խորհուրդն Ա՛ծպաշտութեան . որ երևեցաւ մարմնով : Ա. Տիմ. գ. 16 :

Որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ

## Ա՛յ որդւոյ համբռնին տանելոյ համար :

Ինչպէս սիրեց Ա՛ծ աշխարհ.քս՝ մինչև իւրան միածին որդին տուաւ. որ ամեն մարդ որ հաւատումէ նորան՝ չի՛ կորչի՝ բայց յաւիտենական կեանքը ընդունի : Յով. գ. 16.

Աստուածպաշտութեան խորհուրդն մեծ է. (էն) որ նա մարմնով երևեցաւ : Ա. Տիմ. գ. 76 :

Որովհետև (*) երեխայ.քն հաղորդվումեն արիւնին և մարմնոյն.

(*) Եբրայեց :

նոյ, և ինքն իսկ մերձա-
ւորութեամբ կըցորդ եղև
նոցունց. զի մահուն իւրով
խափանեսցէ զայն, որ զիշ-
խանութիւն մահուն ու-
նէր՝ այսինքն է, զսատանայ.
և ազատեսցէ զայնոսիկ,
որք մահուան երկիւղիւ հա-
նապազ կենաց վտարանդեալք
էին ծառայութեան. Վասնզի
ոչ երբէք զհրեշտակաց
բուռն հարկանէ, այլ զզ-
աւակէն աբրահամու բու-
ռըն հարկանէ. Ուստի
պարտ իսկ էր նմա ամե-
նայնիւ եղբարց նմանիլ, զի
ողորմած լինիցի, և հաւա-
տարիմ քահանայապետ յԱ՟ծ-
ակոյս կողմանէ անտի, առ
՚ի քաւելոյ զմեղս ժողո-
վրդեանն. Զի որով ինքն
չարչարեցաւ զփորձ ա-
ռեալ, կարող է և փոր-
ձանաւորաց օգնական լի-
նիլ. Եբր. Բ. 14—18.
Հաւատարիմ է բանս՝ և
ամենայնի ընդունելութեան
արժանի. զի Յ՟ս Ք՟ս ե-
կն

մարմնոյն, ինքն էլ մօտիկ
լինելովն ընկեր էլաւ նո-
րանց. պատճառը որ իւր
մահովըն խափանէ նորան,
որ մահի իշխանութիւնը ու-
նէր, որ է սատանան. և
նորանց ազատեցնի, որ մա-
հից վախենալով միշտ ծա-
ռայութեան մէջ բռնված ապ-
րումէին. Պատճառը որ իս-
կի հրեշտակներից՝ չի բռնեց,
բայց միայն թէ աբրահամի
զաւակիցն բռնեց. Ասոր
համար պէ՛տք էր նորան
ամեն բանումն եղբայրներին
նմանվիլ, որ ողորմած լի-
նի. և հաւատարիմ քահա-
նայապետ Ա՟յ առաջին ժողո-
վուրդի մեղքերը քաւելոյ
համար. Պատճառը որ
էնտուրով որ ինքն չարչար-
վեց և փորձը առաւ, կա-
րողէ էլ փորձանքի մէջ
ընկնողներին օգնական լի-
նիլ. Եբր. Բ. 14—18.
Ճշմարիտ է էս խօսքը՝ և
ամենևին ընդունելոյ ար-
ժան է. որ Յ՟ս Քրիստոս
աշխարհս

կըն յաշխարհ փրկել ըզմեղաւորս ։ Ա. Տիմ. Ա. 15.

---

Աստուածայինք և օրինակք ։

Ասէ Տէր Ա՛Ծ ցօձն՝ ..... եղիցի թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ. և ՚ի մէջ զաւակի քո և ՚ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քում գլխոյ. և դու սպասեսցես նորա գարշապարի ։ Ծննդ. Գ. 14. 15.

Որպէս Մօսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ. զի ամենայն, որ հաւատայ ՚ի նա՝ մի կորիցէ. այլ ընկալցի զկեանս յաւիտենականս ։ Յօհ. Գ. 14. 15.

Խօսեաց ընդ ամ ժողովրդեան որդւոց իսրայէլի՝ և ասասցես, ՚ի տասներորդում

ամսեանս

աշխարհս եկաւ, որ փրկէ մեղաւորներըը. Ա. Տիմ. Ա. 15.

---

Աստուածայիններ և օրինակներ.

Ասաց Տէր Ա՛Ծ օձին՝ ..... Թշնամութիւն կը դնեմ քո մէջ, և էդ կնկան մէջ. և քո զաւակի, և նորա զաւակի մէջ. նա կըսպասէ (*) քո գլխին, դու էլ կըսպասես նորա կրընկին ։ Ծննդ. Գ. 14. 15.

Ինչպէս որ Մօսէս բարձրացրուց օձն անապատումն, էնպէս էլ բարձրանալ պէտք է որդւոյն մարդոյ, պատճառը որ ամեն (մարդ) որ հաւատայ նորան, չի՛ կորչի, բայց յաւիտենական կեանքը ընդունի ։ Յօհ. Գ. 14. 15.

Խօսի՛ր իսրայէլի որդւոց ամեն ժողովուրդի հետ և ասա. էս ամսիս տաս-

նումն

---

(*) զարկ ճզմէ

ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգացն. ոչխար ըստ երդ։ Ոչխար կատարեալ՝ արու՝ տարևոր՝ անարատ լիցի ձեզ։ Եւ այսպէս ուտիցէք, գօտիք ձեր ընդ մէջ. և կօշիկք ձեր յոտս. և ցուպք ձեր ՚ի ձեռին. փութանակի ուտիցէք. զի զատիկ Տեառն է. Ելից. ԺԲ. 3. 5. 11.

Սրբեցէ՛ք ՚ի բաց զհին խմորն՝ զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զենաւ Քս. Ա. Կորն. Ե. 7։

Մի՛ պակասեսցէ իշխան յուդայ. և մի՛ պետ յերանաց նորա. մինչև եկեսցէ նա որոյ իւրն է հանդերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց։ Ծննդ. ԽԹ. 10։

Ահա

տունն իրանց ամեն ազգերի տների թուովըն մին ոչխար առնեն, մին ոչխար տընագլխի։ Մին կատարեալ՝ որձ՝ մին տարեկան՝ անպակաս ոչխար պիտի լինի ձեզ, Եւ էսպէս պիտի ուտէք, ձեր գօտիներըն ձեր միջքումն և ձեր մաշիկները ոտներումդ. և ձեր փայտերը ձեռներիդ. վռազով պիտի ուտէք. պատճառը որ Տէրի զատիկն է։ Ելից. ԺԲ. 3. 5. 11։

Հին խմորն սրբեցէ՛ք՝ հեռացրէ՛ք՝ որ նոր հունցած դառնաք, ինչպէս որ անխմոր էք, նորա համար որ մեր զատիկ (ւէնէըյ գառըն) Քս (մեղ համար) մորթվեց։ Ա. Կորն. Ե. 7.

Յուդայի իշխանն և նորա միջքիցն էլած գլխաւորն չի՛ պակասվիլ, մինչև կըգայ նա որ նորան են նոր գալիքները. և նա է հեթանոսների յոյսն։ Ծննդ. ԽԹ. 10։

Ահն

Ահա կոյս յղասցի՝ և ծնցի որդի. և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ: Եսայ. Է. 14.

Ահա կոյսն կը յղանայ. և կը ծնէ որդի և նորա անունը Էմմանուէլ (*) կը կանչեն: Եսայ. Է. 14.

Մանուկ ծնաւ մեզ. որդի տուաւ մեզ. որոյ իշխանութիւն իւր եղև ՚ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ. սքանչելի՝ խորհրդակից՝ Ա՟Ծ՝ հզօր՝ իշխան՝ հայր հանդերձելոյ աշխարհին: Եսայ. Թ. 6.

Մանուկ ծնվեց մեզ. որդի տուվաւ մեզ. նորա իշխանութէնն իւրան ուսերին վերայ էլաւ. և նորա անունն մեծ խորհուրդի հրեշտակ կոչվեց, զարմանալի՝ խորհրդի ընկեր՝ Ա՟Ծ՝ ուժով՝ իշխան՝ հայր նոր գալու աշխարհքին: Եսայ. Թ. 6.

Դու Բեդղեհեմ տուն եփրաթայ սակաւաւոր իցես լինել ՚ի հազարաւորս յուդայ. ՚ի քէն ելցէ ինձ լինել իշխան իսրայէլի. և ելք նորա ՚ի սկզբանէ աւուրց աշխարհի: Միք. Ե. 2.

Դու Բեդղեհեմ՝ եփրաթայ տուն, քիչ որ լինիս յուդայի հազարներումն քեզանից պիտի դուրս գայ ինձ իշխան իսրայելացւոց, և նորա դուրս գալն աշխարհքիս օրերի սկիզբիցն (է): Միք. Ե. 2.

Հոգի Տ՟Ն ՚ի վերայ իմ, վասն որոյ և եօծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել բեկեալս սրտիւք. քարոզել գերեաց

Տէրի հոգին ինձ վերայ (է), նորա համար էլ ինձ օծեց. աղքատներին աւետիս տալ ուղարկեց ինձ. և բժշկել սիրտը կոտրվածները. քարոզել

(*) Աստուած մեզ հետ

գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել. կոչել ամ Տեառն ընդունելի. և օր հատուցման Ա՟յ մերոյ: Եսայ. կա. 1. 2:

քարոզել գերիներին (1) թողվիլը, և կուրացածներին տեսնելը. կանչել Տէրի ընդունելի տարին՝ և մեր Ա՟յ հատուցանելոյ օր: Եսայ. կա. 1. 2:

Որպէս հովի՛ւ մի հովուեսցէ զխաշինս իւր. և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս. և ՚ի ծոց իւր կրեսցէ զնոսա և մխիթար լիցի յղեաց: Եսայ. Խ. 11:

Ինչպէս մին հովի՛ւ կարածացնէ իւրան ոչխարները. և իւրան ձեռովն կըհաւաքէ գառները. և իւրան ծոցումն կըդնէ նորանց. և յղացածներին մխիթարող կըլինի: Եսայ. Խ. 11:

Ուրախ լեր յոյժ դուստր սիօնի. քարոզեա դուստր Եէմի. ահա թագաւոր քո գայ առ քեզ. արդար, և փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ ՚ի վ՟ր իշ՟յ՝ և յաւանակի նորոյ: Զաք. Թ. 9:

Շատ ուրախացի՛ր, սիօնի դուստր. քարոզի՛ր Երուսաղէմի դուստր. ահա քո թագաւորն գալիս է քեզ մօտ, արդար, և փրկիչ, ու էլ հեզ (2) և վեր ելած էշի, և նոր քուռակի վերայ: Զաք. Թ. 9:

Նա զմեղս մեր բառնայ, և վ՟ս մեր չարչարի. և մեք համարեցաք զնա ՚ի ցաւս՝ և ՚ի հարուածս՝ և ՚ի չարչարանս իբրև յԱստուծոյ: Բայց նա վիրաւորեցաւ վա-

սըն

Նա մեր մեղքերը վե՛ր է առնում, և մեզ համար չարչարվումէ, և մենք նորան ցա՛ւի՝ տանջանքի՝ և չարչարանքի մէջումն համարեցինք ինչպէս Ա՟ծանից:

Բայց

(1) եսիրներին. (2) հանդարտ.

սըն մեղաց մերոց. և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա. և նորա վիրօքն բժշկեցաք: Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք՝ այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր: Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր. իբրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ. և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ. այնպէս ոչ բանայ զբերան իւր: Եսայ. ԾԳ. Ե—7:

Ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս. և ոչ տացես սրբոյ քում. տեսանել զապականութիւն: Ցուցցես ինձ զճանապարհս կենաց. լըցուսցես զիս ուրախութեամբ երեսաց քոց՝ 'ի քաղցրութեան վայելչութեան աջոյ քոյ մինչև իսպառ. Սաղմ. ԺԵ. 10:

Բայց նա խոցվեց մեր մեղքերին համար, և մեր անօրէնութիւններին համար պատժվեց. մեր խաղաղութեան խրատն նորանում է. և նորա խոցովն մենք ողջացանք: Ամենքս ոչխարների նման մոլորված էինք՝ (ամէն) մարդ իւր ճանապարհիցն մոլորվեց. և տէրն նորան մատնեց մեր մեղքերին համար: Եւ նա աւելի ցաւ քաշելումն բերանը չի' բաց անում. ինչպէս ոչխարն մորթվելոյ տեղն գընաց և ինչպէս գառն խուզողի առաջի ձայն չի' հանում. էնպէս չի' բաց անում իւր բերանը: Եսայ. ԾԳ. Ե—7:

Չես թողնիլ իմ անձնս դժոխքումն. և թոյլ չես տալ քո սուրբին որ տեսնի ապականութիւնը: Ցոյց կըտաս ինձ քո կեանքի ճանապարհները. կըլցնես ինձ քո երեսիդ ուրախութիւնով, քո աջոյդ քաղցր վայելչութիւնիցն մինչև վերջն: Սաղ. ԺԵ. 10:

Եւ Մեր

Ել 'ի բարձունս՝ և գե-
րեաց զգերութիւն. ետ ա-
ւար՝ բաշխեաց պարգևս և
ետ որդւոց մարդկան.
քանզի թերահաւատից ես
բնակեալ եղիցիս 'ի նմա։
Սաղմ. կէ. 19։

Վեր ելաւ բարձր (վերինը՝)
և գերի արաւ գերութիւն՝
թալանեց և պարգևնե-
րը բաշխեց և տուաւ մարդ-
կանց որդիքներին. պա-
տճառը որ թերահաւատներն
էլ պիտի բնակված լինեին
նորանում։ Սաղմ. կէ. 19։

Ասաց Տր ցՏէր իմ, նի՛ստ
ընդ աջմէ իմմէ. մինչև ե-
դից զթշնամիս քո պատո-
ւանդան ոտից քոց։ Սաղմ.
ճթ. 2։

Տէրն ասեց իմ Տէրին,
նստի՛ր իմ աջի կողմն. մին-
չև որ կդնեմ քո թշնա-
միներդ քո ոտներիդ դնե-
լու տեղը։ Սաղմ. ճթ. 2։

---

## Ծնունդ ՅԻ. ՔԻ.

Իբրև եկն լրումն ժա-
մանակին, առաքեաց Ած
զորդի իւր՝ որ եղև 'ի կնո-
ջէ, և եմուտ ընդ օրինօք.
զի զնոսա՝ որք ընդ օրինօքն
էցեն՝ գնեսցէ. զի մեք զոր-
դեգրութիւն ընկալցուք.
Գաղատ. դ. 4. 5։

Առաքեցաւ գաբրիէլ հրե-
շտակ յԱստուծոյ 'ի
քաղաք մի գալիլեացւոց.
որում

## ՅԻ. ՔԻ. Ծնունդն։

Երբ որ եկաւ ժամանակի
կատարվիլը, Ած իւրան որ-
դին ուղարկեց՝ որ կնկանից
ելաւ, և օրէնքի տակ մը-
տաւ. պատճառը որ նորանց
առնի՝ որ օրէնքի տակին են.
որ մենք որդեգրութիւնը
(*) ընդունենք։ Գաղատ.
դ. 4. 5։

Ուղարկվեց գաբրիէլ հրեշ-
տակն Ածանից գալիլեաց-
ւոց մին քաղաքն. որի ա-
նունն

(*) օղորմութիւնք։

որում անուն էր Նազարէթ առ կոյս խօսեցեալ առն ո-րում անուն էր Յովսէփ 'ի տանէ Դաւթի. և անուն կուսին Մարիամ: Եւ ա-սէ ցնա. Հոգին սուրբ ե-կեսցէ 'ի քեզ. և զօրու-թիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն, սուրբ է. և որդի Այ կոչեսցի: Ղուկ. ա. 26. 27. 35:

Հրեշտակ Տեառն 'ի տես-լեան երևեցաւ նմա՝ և ասէ. Յովսէ'փ որդի Դաւթի. մի' երկնչիր. առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ 'ի նմայն ծնեալ է, 'ի Հոգւոյն սրբոյ է: Ծնցի որդի. և կոչեսցես զանուն նր Յսն. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց: Մատ. ա. 20. 21:

Ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն մեծ. որ եղիցի ամենայն ժողովր-դեանն

նունն Նազարէթ էր՝ կուսի մօտ, որ նշանած էր Յովսէփ անուն մարդին, որ Դաւթի ազգիցն էր. և կուսի ա-նունն էր Մարիամ: Եւ ա-սեց նորան, Հոգին սուրբ պի-տի գայ քեզ վերայ. և Բարձրի (Այ) զօրութիւն շո-ւաք կըլլինի քեզ վերայ. նո-րա համար ալ էն. որ քե-զանից պիտի ծնվի, սուրբ է, և Այ որդի կըկոչվի: Ղուկ. ա. 26. 27 և 35:

Տէրի հրեշտակն երազումն երևեց նորան և ասեց. Դաւ-թի որդի Յովսէփ. չէ' վա-խես. քո կին Մարիամը առ-նել քեզ մօտ, պատճառը որ՝ էն որ նորանում ծըն-ված է, սուրբ հոգիցն է. Կըծնէ որդի. և նորա ա-նունն կըկոչես Յսն. պատճա-ռը որ նա պիտի փրկէ իւրան ժողովուրդը իւրանց մեղքե-րիցն: Մատ. ա. 20. 21:

Ահա աւետիս եմ տալիս ձեզ մեծ ուրախութիւնը. որ կըլլինի ամեն ժողովուրդի համար

դեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ. որ է օծեալ Տէր ՚ի քաղաքի Դաւթի: Ղուկ. Բ. 10. 11:

համար. պատճառը որ ծընվեց ձեզ համար փրկիչ. որ օծված Տէր է Դաւթի քաղաքումն: Ղուկ. Բ. 10. 11:

---

Յիսուս օծեալ քահանայապետ՝ թագաւոր և մարգարէ:

Յս՟ օծված քահանայապետ՝ թագաւոր և մարգարէ.

Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի: Եբր. Է. 77:

Այնպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ, սբ՟՝ անմեղ՝ անարատ՝ զատեալ ՚ի մեղաւորաց. և բարձրացեալ քան զերկինս՝ որում ոչ հանապազ հարկէ որպէս այլոց քահանայապետիցն. նախ՝ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել, և ապա՝ վասն ժողովրդեանն: Իսկ սա զայն միանգամ կատարեաց՝ զի զանձն իւր մատոյց պատարագ: Եբր. Է. 26. 27:

Եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Ած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատն: Ա. Յօհ. Բ. 1:

Խնդրեա՛

Դու ես քահանայ յաւիտեան՝ Մելքիսեդեկի կարգին նման: Եբր. Է. 17:

Այնպես քահանայապետ մեզ սազում էր, սբ՟՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներից բաժանված. և երկինքի վե՛ր բարձրացած. որ նորան միշտ պետք չէ՛ ինչպես ուրիշ քահանայապետներին առաջ իւրանց մեղքերի հ՟մր պատարագները անել, և յետոյ ժողովուրդին համար: Բայց նա (Քս՟) էն միանգամ կատարեց պատճառը որ իւրան անձնը պատարագ արաւ: Եբր. Է. 26. 27:

Թէ որ մինն մեղք 'գործի բարեխօս ունենք այ՟ մօտ յս՟ քս՟ը՝ արդարը՝ և անարատը: Ա. Յօհ. Բ. 1:

Խնդրէք

Խնդրեա՛ յինէն՝ և տաց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութի՛ւն, և իշխանութի՛ւն քեզ զամենայն ծագս երկրի։ Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ. որպէս զանօթ բրտի փշրեսցես ըզնոսա։ Սաղմ. Բ. 8. 9։

Խնդրի՛ր ինձանից՝ և քեզ կըտամ հեթանոսները որ ժառանգես. և քեզ երկրի ամեն ծայրի (1) իշխանութիւնը։ Նորանց երկաթի գաւազանով կըհովուես (2) ինչպէս բրուտի ամանը նորանց կըփշրես։ Սաղմ. Բ. 8. 9։

Մարգարէ յարուցից նոցա յեղբարց իւրեանց իբրև զքեզ. և տաց զպատգամս իմ ՚ի բերան նորա. և խօսեսցի ընդ նոսա որպէս և պատուիրեցից նմա։ Եւ մարդ՝ որ ո՛չ լուիցէ զոր խօսիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից զվրէժ ՚ի նմանէ։ Բ. Օրինաց. ԺԸ. 18. 19։

Մարգարէ պիտի վերկացնեմ նորանց համար՝ իւրեանց եղբայրներիցն՝ քեզ նման, և իմ խօսքերս կըտամ նորա բերանումն. և նորանց հետ կըխօսէ՝ ինչպէս որ ես հրաման կըտամ նորան։ Եւ էն մարդըն՝ որ չի լսէ՝ ինչ որ մարգարէն իմ անունովս կըխօսէ, ես նորանից վրէժ կըխնդրեմ (3) Բ. Օրինաց. ԺԸ. 18. 19։

---

## ՎԱՐՔ ԵՒ ԳՈՐԾՔ ՅՍԻ ՔՍԻ։

## ՎԱՐՔԸ ԵՒ ԳՈՐԾՔԵՐԸ ՅՍԻ ՔՍԻ։

Յիսուս զարգանայր իմաստութեամբ. և հասակաւ. և

Յս աճեց իմաստութեամբ և հասակաւ (4) և շնորհքովն ԱԾ-

---

(1) ՎԵՐՋԻ ՏԵՂԻ (2) ԿԱՌԱՎԱՐԵՍ (3) ՀԱՅՑ ԿԸՀԱՆԵՄ (4) ԲՈՅՈՎ

և շնորհօք յԱյ և ՚ի մարդկանէ ։ Ղուկ. Բ. 52 ։

Եւ եկն Յս ՚ի Նազարեթէ Գալիլեացւոց. և մկրտեցաւ ՚ի Յօհաննէ ՚ի Յորդանան ։ Եւ նոյնժամայն ընդ վերանալ ՚ի ջրոյն՝ ետես ցելեալ զերկինս՝ և զհոգին Այ իբրև զաղաւնի. զի իջանէր ՚ի վերայ նորա ։ Ձայն եղև յերկնից՝ և ասէ. դու ես որդի իմ սիրելի. ընդ քեզ հաճեցայ ։ Եւ նոյնժամայն հոգին հանէ զնա յանապատ ։ Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատանայէ. և էր ընդ գազանս. և հրեշտակք պաշտէին զնա ։ Մարկ. Ա. 9—13 ։

Ո՛չ եթէ ունիմք քահանայապետ՝ որ ոչ իցէ կարօղ չարչարակից՛ լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամիւ ըստ նմանութեան առանց մեղաց ։

Եբր

Ածանից և մարդկանցից ։ Ղուկ. Բ. 52 ։

Եկաւ Յս Գալիլեացւոց Նազարեթիցն. և մկրտուեց Յօհաննէսիցն Յորդանան գետումն ։ Եւ էն ժամանակ որ ջրիցն դուրս էր գալիս՝ տեսաւ երկինքն բացված, և Այ հոգին ինչպէս աղաւնիկ որ նորա վերայ վէ՛ր էր գալիս ։ Ձայն էլաւ երկնքիցն՝ և ասեց. դու ես իմ սիրելի որդին. քեզ հաւանեցայ ։ Եւ էն ժամանակը հոգին հանեց նորան անապատը ։(*) Եւ էնտեղ էր քառասուն օր՝ և փորձուեց սատանայիցը. և գազաններին հետ էր. և հրեշտակներին նորան պաշտումէին ։ Մարկ. Ա. 9—13 ։

Չէ՛ թէ ունենք (էնպէս) քահանայապետն՝ որ չի կարող մեր տկարուե՛ն չարչարանքի ընկեր լինել. բայց փորձված է ամէն կերպով մեզ նման առանց մեղքերի ։

Եբր

(*) չէօլը

Եբր. Դ. 15։

Աղուեսուց որջք գոն. և թռչնոց երկնից դադարք. և որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ։ Ղուկ. Թ. 58։

Գիտէք զշնորհսն Տեառն մերոյ Յի Քի. զի վասն ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր. զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք։ Բ. Կոր. Ը. 9։

Զյիսուս որ ՚ի Նազարեթէ ..... եօծ Ած հոգւովն սրբով և զօրութեամբ, որ շրջեցաւ բարի առնել՝ և բժշկել զամենայն ըմբռնեալս ՚ի սատանայէ. զի Ած էր ընդ նմա։ Գործ. Ժ. 38։

Կոյրք տեսանեն. կաղք գնան, բորոտք սրբին. և խուլք լսեն. և մեռեալք յառնեն. և աղքատք աւետարանին։ Եւ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։

Մատ

Եբր. Դ. 15։

Աղուէսներին կենալոյ փոսեր կան. և երկնքի թռչուններին բուներ. բայց մարդոյ որդուն չկայ՝ թէ ինչ տեղ գլուխը դնի։ Ղուկ. Թ. 58։

Գիտումէք մեր Տր Յի Քի շնորհքն. որ ձեզ համար աղքատացաւ՝ նա որ հարուստն էր. որ դուք նորա աղքատութինովն մեծանաք։ Բ. Կոր. Ը. 9։

Յսը որ Նազարեթիցն (էր) .... օծեց Ած իր հոգւով և զօրութինով, որ ման եկաւ բարի անելոյ՝ և ողջացնելոյ համար՝ սատանայից ամէն բռնուածները, պատճառը որ Ած նր հետ էր։ Գործ. Ժ. 38։

Կոյրերն տեսնումեն. կաղերն գնումեն. բօսոտներն սրբվումեն. խուլերն լսումեն. և մեռածներն վեր են կենում. և աղքատներին աւետիք են տռվում։ Եւ երանի նորան որ ինձ վերայ

չէ

Մտթ. ԺԱ. 5. 6:

Ես ունիմ զվկայութիւն մեծ եւս քան զՅօհաննու: Ըզգործսն՝ զորս ետ ցիս Հայր, զի կատարեցից զնոսա. նոքին իսկ գործքն՝ զորս գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս: Յօհ. Ե. 36:

Ահաւասիկ գամ 'ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ. առնել զկամս քո Ած իմ կամեցայ. և զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ: Սաղմ. ԼԹ. 8. 9:

Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս. և կատարեցից զգործն նր: Յօհ. Դ. 34:

Ո՞վ 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց: Յօհ. Ը. 46:

Քրիստոս ձեզ եթող զօրինակ, զի զհետ երթայ-

ցէք

չի գայթակղվում (*): Մտթ. ԺԱ. 5. 6:

Ես ունիմ վկայութիւն մեծ քանց Յօհաննեսինն, գործքերը՝ նորանց որ Հայրն ինձ տուեաւ, որ պիտի կատարեմ նորանց. հենց էն գործքերը՝ որ անումեմ, վըկայումեն ինձ համար. թէ Հայրն ինձ ուղարկելէ: Յօհ. Ե. 36:

Ահա գալիս եմ. գրքերի գլխումն գրված է ինձ համր. Ած իմ քո կամքդ անել ուզեցի. և քո օրէնքդ իմ որովայնի մէջը: Սաղմ. ԼԹ. 8. 9:

Իմ կերակուրս էն է՝ որ կատարեմ նորա կամքը՝ որ ինձ ուղարկեց, և կատարեմ նորա գործը: Յօհ. Դ. 34:

Ձեզանից ով կարէ ինձ մեղադրել մեղքերի համար: Յօհ. Ը. 46:

Քրիստոս ձեզ օրինակ թողեց որ գնաք նորա հետ-

քովն

(*) ուրիշն չէ նեղանում

ցեք զհետոց նորա ։ Որ ոչ արար մեղս, եւ ոչ գտաւ նենգութիւն ՚ի բերան նր։ Որ բամբասեալ՝ եւ ոչ փոխարէն բամբասէր․ չարչարեալ՝ եւ ոչ սպառնայր․ բայց իրաւամբք մատնէր դատաւորին։ ա․ Պետ․ բ․ 21—23։

քովն (1)։ Որ մեղք չի արաւ և նորա բերանումն նենգութի (2) չի՚ գտնվաւ․ որ բամբասվումէր, և նորա տեղն չէ՚ր բամբասում, չարչարվումէր՝ և ոխ չէ՚ր պահում․ բայց մատնումէր իրաւունքով դատաստան անողին։ ա․ Պետ․ բ․ 21—23։

---

## Չարչարանք եւ մահ ՅԻ ՔԻ։

Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ․ եւ որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ եւ դպրաց․ եւ դատապարտեսցեն զնա ՚ի մահ։ Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել՝ եւ հարկանել՝ եւ ՚ի խաչ հանել․ եւ յերրորդ աւուր յարիցէ։ Մտթ․ ի․ 18․ 19։

## ՅԻ ՔԻ չարչարանք և մահ։

Ահա դուրս ենք գալիս դէպի Եէմ․ և մարդոյ որդին կըմատնվի քահանայապետներին՝ և կարդացողներին․ և մահով կըդատեն նորան։ Եւ կըմատնեն նորան հեթանոսներին՝ որ տնազ անեն՝ և թակեն՝ և խաչ հանեն․ և երեք օրումն յարութի կառնէ։ Մտթ․ ի․ 18․ 19։

Յայնժամ գայ Յս ընդ նոսա ՚ի գիւղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի․ եւ ասէ ցնոսա․ Նստարուք այ-

դըր

Այն ժամանակն Յս եկաւ նորանց հետ մին գեղ՝ որ նորա անունն Գեթսեմանի էր․ և ասեց նորանց էդ տեղ

նստեցէ՛ք

---

(1) Եղէրուն (2) Հեւըլտաղլըղը․

դըր. մինչև երթայց՝ կացից յաղօթս։ Եւ առեալ ընդ իւր զպետրոս՝ և զերկուս որդիսն զեբեդեայ՝ ըսկսաւ տրտմիլ և հոգալ։ Յայնժամ ասէ ցնոսա տըրտում է հոգի իմ մինչև 'ի մահ. կացէ՛ք աստ՝ և հըսկեցէ՛ք ընդ իս։ Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց. եկաց յաղօթս և ասէ հայր իմ. եթէ հնար է՝ անցցէ՛ բաժակս այս յինէն։ Բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ ո͞պ դու։ Մատ. ի͞զ. 36—39։

Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից, և զօրացուցանէր զնա. և էր 'ի տագնապի. և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս։ Եւ հոսէին 'ի նմանէ քըրտունք իբրև զկայլակս արեան, ոլոռն, ոլոռն, ճեղեալ յերկիր։ Ղուկ. իբ. 43. 44.

Բայց

նստեցէ՛ք, մինչև ես գնամ աղօթք անեմ։ Եւ վե՛ր առաւ իւրան հետ պետրոսը և զեբեդեայի երկու որդիքը՝ սկսեց տրտմիլ և հոգս քաշել։ Էն ժամանակն ասեց նորանց՝ թէ իմ հոգիս տրտումէ մինչև մահն. էստեղ կացէ՛ք և արթուն լինիք ինձ հետ։ Եւ մի քիչ առաջ գնաց՝ և իւրան երեսի վերայ վեր ընկաւ, աղօթք արաւ և ասեց՝ ի՛մ հայր, թէ որ հնար կայ էս բաժակը (*) անց կենայ ինձանից։ Բայց չէ՛ թէ ինչպէս ես եմ կամենում, բայց ինչպէս դու։ Մատ. ի͞զ. 36—39։

Եւ հրեշտակ երևաց նորան երկնքիցն, և զօրացնումէր նորան, և մեծ նեղութե մէջին էր, և առաւել ուշ դնելով աղօթումէր։ Եւ քրտունքն վեր էր թափվում նորանից՝ ինչպէս արիւնի կաթիլք. պուտ պուտ վեր էր դանում երկրի վր։ Ղուկ. իբ. 43. 44.

Բայց

(*) [illegible]

Գայ առ աշակերտսն՝ և գտանէ զնոսա ՛ի քուն. և ասէ ցՊետրոս. այդպէս ոչ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս։ Արթո՛ւն կացէք և աղօ՛թս արարէք՝ զի մի՛ անկանիցիք ՛ի փորձութիւն։ Հոգի յօժար է՝ բայց մարմինս տկար։ Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս Յս՝ և ասէ. Հա՛յր իմ, եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ՝ ապա թէ ոչ՝ արբից զդա, եղիցին կամք քո։ Եւ եկեալ միւս անգամ եգիտ զնոսա ՛ի քուն. զի էին աչք նոցա ծանրացեալք։ Եթող զնոսա՝ և գնաց. եկաց յաղօթս երրորդ անգամ. և դարձեալ զնոյն բան ասաց։ Յայնժամ գայ առ աշակերտսն՝ և ասէ ցնոսա. Ննջեցէ՛ք այսուհետև՝ և հանգերո՛ւք. զի ահա հասեալ է ժամ. և որդի մարդոյ մատնի

Գալիս էր աշակերտներին մօտ՝ և նորաց գտնումէր քնած, և ասումէր պետրոսին. էդպէս չի՛ կարացիք մին ժամ (*) արթուն կենալ ինձ հետ։ Արթո՛ւն կացէք և աղօ՛թք արէք՝ որ փորձանքի մէջ չի՛ ընկնէք։ Հոգին յօժար է, բայց մարմինն տկար։ Մին էլ երկրորդ անգամ գնաց Յս՝ աղօթք արաւ, և ասումէր. իմ հա՛յր. թէ որ հնար կըլինի, էս բաժակս ինձանից անց կենայ. թէ որ չի լինի՝ կըխմեմ սորան, քո կամքդ լինի։ Եկաւ մին անգամ էլ և նորանց քնած գտաւ. պատճառը որ նորանց աչքերն ծանրացել էր։ Թողեց նորաց՝ և գնաց. աղօթք արաւ երեք անգամ. և էլ էն խօսքն ասեց. Էն ժամանակն գալիս էր աշակերտներին մօտն՝ և ասումէր նորանց. թէ հիմի՛կանցետոյ քնեցէ՛ք և հանգստացէ՛ք

(*) սահաթ

մատնի 'ի ձեռս մեղաւորաց ։ Մատ․ ԻԶ․ 40—45 ։

Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ ահա յուդաս մի յերկոտասանիցն եկն․ և ընդ նմա ամբոխ բազում սրօք և բրօք, 'ի քահանայապետիցն և 'ի ծերոց ժողովրդեանն ։ Մատ․ ԻԶ․ 47․

Եւ նոքա արկին 'ի նա ձեռս՝ և կալան զնա ։ Մարկ․ ԺԴ․ 46 ։

Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան ։ Իսկ նոցա կալեալ զՅիսուս ածին առ կայիափայ քահանայապետ՝ ուր դպիրք և ծերք ժողովեալ էին ։ Մատ․ ԻԶ․ 56․ 57․

Յայնժամ թքին ընդ երեսս նորա․ և կռփեցին զնա․ և ոմանք ապտակեցին, և ասեն․ մարգարէա՛ց մեզ

Քրիս

գնացէ՛ք ։ պատճառը որ ահա հասել է ժամն․ և մարդոյ որդին կըմատնուի մեղաւորների ձեռքն ։ Մատ․ ԻԶ․ 40—45 ։

Եւ դեռ որ նա էն խօսումէր՝ ահա յուդան, որ տասներկուսից մինն էր՝ եկաւ․ և նորան հետ շատ մարդիկ թըրերով՝ և բռներով քահանայապետներից և ժողովուրդի ծերերից․ Մատ․ ԻԶ․ 47 ։

Եւ նորանք ձեռներըն ձըգեցին նորան՝ և բռնեցին նորան ։ Մարկ․ ԺԴ․ 46 ։

Էն ժամանակ ամեն աշակերտներն թողեցին նորան և փախան ։ Բայց նորանք բռնեցին յիսին և տարան կայիափայ քահանայապետի մօտըն․ էնտեղ որ կարդացողներըն և ծերերըն ժողոված էին ։ Մատ․ ԻԶ․ 56․ 57 ։

Էն ժամանակն թքեցին նորա երեսին վերայ․ և բռունցկով տուին նորան․ և մին քանիսն ապտակ (*) էին

կա

(*) Սիլլէյ ։

Քրիստոսդ՝ ո՞վ է՝ որ ե-
հար զքեզ ։ Մտթ․ ԻԶ․
67․ 68 ։

Եւ այլ բազում ինչ հայ-
հոյութեամբ խօսէին ՚ի նա ։
Ղուկ․ ԻԲ․ 65 ։

Եւ ընդ այգ ելն՝ խորհուրդ
արարին ամենայն քահանայ-
ապետք և ծերք ժողովր-
դեանն վասն Յ̃ի սպանա-
նել զնա ։ Կապեցին զնա․
և ածին գնացին․ և ետուն
՚ի ձեռս պոնտացւոյ պի-
ղատոսի դատաւորի ։ Մտթ․
ԻԷ․ 1․ 2 ։

Իսկ պիղատոս եհարց զնա
և ասէ՝ դո՞ւ ես թագաւորն
հրէից․ նա պատասխանի ետ
նմա և ասէ․ դու ասացեր ։
Ասէ պիղատոս ցքահանայ-
ապետսն, և ցժողովուրդսն․
չգտանեմ ինչ վնաս յառնս
յայսմիկ ։ Ղուկ․ ԻԳ․ 3․ 4 ։

Բայց է ձեր սովորութիւն,
զի զմի ոք արձակեցից ձեզ
՚ի

հանում, և ասում՝ մարգար-
եացիր մեզ Ք̃ս՝ ո՞վ է որ քեզ
թակեց ։ Մտթ․ ԻԶ․ 67․ 68 ։

Եւ ուրիշ շատ կիշոցներ
տալով խօսումէին դէպի նո-
րան ։ Ղուկ․ ԻԲ․ 65 ։

Երբ որ լուսացաւ՝ խոր
հուրդ արին ամեն քահա-
նայապետներն և ժողովուր-
դի ծերերն Յ̃սին համար՝ որ
սպանեն նորան ։ Կապեցին
նորան, և առան գնացին․ և
տուէին պոնտացի պիղատոս
դատաւորի ձեռքն ։ Մտթ․
ԻԷ․ 1․ 2 ։

Բայց պիղատոսն հարցրուց
նորան և ասեց՝ դո՞ւ ես հր-
րէից (1) թագաւորն․ նա
պատասխան տուաւ նորան
և ասեց․ դու ասացիր ։ Պի-
ղատոսն ասեց քահանայա-
պետներին և ժողովուրդին
ես էս մարդումն մին վնաս
(2) չե՛մ գտնում ։ Ղուկ․
ԻԳ․ 3․ 4 ։

Բայց ձեր սովորուն է, որ
մինը պիտի արձակեմ ձեզ
հա-

(1) Ջհուտներին (2) սուչ

Ի զատկիս. արդ՝ կամի՞ք զի արձակեցից ձեզ զԹագաւորն Հրէից ։ Իբրև տեսին զնա քահանայապետքըն և սպասաւորք, զաղաղակ բարձին՝ և ասեն. Ի խաչ հան. 'ի խաչ հան զդա ։ ասէ ցնոսա պիղատոս առէ՛ք զդա 'ի ձեզ. և ձեզէ՛ն հանէք 'ի խաչ. զի ես 'ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ ։ Յոհ. ԺԸ. 39. ԺԹ. 6 ։

Համար զատկի ժամանակին. հիմի՞կ կամենումէք որ բաց թողեմ ձեզ Հրէից (1) թագաւորն ։ Երբ որ տեսին նորան քահանայապետները և ծառաները՝ ձղձղացին՝ և ասեցին, խաչ հանիր՝ խաչ հանիր դորան ։ Պիղատոսն ասեց նորանց թէ ձեզ առէ՛ք և դուք ձեզ ու ձեզ խաչ հանեցէք, որ ես դորանում մին վնաս (2) չե՛մ գտնում ։ Յոհ. ԺԸ. 39 ։ ԺԹ. 6.

Եւ յայնմհետէ պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրէայքն աղաղակէին, և ասէին. Եթէ զդա արձակես՝ չե՛ս բարեկամ կայսեր. Յոհ. ԺԹ. 12 ։

Եւ էն ժամանակիցը պիղատոսն ուզումէր՝ որ վեր թողնի նորան, և հրէայքները կանչումէին, և ասումէին. թէ որ դորան վեր թողնես՝ թագաւորին բարեկամ չես ։ Յոհ. ԺԹ. 12 ։

Յայնժամ ետ զնա 'ի ձեռս նոցա, զի 'ի խաչ ելանիցէ ։ Եւ նոքա առեալ տանէին զնա ։ և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր 'ի տեղին՝ որ անուանեալ

Էն ժամանակն նորան տըւաւ նորանց ձեռքը խաչ հանելու համար ։ Եւ նորանք առան տանումէին նորան ։ և ինքն խաչի փայտը վեր էր կալել, և դուրս ելաւ

(1) Ջհուդների (2) սուճ

նեալ էր գագաթն. և կոչիւր երբայեցերէն գողգոթա։ Ուր և ՚ի խաչ հանին զնա և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ՚ի մէջի զՅիսուս։ Յօհ. ժԹ. 16–18։

Եւ Յիսուս ասէ. Հայր, թող դոցա. զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։ Եւ ՚ի բաժանել զհանդերձս նորա՝ արկին վիճակս։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անգոսնէին զնա և իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. զայլս ապրեցոյց ապրեցուսցէ և զանձն եթէ դա է Քրիստոս որդի Աստուծոյ ընտրեալն։ Ղուկ. ԻԳ. 34. 35.

Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Ի՟լի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատասցուք զմա։ Մատթ. ԻԷ.

էլաւ էն տեղը, որ ասվումէր գագաթն. և որ երբայեցուց լեզուով գողգոթայ էր կոչվում։ Հենց էնտեղ խաչ հանեցին նորան. և նորան հետ էլ ուրիշ երկուսը էս կողմը և էն կողմը և մէջումն Յիսուսը։ Յօհ. ժԹ. 16–18։

Եւ Յ՟ն ասաց. Հայր թողու՛ տուր դորանց, որ չե՛ն գիտում ինչ են գործում։ Եւ նորա շորերը բաժանելի ժամանակին վիճակ քցեցին, և ժողովուրդը կանգնած նայումէր, և խայտառակ էին անում նորան և իշխաններն էլ նորանց հետ. և ասումէին. ուրիշները ապրացրուց՝ իւրան անձն էլ ապրացնի՝, թէ որ դա է Ք՟սն, որդին Ա՟յ ընտըրվածն։ Ղուկ. ԻԳ. 34. 35։

Ուրիշները ապրացրուց՝ իւրան չի կարում ապրացնել. թէ որ Ի՟ելացուց թագաւորն է՝ վե՛ր գայ հիմիկ էդ խաչիցը՝ և կըհաւատանք.

իէ. 42։

Իսկ մի ոմն 'ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա, և ասէր. ո՞չ դու ես Քրիստոսն. փրկեա՛ զանձն քո, և զմեզ։ Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա, և ասէ. չերկնչի՞ս դու յԱ՜յ՝ զի 'ի նմին պատժի կաս։ Եւ մեք իրաւի, զի արժանի՝ որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ո՛չ գործեաց։ Եւ ասէ ցՅիսուս։ յիշեա՛ զիս Տէ՛ր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով։ Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես 'ի դրախտին։ Եւ էր իբրև վեցերորդ ժամ և խաւար եղև 'ի վերայ ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամ։ խաւարեցաւ արեգակն։ Ղուկ. իգ. 39—44

Եւ

տանք դորան։ Մատթ. իէ. 42։

Եւ էն չարագործ կախաւածներին մինն ուշունց էր տալիս նորան, և ասումէր, չէ՞ որ դու ես Ք՜ն. քո անձնդ փրկիր, և էլ մեզ։ Պատասխան տուաւ ընկերն նախատումէր նորան և ասումէր. չե՞ս վախում դու ա՜ծանից՝ որ դու հենց էն պատժումն ես։ Եւ մենք իրաւունքով, պատժառը որ՝ ինչ գործել ենք՝ նորան արժանի վարձքը առնումենք, և սա անիրաւ բան չի գործեց։ Եւ ասեց Յ՜սին. ինձ յիշի՛ր տէ՛ր՝ երբ որ քո արքայութենովդ գալու լինիս։ Եւ Յ՜ս ասեց նորան, ճշմարիտն եմ ասում քեզ. էսօր ինձ հետ դրախտի միջումն կըլինիս։ Եւ մօտ էր վեց ժամին (*) և մութն էլաւ ամեն երկրի վ՜ր մինչև ինն ժամն։ արեգակն խաւարվեց։ Ղուկաս. իգ. 39—44։

Եւ

(*) ատհաբէին

Եւ զիններորդ ժամաւն գոչեաց Յիսուս 'ի ձայն մեծ՝ և ասէ . Էլի Էլի՝ լամա սաբաքթանի. այսինքն է . Աստուած իմ, Ա՟ծ իմ՝ ընդէ՞ր թողեր զիս ։ Մատ. ԻԷ . 46 ։

Եւ իննն ժամումն Յ՟ս մեծ ձայնով կանչեց և ասեց. Էլլ Էլի՝ լամա սաբաքթանի. որ կիմացվի . իմ Աստուած, իմ Աստուած՝ ինչո՞ւ թողեցիր ինձ ։ Մատ. ԻԷ . 46 ։

Յետ այսորիկ գիտաց Յիսուս, եթէ ահա ամ՟ ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ . ծարաւի եմ. Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եղեալ զմշտկաւ զոպայի . մատուցին 'ի բերան նորա ։ Իբրև եառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ . ամ՟ ինչ կատարեալ է . և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին ։ Յօհ . ԺԹ . 28—30 ։

Սրանից ետև, Յ՟ս գիտնալով թէ ամեն բանն կատարվել է, որ գիրն կատարվի, ասեց՝ ծարաւ եմ. Եւ էնտեղ մին աման կար քացախով լիքըն. և նորանք մին սպունգ (*) լցրին քացախով լեղուն հետ՝ և զոպայի փունջի կոթերի չորս կողմովն դրին նորան՝ և մօտացրին նորա բերանին ։ Երբ որ Յ՟ս քացախն լեղուն հետ առաւ՝ ասեց . ամեն ինչ կատարվել է ։ և գլուխն քաշացրուց, և հոգին աւանդեց ։ Յօհ . ԺԹ . 28—30 ։

Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ 'ի վերուստ մինչև 'ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պա-

Եւ ահա, տաճարի վարագուրն ճղվեց վերևից մինչև տակն՝ երկու կտոր դառաւ, և երկիրս շարժվեց

(*) [illegible]

պատառեցան ։ Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան ։ Եւ ելեալք ՚ի գերեզմանացն՝ յետ յարութեանն նորա, մտին ՚ի քաղաքն սբ, և երևեցան բազմաց ։ Մատ. ԻԷ. 51—53 ։

վեց, քարերն պատառվեցին ։ Եւ գերեզմանները բացվեցին. և շատ մարմիններն մեռած սրբերից վեր կացան ։ Եւ գերեզմաններից դուրս եկածներն, նր յարութիւնից ետն սբ քաղաքն մտան, և շատ մարդկանց երևացին ։ Մատ. ԻԷ. 51—53.

Եւ իբրև երեկոյ եղև՝ եկն այր մի մեծատուն յարիմաթեայ՝ որում անուն էր յովսէփ. որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի ։ Եւ առեալ զմարմինն յովսէփ պատեաց սբ կտաւօք, և եդ ՚ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ՚ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ և գնաց ։ Մատ. ԻԷ. 57. 59. 60 ։

Եւ երբ որ երեկուն էլաւ՝ մին հարուստ մարդ եկաւ արիմաթեացի՝ որ նր անունն յովսէփ էր. որ յինքն աշակերտո-ն արաւ ։ Եւ յովսէփն առաւ Քի մարմինը և խտակ կտաւով պատանեց, և դրաւ նոր գերեզմանումն՝ որ փորել էր քարի մէջումն, և թօլ արաւ գերեզմանի դուան փակ մին մեծ քար՝ և գնաց ։ Մատ. ԻԷ. 57. 59. 60 ։

---

### Պատճառ և օրինակ չարչարանացն Քի ։

### Պատճառ և պատկեր չարչարանքին Քի ։

Յայտնեաց Քս զսէրն իւր ՚ի մեզ. զի մինչդեռ տկարքն էաք, Քս վասն

Քս իւրան սէրն յայտնեց մեզանում. ինչու որ երբ մենք դեռ տկար էինք, Քս



մեզ

մեր մեռաւ ։ Հռովմ. Ե. 8. 9։

Զայն որ ոչն գիտէր մեղս՝ վասն մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Այ. Բ. Կորն. Ե. 21։

Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք. զի գրեալ է. թէ անիծեալ ամ, որ կախեալ կայցէ զփայտէ ։ Գաղատ. Գ. 13։

(Քրիստոս) Ետ զանձն վասըն մեր. զի փրկեսցէ զմեզ յամ անօրէնութենէ. և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական. նախանձաւոր գործոց բարութեան ։ Տիտ. Բ. 14։

Քրիստոս միանգամ վասն մեղաց ՚ի վերայ ձեր մեռաւ. արդարն ՚ի վերայ անարդարոց. զի զձեզ մերձեցուսցէ առ Այ ։ Ա. Պետ. Գ. 18։

Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել,

և

մեզ համար մեռաւ ։ Հռովմ. Ե. 8. 9։

Նորան որ մեղք չէր գիտում՝ մեզ համար մեղք շինեց. որ մենք նորանով Այ արդարութիւն լինինք։ Բ. Կորն. Ե. 21։

Քրիստոս մեզ գնեց օրէնքի անէծքիցն, ինքն մեզ համար անէծք լինելով. որ գրուած է. թէ անիծուած լինի ամէն (մարդ), որ փայտից կախուած լինի։ Գաղատ. Գ. 13։

(Քրիստոս) իւրան անձն տուաւ մեզ համար. որ մեզ փրկի ամէն անօրէնութիւնից. և սրբէ իւրան համար բուն ժողովուրդ. որ բարի գործքին նախանձ ունենայ ։ Տիտ. Բ. 14։

Քրիստոս մին անգամ մեղքերի համար ձեր տեղն մեռաւ. արդարն անարդարներին համար. որ ձեզ մօտացնի աստուծուն ։ Ա. Պետ. Գ. 18։

Մարդոյ որդին չի եկաւ՝ որ ծառայութիւն առնէ՝ բայց որ

անէ

և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։ Մտթ. Ի. 28։

Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց։ Եփես. ա. 7։

Ո՛չ ապականացու արծաթեղինօք՝ և ոսկեղինօք փրկեցայք ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն, այլ պատուական արեամբն Քրիստոսի. իբրև անբիծ և անարատ գառին։ ա. Պետ. ա. 18. 19։

Մի է ած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս՝ որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն ժամանակաց իւրոց։ ա. Տիմ. բ. 5. 6։

### Յարութիւն Քի։

(Յիսուս) մատնեցաւ վասն յանցանաց մերոց. և յարեաւ

անէ, և իր անձն տայ փրկելու գին շատ մարդկանց տեղ։ Մտթ. Ի. 28,

Որ նորանով փրկութիւն ունենանք նորա արիւնովն, մեղքերի թողութիւն իւրան մեծ շնորհքին չափովն։ Եփես. ա. 7։

Ոչ՛ թէ ապականվելի արծաթեղէն՝ կամ ոսկեղէն բաներով փրկվեցիք ձեր հօրից տուված դատարկ վարքիցն, բայց պատուական արիւնովըն Քրիստոսի. ինչպէս անբիծ (1) և անարատ գառին։ ա. Պետ. ա. 18. 19։

Մին ած է և մին միջնորդ ածոյ և մարդկանց մէջ՝ մարդն Յս Քսն, որ տուաւ անձն փրկելու գին ամենեքին համար՝ իւրան ժամանակների վկայութիւնով։ ա. Տիմ. բ. 5. 6։

### Քի յարութիւնը։

(Յս) մատնուեցաւ մեր յանցանքին (2) համար. և յարուէ

(1) [illegible] (2) [illegible]

ծաւ վասն զմեզ արդարացուցանելոյ ։ Հռոմ. Դ. 25։

Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց։ Քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց։ Որպէս ադամաւն ամենեքեան մեռանին. նոյնպէս և Քրիւ ամենեքեան կենդանասցին։ Ա. Կորն. ԺԵ. 20—22։

Ի վերայ ամենեցուն մեռաւ Քս. զի որք կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ, որ ՚ի վր նոցայն մեռաւ և յարեաւ։ Բ. Կորն. Ե. 15։

րութե առաւ մեզ արդարացնելոյ համար ։ Հռոմ. Դ. 25։

Քս յարութի առաւ մեռածների մեջիցն՝ ննջեցալներին առաջի պտուղն. Պատճառը որ մարդով էլաւ մահն, և մարդով մեռածների յարութիւն։ Ինչպէս ադամով ամեն մարդ մեռնումէ. էնպէս Քսովըն ամենքըն էլ պիտի կենդանանան ։ Ա. Կորն. ԺԵ, 20—22։

Ամենքին համար Քս մեռաւ. որ նորանք որ կենդանի լինին՝ իւրանց հմր չի լինին կենդանի, բայց նորան համար որ նորանց վերայ մեռաւ և յարութի առաւ։ Բ. Կորն. Ե. 75։

---

## Համբարձումն Քի։

Եհան զնոսա մինչև ՚ի բեթանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա։ Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ՚ի նոցանէ. և վերանայր յերկինս

կինս

## Քսի համբարձումը։

Նորանց (կմ աշակերտներըը) հանեց մինչև բեթանիա, և իւրան ձեռքը բարձրացրուց՝ օրհնեց նորանց. Եւ էլաւ, երբ որ օրհնումէր նորանց, որ նա հեռացաւ

նա

կէնս ։ Պօղ. Իդ. 49. 50.

(Նախադաս) յարոյց զնա 'ի մեռելոց. և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս, 'ի վեր քան զիշխանութիւն՝ և պետութիւն. և զօրութիւն՝ և տէրութիւն. և քան զանուն անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ՝ այլ և 'ի հանդերձելումն ։ Եւ զամ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա ։ Եւ զնա ետ գլուխ 'ի վերայ ամ իրիք եկեղեցւոյ ։ Եփես. Ա. 20—22.

Ո՞վ իցէ՝ որ մեղադիր լինիցի ընտրելոց Այ. Ած է՝ որ արդարացուցանէ ։ Իսկ արդ՝ ո՞վ է՝ որ դատապարտ առնիցէ ։ Քս Յս՝ որ մեռաւն՝ մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ Այ. որ և բարեխօս իսկ է վասն մեր. Հռոմ. Ը. 33. 34.

Զայն խորհեսցի իւրա-

քանչիւր

նորանցից, և բարձրանումէր երկինքն։ Պօղ. Իդ. 49. 50։

(Նաձ) յարուին տուաւ նորան մեռածներից մեջիցն, և նստացրուց իւրան աջի կողմումն երկնքումն ամեն իշխանութ, գլխաւորութ, զօրութ, և տէրութ, և ինչ որ անուն կասվի նորանց վերայ, չէ՛ թէ մենակ էս աշխարհքումըս, բայց գալու (աշխարհքումն) էլ ։ Եւ ամեն բան հնազանդ արաւ նորա ոտների տակին ։ Եւ նորան գլուխ կարգեց եկեղեցւոյ ամեն բանին վերայ. Եփես. Ա. 20—22

Ո՞վ է՝ որ մեղադրի այ ընտրվածներին. Ած է՝ որ արդարացնումէ ։ Էհ հի՛միկ Ո՞վ է՝ որ դատապարտ կանէ ։ Քս Յս որ մեռաւ՝ աւելի որ էլ յարուին է առել և այ աջի կողմին է. նա որ հենց բարեխօս է մեզ համար ։ Հռոմ. Ը. 33. 34 ։

Այն թող միտք անի ամենն

ձեզանից

քանզի իւր ոք 'ի ձէնջ, որ և 'ի Քրիստոս Յիսուս. որ 'ի կերպարանս Աստուծոյ էր, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ՝ և կերպարանօք գտեալ իբրև զմարդ։ Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի։ Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ 'ի վեր է քան զամենայն անուն։ Զի յանուն Յի̄ Քի̄ ամ̄ ծունր կրկնեսցի, երկնաւորաց՝ և երկրաւորաց՝ և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր Յս̄ Քս̄ է 'ի փառս Այ̄ Հօր։ Փիլիպ. Բ. 5—11։

Եթէ յարեայք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէ՛ք, ուր Քրիստոսն նստի

ձեզանից. որ դէպ 'ի Քրիստոս Յիսուսն է. որ Այ̄ կերպարանքումն էր, խլել չի համարեց Այ̄ հաւասար լինելը. բայց իւրան ցածացրուց՝ ծառայի կերպարանքը առնելով, մարդոյ նման ըլալ՝ և կերպարանքով ինչպէս մարդ գտնըվաւ. Խոնարհացրուց իւր անձն հընազանդ ըլալ մինչև մահըն, և մինչև խաչի մահն էլ։ Նորան համար էլ Աստուած նորան շատ բարձրացրուց. և անուն շնորհեց նորան՝ որ ամեն անունից բարձր է։ Որ Յիսուսի քրիստոսի անունով ամեն ծունր դնիլի երկնաւորների՝ և երկրաւորների՝ և գետնի տակին ըլածների. և ամեն լեզու դաւանի, թէ Յիսուս Քրիստոս Տէրըն է Հօր Այ̄ փառքումն։ Փիլիպ. Բ. 5—11։

Թէ որ յարուծ էք առել Քրիստոսին հետ, տէ՛ հիմիկ վերինն խնդրեցէ՛ք էնտեղ՝

նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Զվերինսն խորհեցարո՛ւք, մի զայս՝ որ յերկրի աստ է։ Քանզի մեռայք՝ և կեանքն ձեր ծածկեալք են ընդ Քրիստոսի յԱ՟Ծ։ Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի, կեանքն ձեր. յայնժամ և դուք ընդ նմին յայտնեսջիք փառօք։ Սպանէ՛ք այսուհետև զանդամս ձեր զերկրաւորս. 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց, և զագահութիւն, որ է կռապաշտութիւն։ Վասն որոյ գայ բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ որդւոցն անհաւանութեան։ Կողոս. Գ. 1—6։

տեղը՝ որ Քրիստոսն նըստում է Ա՟Յ աջի կողմին։ Էն վերինն մտածեցէ՛ք, և ո՛չ էս՝ որ էստեղ երկրումն է։ Պատճառը որ մեռաք, և ձեր կեանքն ծածկված է Ք՟ին հետ անձանումն։ Բայց երբ որ Ք՟ն կըյայտնվի, ձեր կեանքն. էն ժամանակն դուք էլ նորա հետ փառքով կըյայտնվիք։ Սպանեցէ՛ք հիմիկաց ետն ձեր երկրաւոր անդամներըս։ Հեռացրէ՛ք պոռնկութիւնը, պըղծութիւնը, արատը (*) չար բաների ցանկութիւնը և ագահութիւնը, որ կռապաշտութիւն է։ Էնտուր հմ՟ր գալիս է Ա՟յ բարկութիւնն անհաւան որդիքներին վրէ։ Կողոս. Գ. 1—6։

## ԳԼՈՒԽ Զ.

### Յաղագս շնորհաց Ա՟Յ։

(Աստուած) փրկեաց զմեզ, և կոչեաց 'ի կոչումն սբ

### Ա՟Յ շնորհքին համար։

(Աստուած) փրկեց մեզ, և կանչեց դիպի իւրան սբ կոչմունն

(*) Լէքէ։

սուրբ․ ոչ ըստ գործոց մե-րոց՝ այլ ըստ իւրում յա-ռաջադրութեան, և շնոր-հաց, որ տուեալ մեզ ՚ի Ք՟ս Յ՟ս, յառաջ քան զժաման-նակս յաւիտենից․ Բայց յայտնեցաւ այժմիկ յերևել փրկչին մերոյ Յ՟ի Ք՟ի․ որ խափանեաց զմահ՝ և լու-սաւոր արար զկեանս, և զա-նեղծութիւն ՚ի ձեռն աւե-տարանին։ Բ․ Տիմ․ Ա․ 9․ 10։

Դուք էք ՚ի Քրիստոս Յի-սուս․ որ եղև մեզ իմաս-տութի՛ւն յ՟այ․ արդարութիւն, և փրկութիւն, և սրբու-թիւն։ Ա․ Կորն․ Ա․ 30։

Շնորհքն լուսաւորէ։

(Յիսուս) ասէ, ես եմ լոյս աշխարհի․ որ գայ ըզ-կնի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ․ այլ ընկալցի ըզ-լոյսն կենաց։ Յովհ․ Ը․ 12։ Ես եմ ճանապարհ, և ճըշ-մարտութիւն, և կեանք․ ոչ ոք գայ առ հայր՝ եթէ ոչ ինև։ Յովհ․ ԺԴ․ 6։

Ես

կուչմունքներն, ոչ մեր գործ-քերին համար՝ բայց իւրան առաջուց կարգաւորումն և շնորհքին պէս, որ տուվաւ մեզ Ք՟ով Յ՟ով, յաւիտենա-կան ժամանակներից առաջ․ Բայց հիմիկ յայտնուեց մեր փրկիչ Յ՟ի Ք՟ի երևելովն, որ մահը խափանեց՝ և կե-անքը, և չի ապականվիլը յայտնի արաւ աւետարա-նովն։ Բ․ Տիմ․ Ա․ 9․ 10։

Դուք էք Յիսուսումն Ք՟ս-ումն․ որ էլաւ մեզ աս-տուածանից իմաստութիւն, արդարութիւն, և փրկութիւն և սրբութիւն։ Ա․ Կորն․ Ա․ 30։

Շնորհքն լուսաւորումէ։

(Յ՟ս) ասումէ, ես եմ աշ-խարհքիս լոյսն, ով որ գա-լիս է ինձ ետնայ խաւա-րումն չի՛ գնալ․ բայց կեանքի լոյսը կընգունի։ Յովհ․ Ը․ 12։ Ես եմ ճանապարհն․ և ճշմարտութիւն, և կեանքն․ ոչ ով չի՛ գալ հօր մօտ՝ թէ որ չէ՛ ինձանով։ Յովհ․ ԺԴ․ 6։

Ես

Ես առաքեցից զքեզ. բա-
նալ զաչս նց. դարձուցանել
'ի խաւարէ 'ի լոյս: և յիշ-
խանութէ սատանայի յԱս-
տուած. առնուլ նոցա զթո-
ղութիւն մեղաց. և զվի-
ճակ ընդ սուրբս՝ հաւա-
տովքն որ յիս: Գործք. Իզ.
17. 18:

Աստուած որ ասաց 'ի խա-
ւարի զլոյս ծագել. որ և
ծագեաց իսկ 'ի սիրտս մեր
զլուսաւորութիւն գիտու-
թեան փառացն Աստուծոյ
'ի դէմս Յն Քրիստոսի:
Բ. Կոր. Դ. 6:

Ես քեզ կուղարկեմ. բաց
անել նորանց աչքերը. խա-
ւարիցը ետ դարցնել լուսի
մէջն: և սատանայի իշխա-
նութիցն՝ Այ մօտ, որ առ-
նեն նորանք մեղքերի թո-
ղութին, և վիճակ (ժառանգութիւն)
սրբերի հետ՝ հաւատքով
իմ վրա: Գործք. Իզ. 17. 18:

Այն որ ասեց խաւարի մէ-
ջը լոյս ծագի, որ էլ յա-
տուկ ծագեց մեր սրտների
մէջն էն լուսաւորութինը,
որ Այ փառքը գիտենանք
Յն Քն երեսովն: Բ. Կոր.
Դ. 6:

---

Առ Տիտոս:

Երեւեցաւ շնորհն Աստու-
ծոյ փրկիչ ամենայն մարդ-
կան: որ խրատէ զմեզ. զի
ուրասցուք զամբարշտու-
թիւն, և զաշխարհական
ցանկութիւնս. զգաստութբ,
և արդարութբ՝ և ածպաշ-
տութբ կեցցուք յաշխար-
հի: Եւ ակնկալցուք երա-
նելոյ յուսոյն՝ և յայտնութե
փառաց

Տիտոսինմէ հանածը:

Այն շնորհքն երևաց ամեն
մարդկանց փրկելոյ համար:
որ մեզ խրատումէ որ ամ-
բարշտութիւնը ուրանանք, և
աշխարհքիս ցանկութինները.
զգաստ լինելով. և արդա-
րութով և ածպաշտութով
ապրենք էս աշխարհքումս:
Եւ սպասենք երանելի յու-
սին և մեծ Այ և մեր փրկ-
չին

փառաց մեծին Ա՜Յ՝ և փրկ-
չին մերոյ Յ՜Ի Ք՜Ի ։ Որ
ետ զանձն վասն մեր․ զի
փրկեսցէ զմեզ յամ՜ անօրէ-
նութենէ. և սրբեսցէ իւր ժո-
ղովուրդ սեպհական, նա-
խանձաւոր գործոց բարու-
թեան ։ Տիտ․ Բ․ 11—14 ։

Ցանեցից ՚ի վերայ ձեր
ջուր սուրբ․ և սրբեսջիք
յամ՜ պղծութենէց ձերոց․ և
յամ՜ կռոց ձերոց սրբեցից
զձեզ ։ Եւ տաց ձեզ զսիրտ
նոր․ և զոգի նոր նորոգե-
ցից ՚ի ձեզ ։ և հանից ըզ-
սիրտն քարեղէն ՚ի մարմնոց
ձերոց․ և տաց ձեզ զսիրտ
մարմնեղէն ։ Եւ զոգի իմ
տաց ձեզ․ և արարից, զի
յարդարութիւնս իմ գնայցէք,
և զիրաւունս իմ պահիցէք․
և առնիցէք զնոսա ։ Եզեկ․
ԼԶ․ 25—27 ։

Ա՜Ծ է՝ որ յաջողէ ՚ի ձեզ
զկամելըն, և զառնելըն վասն
հաճութեան ։ Փիլիպ․ Բ․
13 ։

Կացէ՛ք յիս և ես ՚ի ձեզ․
որպէս

չին յ՜ի ք՜ի փառքի յայտնու-
թեան ։ Նա որ իւր անձն
տուաւ մեզ համար, որ մեզ
փրկէ ամեն անօրէնութիւններէն ,
և սրբէ իւրան համար բուն
ժողովուրդ․ որ բարի գործ-
քերին նախանձ ունենայ ։
Տիտ․ Բ․ 11—14 ․

Կըցանեմ ձեր վերայ մը
ջուրը․ և կըսրբվիք ձեր
ամեն պղծութիւններէն․ և ձեր
ամեն կուռքերէն կըսրբեմ
ձեզ ։ Եւ կըտամ ձեզ նոր
սիրտ․ և նոր հոգի կըդնեմ
ձեզանում, և կըհանեմ ձեր
մարմիններէն էն քարեղէն
սիրտն․ և մսեղէն սիրտ կը-
տամ ձեզ ։ Եւ իմ հոգին
ձեզ կըտամ․ և կանեմ, որ
գնաք իմ արդարութեան մէջ,
և իմ իրաւունքս պահէք․ և
նորանց կատարէք ։ Եզեկ․
ԼԶ․ 25—27 ։

Ա՜Ծ է՝ որ յաջողումն ձե-
զանում կամենալըն և կատա-
րելըն (նորան) հաւանկենալոյ
համար ։ Փիլիպ․ Բ․ 13 ։

Կացէ՛ք ինձանում՝ և ես ձե-
զանում

որպէս ուռն ոչ կարէ ըզպտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք եթէ ոչ յիս հաստատեալ իցէք։ Ես եմ որթ՝ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ՚ի նա, նա բերէ զպտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել։ Յօհ. ԺԵ. Դ. 5։

զանում։ ինչպէս (Ճիւղն) մատըն, չի՛ կարող ինքն իւրանից պտուղ բերել, թէ որ հաստատուած չի լինի վազնումն. էնպէս էլ դուք թէ որ ինձանում հաստատուած չի լինիք։ Ես եմ վազն՝ և դուք մատն, որ հաստատուած է ինձանում՝ և ես նորանում, նա կըբերէ շատ պտուղ. պատճառը որ առանց ինձ ոչինչ չէ՛ք կարող անել։ Յօհ. ԺԵ. Դ. 5։

---

Պատուական է քան զամենեցուն։

Լուսաւոր և անթառամ է իմաստութիւն և դիւրաւ երևի սիրողաց իւրոց՝ և գտանի խնդրողաց իւրոց։ Հասանի առ ցանկացօղսն իւր։ առ յառաջագոյն ծանաչելոյ։ Որ կանխեաց առ նա՝ ոչ վաստակեսցի։ զի դեգերեալ գտցէ զնա առ դուրս իւր։ Իմաստ. Զ. 12—15։

Կենդանի եմ ես ասէ ադօնայի

Պատուական է ամենեքէն համար։

Լուսաւոր և անթառամելի է իմաստութիւն. և հեշտ կըերևի իւրան սիրողներին՝ և իւր խնդրողներին կըգտանվի։ Իւրան ցանկացողներին կըհասանի, որ առաջուց ճանաչէն նորան։ Ով որ շուտով դէպ՚ի նորան գնայ՝ չի վաստակիլ (*)։ որ մանկըգայ կըգտանայ նորան իւր դռան մօտ։ Իմաստ. Զ. 12—15։

Ես կենդանի եմ ասում է ադօնայն

(*) Յեղարին

նայի Տէր․ ո՛չ կամիմ զմահ ամբարշտին․ որպէս զդառնալ ամբարշտին ՚ի չար ճանապարհէ իւրմէ՝ և կեալ․ դառնալով դարձարո՛ւք ՚ի ճանապարհաց ձերոց չարաց՝ և ընդէ՞ր մեռանիք տո՛ւն Իսրայելի․ Եզեկ․ լգ․ 11․

(Աստուած) ո՛չ կամի եթէ ոք կորիցէ, այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն․ Բ․ Պետ․ Գ․ 9․

Զամենայն, զոր տայ ինձ հայր, առ իս եկեսցէ, և որ գայ առ իս, ո՛չ հանից արտաքս․ Յօհ․ Զ․ 37․

Ահաւասիկ կամ ես առ դուրս քո՝ և բաղխեմ․ եթէ ոք լուիցէ ձայնի իմում․ և բանայցէ զդրունսն, մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա․ և նա ընդ իս․ Յայտ․ Գ․ 20․

Այս ինքն է դատաստան․ զի

Լոյս

Ադօնայի (*) տէրն․ չեմ կամենում ամբարիշտ մարդոյ մահն, ինչպէս ամբարշտին յետ դառնալը իւրան չար ճանապարհիցն՝ և ապրիլը․ ետ դառէք՝ ետ դառէք ձեր չար ճանապարհներիցն․ ինչո՞ւ համար էք մեռնում ով Իսրայէլի ազգ․ Եզեկ․ լգ․ 11․

(Ա․ծ) չի՛ կամենում, որ մինն էլ կորչի․ բայց որ ամեն մարդ էլ ապաշխարութեան հասնի․ Բ․ Պետ․ Գ․ 9․

Ամէն ինչ որ հայրն ինձ տալիս է․ ինձ մօտ կըգայ, և ով որ կըգայ ինձ մօտ, նորան չե՛մ դուրս հանիլ․ Յօհ․ Զ․ 37․

Ահա ես կայնումեմ քո դրանըդ՝ և թակումեմ․ թէ մինն լսի իմ ձայնս, և դուռները բաց անի, կըմտնեմ նորան մօտ՝ և կըճաշակեմ նորան հետ՝ և նա ինձ հետ․ Յայտ․ Գ․ 20․

Հենց էս է դատաստանն․

որ

---

(*) Ադոնայ Տէր Ած․

լոյս եկն յաշխարհ՝ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամ՟ որ զչար գործէ՝ ատեայ զլոյս. եւ ո՛չ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա։ Որ հաւատայ յՈրդի՝ ընդունի զկեանս յաւիտենականս. եւ որ ոչն հնազանդի Որդւոյ՝ ո՛չ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Այ՟ մնայ ՚ի վր՟ նր՟։ Յով. գ. 19 30. 36։

որ լոյս եկաւ աշխարհս. եւ մարդիկ խաւարն աւելի սիրեցին քանց լոյսն, պատճառը որ իւրանց գործքերն չար էին. Ինչու որ ամեն մարդ որ չար է գործում՝ լոյսն ատում է. եւ չի՛ գալ լոյսի մօտ. որ իւրան գործքերն յայտնի չի լինին։ Ո՛վ որ որդուն կըհաւատայ՝ յաւիտենական կեանքը կընդունի, եւ ո՛վ որ որդուն չի՛ հնազանդիլ՝ չի՛ տեսնիլ կեանքը. բայց Այ՟ բարկութին կըմնայ նորա վր՟։ Յով. գ. 19 20. 36։

---

Սովորել լինել աղօթելոյ։

Կարդասցես առ իս յաւուր նեղութեան քոյ՝ ես փրկեցից զքեզ. եւ դու փառաւորեսցես զիս։ Սաղմ. Խթ. 15.

Խնդրեցէ՛ք. եւ տացի ձեզ։ Հայցեցէ՛ք եւ գտջիք. բաղխեցէ՛ք եւ բացցի ձեզ։ Զի ամ՟ որ խնդրէ, առնու. եւ որ հայցէ, գտանէ. եւ որ

բաղխէ

---

Կանչել աղօթել։

Որ նեղութեան օրն կըկանչես դիպի ինձ՝ ես կըփրկեմ քեզ. եւ դու կըփառաւորես ինձ։ Սաղմ։ Խթ. 15։

Խնդրեցէ՛ք. եւ կըտրուի ձեզ։ պտռեցէ՛ք եւ կըգտանաք. (դուռն) թակեցէ՛ք եւ կըբացուի ձեզ։ Պատճառը որ ամեն ով որ խընդրում է

րումէ

բաղխել, բացցի ձեզ։ Արդ եթէ դուք՝ որք չարքդ էք գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՛րչափ ևս առաւել Հայրն ձեր՝ որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ՝ որք խնդրեն զնա։ Մատ. Է. 7. 8. 11.

Մերձ է Տէր առ ամենեսեան՝ ոյք կարդան առ նա, առ ամենեսեան ոյք կարդան առ նա ճշմարտութեամբ։ Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր. աղօթից նոցա լսէ՝ և կեցուցանէ զնս̃։ Սաղմ. Ճխդ. 18. 19.

Այս է համարձակութիւն՝ զոր ունիմք մեք առ նա. զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ։ Ա. Յոհ. Ե. 14.

Եթէ ոք 'ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱՅ, որ տայ ամ̃ի առատապէս՝ և ոչ նախատէ

րում, առնում. և որ պտռում, գտնում. և որ (դուռն) Թակում կըբացվի նորան։ Հիմիկ եթէ դուք՝ որ չար էք՝ գիտումէք բարի պարգևներ տալ ձեր որդիքներին. Որչափ էլ աւելի ձեր Հայրն՝ որ երկընքումն է՝ բարի (պարգևներ) կըտայ նորանց՝ որ խնդրեն նորան։ Մատ. Է. 7. 8. 11.

Տէրն մօտիկ է ամենքին՝ որ կանչումեն դէպ նորան. ամենքին որ ճշմարտութով կանչումեն դէպ նորան։ Իւրանից վախողներրի կամքն կանէ Տէրն, նորանց աղօթքին կըլսէ՝ և կապրացնէ նորանց։ Սաղմ. Ճխդ. 18. 19.

Այս է մեր համարձակութին՝ որ մենք նորան մօտ ունենք. պատճառը ինչ որ նորա կամքին պէս աղաչենք՝ կըլսէ մեզ։ Ա. Յոհ. Ե 14.

Եթէ որ ձեզանից միննն պակաս լինի իմաստութենից՝ պիտի խնդրէ ա̃ծանից, որ էվելով կըտայ ամէն մարդոյ՝ և

խատէ. և տացի նմա: Բայց խնդրեսցէ հաւատովք՝ և մի՛ երկմտեսցէ. զի որ երկմիտն է՝ նման է հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու: Մի՛ ակնկալցի մարդն այն առնուլ ինչ յՏ՜ն: Յակօբ. ա. 5—7.

Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յՈրդի: Եթէ զոր ինչ խնդրիցէք յինէն՝ արարից զայն: Յօհ. ժդ. 13. 14:

Խնդրէք՝ և ոչ առնուք՝ վասն զի չարաչար խնդրէք. զի անդէն ՚ի ցանկութիւնս ձեր մաշիջիք: Յակօբ. դ. 3:

Զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք և հաւատայցէք թէ առնուցուք՝ եղիցի ձեզ: Մարկ. ժա. 24:

Հոգին ՚ի թիկունս հասա-

նէ

և չի նախատինք տալ. և կտոռվլի նորան: Միայն որ հաւատով պիտի խնդրէ, և երկմիտ չի՛ դառնայ. նորան համար ով որ երկու մտքի է՝ քամով վերկացած և սաստիկ շարժված ծովի ալիքներին (*) նման է: Յոյս չունենայ էն մարդն՝ Տէրանից մին բան առնել: Յակ. ա. 5—7:

Ինչ որ խնդրէք իմ անունովս, կանեմ էն, որ փառաւորվի Հայրն որդովն: Թէ ինչ որ խնդրէք ինձանից՝ էն կանեմ: Յօհ. ժդ. 13. 14:

Խնդրում էք՝ և չէ՛ք առնում՝ պատճառը որ չար կերպով էք խնդրում. որ ձեր ցանկութիւների մէջ կըմաշվիք: Յակ. դ. 3:

Ամեն բանի համար որ աղօթք անելով խնդրէք և հաւատաք թէ կառնէք, կըլինի ձեզ: Մարկ. ժա. 24:

Հոգին թև թիկունք (Ներ-

ՆԵՐՑ

(*) ԹԱԼՂԱՆԵՐԻՆ

նէ տկարութեան մերում. զի զոր կամքն յաղօթս՝ ո՟պ արժանն իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս ։ Հռոմ. Ը՟. 26 ։

---

### Տէրունական աղօթք ։

Եւ եղեւ ՚ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս եւ իբրեւ դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց ։ Տէ՛ր, ուսո՛ մեզ յաղօթս կալ. ո՟պ եւ Յօհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց ։ Ասէ ցնոսա ։ յորժամ կայցէք յաղօթս ասասջիք ։ Ղուկ. ԺԱ՟. 1. 2 ։

Հայր մեր՝ որ յերկինս ես. սուրբ եղիցի՛ անուն քո՛. Եկեսցէ՛ արքայութի՛ւն քո. եղիցի՛ն կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր ։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր՝ որպէս եւ մեք

թողումք

նելը) կըհասնի մեր տկարութեան. պատճառն ինչ բանի համար որ աղօթք ենք անում, ինչպէս որ արժանն է չենք գիտում, բայց ինքը Հոգին բարեխօս է լինում անպատմելի թառանչներումն ։ Հռոմ. Ը՟. 26 ։

---

### Տէրէն աղօթքը ։

Եւ էլաւ որ աղօթք էր անում, երբ որ պրծաւ, իւրան աշակերտներիցն մինը ասեց նորան՝ Տէ՛ր սովորցրու մեզ աղօթք անել. ինչպէս որ Յօհաննէսն էլ սովորցրուց իւրան աշակերտներին, ասեց նորանց երբ որ աղօթք անելու լինիք՝ ասացէ՛ք ։ Ղուկ. ԺԱ՟ 1. 2 ։

Մեր հայր որ երկնքումն ես, ս՟բ լինի՛ քո անունդ ։ Գա՛յ քո արքայութիւնդ. քո կամքդ լինի՛ ինչպէս երկնքումն, էնպէս էլ երկրիս վերայ ։ Մեր ամեն օրվան հացը տո՛ւր մեզ էս օր ։ Եւ մեր պարտքը թո՛ղ մեզ՝

ինչպէս

Թողումք մերոց պարտապա-
նաց։ Եւ մի՛ տանիր զմեզ
՚ի փորձութիւն. այլ փրր-
կեա՛ զմեզ ՚ի չարէ. զի քո
է արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս. Ամէն։
Մատթ. Զ. 9—13։

ինչպէս մենք ալ թողնու-
մենք մեր պարտականներուն։
Եւ մեզ փորձանքի մէջ մի՛
տանիր. բայց փրկէ՛ր մեզ
չարիցն. պատճառը որ քո է
արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս. Ամէն։
Մատթ. Զ. 9—13։

---

Հայր մեր որ յերկինս ես։

Մեզ մի է Աստուած Հայր՝
յորմէ ամենայն, և մեք ՚ի նա։
և մի Տէր Յիսուս Քրիս-
տոս, որով ամենայն, և մեք նո-
վաւ։ Ա. Կորնթ. Ը. 6։

Հայր մեր որ երկինքներումն ես։

Մեզ մին է Աստուած Հայրն՝
որ նորանից ամեն բան և
մենք նորանումն։ Եւ մին
Տէր Յիսուս Քրիստոս, որ նորանով
ամեն բան, և մենք նորանով։
Ա. Կորնթ. Ը. 6։

Որք հոգւովն Աստուծոյ վարին՝
նոքա են որդիք Աստուծոյ։ Զի ոչ
առէք զհոգին ծառայ-
ութեան միւսանգամ յերկիւղ.
այլ առէք զհոգին որդեգր-
րութեան, որով աղաղակեմք
Աբբայ (Հայր)։ Հռոմ.
Ը. 14 15։

Նորանք որ Աստուծոյ Հոգւովն
կրգնան, նորանք են Աստուծոյ որ-
դիք. պատճառը որ ծառայ-
ութեան Հոգին չի առիք որ մին
ել վախէք, բայց որդի գըր-
վելոյ հոգին առիք, որ նո-
րանով կանչումենք Աբբայ
(Հայր)։ Հռոմ. Ը. 14. 15։

Տէր յերկինս պատրաստեաց
զաթոռ իւր. արքայութիւն
նորա ամենեցուն տիրէ։
Սաղմ. ՃԲ. 19։

Տէրն իւր աթոռը երկին-
քումն պատրաստեց. նո-
րան թագաւորութիւն ամեն-
ների վերայ տիրումէ։ Սաղմ.
ՃԲ. 19։

Սիոն ասաց. եթող զիս Տէր. եւ մոռացաւ զիս Աստուած։ Միթէ մոռանայցէ՞ կին զմանուկ իւր. կամ ո՞չ գըթասցի ՚ի ծնունդս որովայնի իւրոյ։ Այլ եթէ մոռանայցէ զայս կին, սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ Տէր։ Ահաւասիկ ՚ի վերայ ձեռաց իմոց նկարեցի զըպարիսպս քո. եւ առաջի իմ ես դու յամենայն ժամ։ Եսայ. խթ. 14—16։

Սիոնն (*) ասեց՝ Տէրն ինձ բաց թողեց՝ և Աստուած ինձ մոռացաւ. կըլլի՞ որ մին կնիկ իւրան մանուկը մոռանայ. կամ թէ չի՞ ողորմիլ իւրան փորից ծնվածներին։ Թէ էլ որ էս կնիկըն մոռանայ, բայց ես չե՛մ մոռանալ քեզ, տէ՛րն ասումէ։ Ահա՛ քո պարիսպներիդ ձևն իմ ձեռներիս վերայ քաշեցի։ և դու ամեն ժամանակ իմ առաջիս ես։ Եսայ. խթ. 14—16։

---

Սուրբ եղիցի՝ անուն քո։

Մի՛ մեզ Տէր՝ մի՛ մեզ. այլ անուան քում տո՛ւր զփառս։ վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ։ Սաղմ. ճժգ. 1. 2.

Եղիցի՝ անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարեւ է անուն նորա. ՚ի նա օրհնեսցին ամենայն

ազգք

Սուրբ լինի՝ քո անունդ։

Ո՛չ մեզ Տէր՝ ո՛չ մեզ. բայց քո անունիդ փառք տո՛ւր. քո ողորմութեդ և ճշմարտութեդ համար։ Սաղմ. ճժգ. 1. 2։

Տէրի անունն օրհնված լինի՞ յաւիտեան. ինչու որ նորա անունն առաջ է քան զարևն. նորանում պիտի օրհն-

վին

---

(*) Երուսաղէմի մէջն մին սար, որ նորանով էլ կնշանակէ Աստուծոյ ժողովրդեան հաւատացեալ ժողովուրդն։

ազգք երկրի. և ամ̃ ազինք երանիցեն նմա։ Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի՝ որ առնէ զսքանչելիս միայն. և օրհնեալ է անուն ս̃բ փառաց նորա յաւիտեան. լցցի՛ փառօք նորա ամենայն երկիր. եղիցի՛ եղիցի՛։ Սաղմ. հա. 17—19։

վրին երկրի ամեն ազգերն. և ամեն ազգերն պիտի երանի տան նորան։ Օրհնված Տ̃ր Ա̃ծ Ի̃ելի, որ մենակ հրաշք է անում. և օրհնված է միշտ նորա փառքի ս̃բ անունն. նորա փառքովն կըլցվի ամեն երկիր. լինի՛ լինի՛։ Սաղմ. հա. 17—19։

Բանն Քրիստոսի բնակեսցի՛ ՚ի ձեզ առատապէս, ամ̃ իմաստութեամբ, ուսուցանել և խրատել զմիմեանս. սաղմոսիւք և օրհնու̃թբք. և երգօք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել ՚ի սիրտս ձեր զԱստուած։ Կողոս. գ. 16։

Ք̃ի խօսքն պիտի քեզանում բնակվի՛ շատու̃թով, ամեն իմաստու̃թով, և որ մինը մինին սովորցնէ և խրատէ. (և որ) սաղմոսներով և օրհնու̃թով և հոգևոր երգերով և շնորհքով օրհնէ՛ք Ա̃ծը ձեր սրտներումն։ Կողոս. գ. 16։

Նոյնպէս լուսաւորեսցէ՛ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս՝ և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է։ Մատթ. ե. 16։

Ձեր լոյսն պիտի լուսաւորէ մարդկանց առաջին. որ կըտեսնեն ձեր բարի գործքերը, և կըփառաւորեն ձեր հայրը՝ որ երկնքումն է։ Մատթ. ե. 16։

Որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես։ (Զի ա-

Դու որ օրէնքով պարծենումես՝ օրէնքն չի՛ պահելով, Աստուծուն անարգու-

նուն

մես ։

նուն Այ վասն ձեր հայհոյի 'ի մէջ հեթանոսաց՝ որպէս և գրեալ է.) Հռով. Բ. 23. 24.

Յայտնի եղէ այնոցիկ՝ որք զինէն ոչ հարցանէին, գտայ այնոցիկ՝ որք զիս ոչ խնդրէին. ասացից, ահաւասիկ եմ, ցազգն ցայն՝ որք զանուն իմ ոչ կարդացին. Եսայ. ԿԵ. 1.

---

[illegible]

Ամպաշխարհեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից: Մատ. Գ. 2.

Ո՛չ է արքայութիւն Այ կերակուր և ըմպելի. այլ արդարութիւն, և խնդութիւն, և խաղաղութիւն 'ի Հոգի Սբ. Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Այ՝ և ընտիր մարդկան. Հռով ԺԴ. 17. 18.

Ո՛չ գայ արքայութիւն Այ խորհրդով

մեր. (պատճառը որ Այ անունն ձեզ համար հեթանոսների մէջն հայհոյվում, ինչպէս որ գրված է. Հռով. Բ. 23. 24.

Յայտնի եղայ նորանց՝ որ ինձանից չէին հարցնում. գտնվայ նորանց՝ որ ինձ չէին խնդրում. հրէս էստեղ եմ, կասեմ էն ազգին՝ որ իմ անունս չի կանչեցին. Եսայ. ԿԵ. 1.

---

[illegible]

Ապաշխարհեցէ՛ք՝ պատճառը որ մօտացել է երկնքի արքայութիւնն. Մատ. Գ. 2.

Այ արքայութիւնն ուտելիք և խմելիք չէ՛. բայց արդարութիւն է, ուրախութիւն, և խաղաղութիւն Սբ հոգւովն. Պատճառն ով որ սորանում ծառայում Քին, ընդունելի է Այ՝ և մարդկանցից ընտրված. Հռով. ԺԴ. 17. 18.

Այ արքայութիւնն դրսի նշաններով

րանօք ։ Ո՞չ չասիցեն, թէ ահաւասիկ աստ է՝ կամ անդ․ զի ահա արքայութիւն այ՝ 'ի ներքս 'ի ձեզ է ։ Ղուկ․ ԺԷ․ 20․ 21 ։

ներով չի՞ գալ ։ Ո՞չ չեն ասիլ, թէ է՛ս է էստեղ է՝ կամ էնտեղ ։ պատճառը որ ահա աստուծոյ արքայութիւնն ներսումն ձեզանում է ։ Ղուկաս․ ԺԷ․ 20․ 21․

Մտէ՛ք ընդ նեղ դուռն՝ քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ, և բազումք են՝ որք մտանեն ընդ նա ։ Քանզի անձուկ է դուռն, և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս․ և սակաւք են՝ որք գտանեն զնա ։ Մատ․ Է․ 13․ 14 ։

Նեղ դուռնովն ներս մտէք՝ պատճառը որ արձակ է դուռն՝ և լայն ճանապարհն՝ որ կորուստի մէջն է տանում, և շատ են որ մտնումեն նորանով ։ Պատճառը որ անձուկ (*) է դուռն, և նեղ է ճանապարհն՝ որ տանումէ կեանքի մէջն․ և քիչ են նորանք որ գտանումեն նորան․ Մատ․ Է․ 13․ 14 ։

Բազում նեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւն այ ։ Գործ․ ԺԴ․ 21 ։

Շատ նեղութիւներով պէտքէ մեզ մտնել այ արքայութեն մէջն ։ Գործ․ ԺԴ․ 21 ։

Եթէ ոչ գիտէ՞ք զի անիրաւք զարքայութիւն Այ ոչ ժառանգեն․ մի՛ խաբիք․ ոչ պոռնիկք, ոչ կռապա-

ռիշտք

Չէ՞ք գիտում՝ որ անիրաւներն այ արքայութիւնը չեն ժառանգիլ․ մի՛ խաբվիք՝ որ ոչ պոռնիկներն

ոչ

(*) նեղն

րնչողք, ոչ շունք ոչ իգա-
ցեալք, ոչ արուագէտք, ոչ
գողք, ոչ ագահք, ոչ ար-
բեցողք, ոչ բամբասողք,
և ոչ յափշտակողք զարքա-
յութիւնն Այ ժառանգեն:
ա. Կորն. Զ. 9. 10:

ոչ կռապաշտները, ոչ շը-
նացողները, ոչ ցանկութով
էգի պէս դառածները, ոչ
որձն որձի հետ խառնվող-
ները, ոչ գողերը, ոչ ա-
գահները (*) ոչ բամբա-
սողները, և ոչ յափշտակող-
ները Այ արքայութիւնը չեն
ժառանգիլ: ա. Կորն. Զ.
9. 10:

Այլ և մնայ ինձ արդա-
րութեան պսակն, զոր հա-
տուսցէ ինձ Տէր յաւուր
յայնմիկ արդար դատա-
ւորն. և ոչ միայն ինձ, այլ
և ամենեցուն, որք սիրեցին
զյայտնութիւն նորա: Փրկես-
ցէ զիս Տէր յամենայն գոր-
ծոց չարաց. և զերծուսցէ
զիս յարքայութիւն իւր՝ որ
յերկինս է որում փառք
յաւիտեանս յաւիտենից:
Ամէն, Բ. Տիմ. Դ. 8. 18:

Այլ և մնումէ ինձ արդա-
րութէ թագն որ պիտի էն
օրն տայ ինձ Տէրն արդար
դատաւորն. չէ՛ թէ մենակ
ինձ, բայց ամեն մարդոյ էլ
որ սիրեցին նորա յայտն-
վիլը: Տէրն կփրկէ ինձ
ամեն չար գործքերից, և
կըտանէ ինձ իւրան արքայ-
ութին՝ որ երկնքումն է:
նորան փառք յաւիտեանս
յաւիտենից: Ամէն. Բ.
Տիմ. Դ. 8. 18.

Եղև թագաւորութիւն ա-
մենայն տիեզերաց Տեառն
մերոյ՝ և Քրիստոսի իւրոյ.
թագաւորեսցէ ՚ի վերայ
ամի յաւիտեանս յաւիտե-
նից

Եղաւ մեր Տէրին և իւր
Քրիստոսին բոլոր աշխարհքիս
թագաւորութիւն. և պիտի
թագաւորէ ամեններին վե-
րայ յաւիտեանս յաւիտե-
նից

(*) Ընչասէրները )

էջ ։ Ամ̃ն ։ Յովհ․ ժե̃․ 15 ։

նից Ամ̃ն ։ Յովհ․ ժե̃․ 15 ։

---

## ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ ՈՐՊ̃ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԿՐԻ ։

(Աստուած) զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ՚ի գիտութիւն ճշմարտութե̃ն եկեսցեն ։ Ա̃․ Տիմ․ Բ̃․ 4 ։

Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեաց զիս զի զամենայն, զոր ետ ցիս Հայր, ո՛չ կորուսից ՚ի նմանէ․ այլ յարուցից զնա յաւուրն յետնում ։ Յովհ․ Զ̃․ 39․ 40․

Այսեն կամքն Աստուծոյ, սրբութիւն ձեր ։ Ա̃․ Թես․ Դ̃․ 3 ։

Աստուած խաղաղութեան, որ եհան ՚ի մեռելոց ըզհովիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենականի ուխտին զՏէր մեր Յիսուս Քրիստոս ։ Հաստատեսցէ զձեզ ՚ի գործս բարութե̃՝ առնել զկամս նորա եւ արասցէ ՚ի մեզ զհաճոյսն առաջի իւր ՚ի ձեռն Յ̃ի

Ք̃ի

## ՔՈ ԿԱՄՔԴ ԼԻՆԻ՛ ԻՆՉՊԷՍ ԵՐԿԻՆՔՈՒՄՆ ԻՆՉՊԷՍ ԷԼ ԵՐԿՐԻՍ ՎՐ̃Ա ։

(Աստուած) կամենումէ որ ամեն մարդիկ ապրեն, և ճշմարտութե̃ն գիտելոյ հասնեն ։ Ա̃․ Տիմ․ Բ̃․ 4․

Այս է իմ Հօր կամքն, որ ինձ ուղարկեց որ ամեն ինչ որ Հայրն ինձ տուաւ՝ նորանից չի կորցնեմ, բայց վերկացնեմ նորան ետի օրումն ։ Յովհ․ Զ̃․ 39․ 40․

Այս է ա̃յ կամքն, ձեր սրբվիլը ։ Ա̃․ Թես․ Դ̃․ 3 ։

Խաղաղութե̃ն ա̃ծն որ յաւիտենական պայմանադրութե̃ն արիւնովն մեռածների մէջիցն հանեց մեծ հովիւն մեր Տ̃ր Յ̃ս Ք̃սն, Նա հաստատ պահէ ձեզ բարի գործքերի մէջ, որ նորա կամքը անէք, և նա էլ անէ մեր մէջն, ինչ որ ընդունելի է իւրան առաջին Յիսուսի

Ք̃ի

Քի․ որում փառք յաւիտեանս ։ Ամէն ։ Եբր․ ժգ․ 20․ 21։

Պիտոյ է ձեզ համբերութեն․ զի զկամս Այ արարեալ հասջիք աւետեացն ։ Եբր․ Ժ․ 36․

Այսուհետեւ եւ մեք՝ որք այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութին վկայից, զհպարտութին զամ ՚ի բաց ընկեսցուք, եւ զմեղսն կարեւորս, համբերութբ ընթասցուք ՚ի պատերազմին՝ որ առաջի կայ մեզ։ Հայեսցուք ՚ի զօրագլուխն հաւատոյ, եւ ՚ի կատարիչն Յս․ որ փոխանակ մխիթարութեանն, որ նմա առաջի կայր՝ յանձն եառ զխաչ։ արհամարհեաց զամօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Այ։ Ա՛ղէ ածէ՛ք զմտաւ, որ զայնպիսի համբերութին ՚ի մեղաւորաց հակառակութե անձին կրեաց․ զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք՝ եւ լքանիցիք։ Եբր․ ժբ․ 1—3։



Քի ձեռքովն, նորան փառք յաւիտեանս ։ Ամէն ։ Եբր․ ժգ․ 20․ 21։

Ձեր համբերութեն պէտք է որ Այ կամքն անէք եւ հասնէք բարի խոստմունքին ։ Եբր․ Ժ․ 36։

Հիմիկաց եմն՝ մենք որ էսչափ մեր չորս կողմովն պատած շատ վկաներ ունենք, ամեն հպարտութինը, եւ սովորված մեղքերը դուրս ձգենք ։ համբերութենով վազենք դէպի կռիւն, որ մեր առաջին կայ։ Նայենք հաւատքի գլխաւորին, եւ կատարողին Յին․ որ մխիթարութեան տեղ, որ նորա առաջին կար, յանձն առաւ խաչըն․ ամօթն ոչինչ համարեց, նստեց Այ աթոռի աջ կողմին։ Տէ՛ հիմիկ մտածեցէ՛ք նորան, որ էնպէս համբերութիւն քաշեց մեղաւորների հակառակութենիցըն․ որ չի՛ աշխատվիք ձեր անձներովն եւ թուլանաք ։ Եբր․ ժբ․ 1—3։

Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր:

Ամենեքեան քեզ սպասեն. և դու տաս կերակուր նոցա ի ժամու: Տաս դու նոցա և կերակրին. բանաս ըզձեռն քո. կերակրես զամենեսեան կամօք քովք: Սաղ. ՃԳ. 27. 28

Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո մինչև դարձցիս յերկիր, ուստի առար: Ծննդ. Գ. 19:

Մի՛ հոգայցեք, և ասիցեք. զի՞նչ կերիցուք. կամ զի՞նչ արբցուք. կամ զի՞նչ զգեցցուք: Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն, քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն: Մատ. Զ. 31. 32:

Շահավաճառ մեծ՝ ածպաշտութիւն է բաւականութ̄ հանդերձ: Զի ոչ ինչ բերաք յաշխարհ՝ և ոչ հանել ինչ կարասցուք:

Նօմ

Մեր ամէն օրուան հացը տո՛ւր մեզ էսօր:

Ամենքն քեզ են մտիկ տալիս. և դու կերակուր ես տալիս նորանց (իւր) ժամանակին: Տալիս ես դու նորանց և կերակրվումեն. բաց ես անում քո ձեռքդ. կերակրում ես ամենին քո կամքովդ: Սաղմ. ՃԳ. 27. 28:

Քո երեսիդ քրտնքովն պիտի ուտես քո հացն մինչև երկիր դառնաս, ինչտեղից որ գոյացել ես: Ծնն. Գ. 19:

Հոգսը չի քաշեք, և ասեք. ի՞նչ պիտի ուտենք, կամ ի՞նչ պիտի խմենք՝ կամ ի՞նչ պիտի հագնենք. որ էդ ամենն հեթանոսներն են խնդրում. պատճառը որ՝ ձեր երկնաւոր Հայրն գիտումէ՝ որ էդ ամենն ձեզ պէ՛տք է: Մատ. Զ. 31. 32:

Մեծ շահ բերող է ած պաշտութին բաւական լինելով: Պատճառը որ՝ ոչինչ չենք բերել էս աշխարհքս՝ և ոչինչ կարող չենք տանիլ:

Բայց

Այլ ունիմք զկերակուր և հանդերձս, և այնու շատասցուք։ ա. Տիմ. զ. 6—8։

Եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք, եթէ զի՛նչ և առնիցէք. զամ ինչ ՚ի փառս Աստուծոյ արասջի՛ք։ ա. Կորն. ժ. 31։

Գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ այլ ամ բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ Այ. Մատ. դ. 4։

Խնդրեցէ՛ք նախ զարքայութիւն Աստուծոյ՝ և զարդարութիւն նորա՝ և այդ ամ յաւելցի ձեզ։ Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուին, զի վաղիւն վասն իւր հոգասցէ. շատ է աւուրն չար իւր։ Մատ. զ. 33. 34։

Երթա՛յք, գործեցէ՛ք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ՚ի կեանսն յաւիտենականս՝ զոր Որդին մարդոյ տացէ ձեզ

ձեզ

Բայց եթէ ունենք կերակուր և շորեր, նորանցմով էլ հերիքանանք. Տիմ. զ. 6—8։

Եթէ ուտէք՝ եթէ խմէք, եթէ ինչ որ անէք. ամէնն աստուծոյ փառքի համար պիտի անէք։ ա. Կորն. ժ. 31։

Գրված է՝ թէ մենակ հացով չի՛ ապրիլ մարդ, բայց ամէն խօսքովն, որ Այ բերանից դուրս է գալիս. Մատ. դ. 4։

Առաջ Այ արքայութիւնը խնդրեցէ՛ք, և նորա արդարութիւնը. և էդ ամէնն էլ կաւելանայ ձեզ. Էիմիկուց ետն հոգսը չի՛քաշէք էգուցվան օրին համար, պատճառն որ՝ էգուցն իւրան համար կըհոգայ ([illegible]) օրի չարն իւրան բաւական է։ Մատ. զ. 33. 34։

Գնացէ՛ք շինեցէ՛ք չի կորչելու կերակուրը, բայց էն կերակուրը, որ կըմնայ յաւիտենական կեանքումն, էն՝ որ մարդոյ որդին ձեզ

կըտայ

ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Ա̃Ծ: Յօհ. Զ. 27:

———

Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց:

Զյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ 'ի միտ. 'ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս Տէր, Սաղ. ԺԸ. 13.

Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց. և զա̃մ անօրէնութիւնս իմ ջնջեա՛ յինէն: Սաղ. Ծ. 11:

Որդեա՛կք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Հ̃Ր զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատն: Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. և ո՛չ եթէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի՝ Ա̃. Յօհ. Բ. 1. 2.

Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա՝ թողցէ և ձեզ

կըտայ. պատճառը որ՝ Հայրըն նորան կնքեց (*) Աստուածն: Յօհ. Զ. 27.

———

Եւ մեր պարտքը թո՛ղ մեզ, ինչպէս որ մենք էլ թողում ենք մեր պարտապաններին:

Ո՛վ կարէ միտքը բերել իւրան մեղքերը. իմ ծածուկներիցը ինձ մա̃ք արա Տէ՛ր: Սաղ. ԺԸ. 13:

Քո երեսդ ե՛տ դարձրու իմ մեղքերիցս. և իմ ամեն անօրէնութիւնները ջնջի՛ր ինձանից: Սաղ. Ծ. 11:

Ի՛մ որդիք, էս գրում եմ ձեզ՝ որ մեղք չի՛ գործէք. և թէ որ մինն մեղք գործի՝ բարեխօս ունենք Հ̃ր մօտ Յ̃Ն Ք̃Ը՝ արդարը և անարատը՝ և նա է մեր մեղքերի քաւութի̃ն: և չէ՛ թէ մենակ մերին՝ բայց ամեն աշխարհքի (մարդերին) համար: Ա̃. Յօհ. Բ. 1. 2:

Թէ որ մարդկանց կըթողնէք նորանց մեղքերը՝ ձեր երկնաւոր

(*) Հաստատեց

ձեզ Հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր։ Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Մտթ. Զ. 14. 15։

Մատուցեալ առ նա Պետրոս՝ և ասէ. Տէ՛ր քանիցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչ ցեօթն անգամ։ Ասէ ցնա Յս. ոչ ասեմ քեզ՝ թէ մինչև ցեօթն անգամ. այլ մինչև ցեօթանասնեկին եօթն։ Մտթ. ԺԸ. 21. 22։

երկնաւոր Հայրն էլ ձեր մեղքերը կը թողնէ ձեզ. բայց թէ որ չէ՛ք թողնիլ մարդկանց նորանց մեղքերը՝ ձեր երկնաւոր Հայրն էլ ձեր մեղքերը չի՛ թողնիլ։ Մտթ. Զ. 14. 15։

Պետրոսն եկաւ նորա մօտ և ասեց. Տէ՛ր քանի՞ անգամ թէ որ մեղք գործի ինձ իմ եղբայրն, և նորան թողուն տամ. մինչև եօ՞թն անգամ։ Յս ասեց նորան, չե՛մ ասում քեզ. մինչև եօթըն անգամ. բայց մինչև եօթանասուն անգամ եօթն։ Մտթ. ԺԸ. 21. 22։

---

## ԺԱ. Ի՛ ՓՈՐՁՍ ՄԵՐ ԶԻ ՀԱՄԲԵՐԵՍՑՈՒՔ։

Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Տէր։ Մի՛ ոք որ ՚ի փորձութեան իցէ, ասասցէ՝ թէ յԱյ փորձիմ. զի Ած անփորձ

## ԺԱ. ՄԵՐ ՓՈՐՁԱՆՔԻ ՄԷՋ Ի՛ ԱՆԵՆՔ։

Երանի է՛ն մարդին՝ որ փորձանքի կը համբերէ. պատճառը՝ թէ որ էլ ընտըրված գտանվի, կեանքի թագը կառնէ, որ Տէրն խոստացել է իւրան սիրածներին։ Ոչ ով որ փորձանքի մէջ լինի՝ չի ասի թէ Ածա-

նից

փորձ է չարաց ։ փորձէ նա և ոչ զոք ։ իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոց ցանկութեանց ձգեալ և պատրեալ ։ Ապա այսուհետև ցանկութիւն յղացեալ՝ զմեղս ծնանի ։ և մեղքն կատարեալ զմահ ծընանի ։ Յակ. ա. 12—15 ։

Սի՛րելիք մի՛ օտարոտի համարել զեռանդն ինչ՝ որ ՚ի փորձութեան ձեզ լինիցի, որպէս թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին ։ Այլ իբրև հաղորդեալք Ք՛ի չարչարանացն, ուրախ լինիջիք՝ զի և ՚ի յայտնութեան փառաց նորա ցնծացեալք ցնծասջիք ։ ա. Պետ. դ. 12. 13 ։

Փորձութիւն ՚ի ձեր վերայ ոչ է եկեալ բայց ՚ի մարդկանէ ։ այլ հաւատարիմ է Ա՛ծ՝ որ ոչ արկցէ զձեզ ՚ի փորձութիւն առաւել քան զկար ձեր ։ այլ արասցէ ընդ փորձութեան

և

Նիցն եմ փորձվում ։ Նորա համար որ Ա՛ծ անփորձ է չարից ։ նա ոչ մէկ մարդ չէ՛ փորձիլ ։ ամեն մարդ իւրան ցանկութիւնիցն քաշված և խաբված կը փորձվի ։ Ուրեմն հիմիկաց եան ցանկութիւն որ յղանայ՝ մեղքը կըծնէ, և մեղքն որ կատարվի մահ կըծնէ ։ Յակ. ա. 12—15 ։

Սի՛րելիք՝ օտար չէ՛ համարէք էն տաքութիւն, որ փորձութեան մէջ լինումէ ձեզ՝ ինչպէս թէ մէկ օտար բան ձեզ պատահումէ ։ Բայց ինչպէս Ք՛ի չարչարանքին ընկեր էլածներ, ուրախ կացէք, որ նորան փառքի յայտնվելու ժամանակն դուք էլ կը ցնծաք և կուրախանաք ։ ա. Պետ. դ. 12. 13 ։

Ձեզ վերայ փորձանք չէ՛ եկած, բանց հենց մարդկանցից ։ բայց Ա՛ծ հաւատարիմ է, որ ձեզ փորձանքի մէջ չէ՛ ձգիլ ձեր կարողութիւնիցն աւելի ։ բայց փորձանքի

ձանքի

և զերս՝ զի համբերել կա-
րասջիք: Ա. Կորն. Ժ. 13.
Զի՞ որ յԱյ ծնեալ է՝ յաղ-
թէ աշխարհի. և այս է
յաղթութիւն՝ որ յաղթէ աշ-
խարհի՝ հաւատքն մեր: Ա.
Յովհ. Ե. 4.

Արթո՛ւն կացէք. և աղօ՛թս
արարէք, զի մի՛ անկանի-
ջիք 'ի փորձութիւն. Հոգիս
յօժար է՝ բայց մարմինս
տկար: Մատ. ԻԶ. 41.

ձանքին հետ են մերջը եւ
կանէ՝ որ կարողանաք համ-
բերել: Ա. Կորն. Ժ. 13.
Ամեն ով որ Աստծանից ծնվա-
ծ է՝ յաղթում աշխարհքին.
և էս է յաղթելը՝ որ աշ-
խարհքին յաղթում՝ մեր
հաւատքն, Ա. Յովհ. Ե. 4.
Արթուն կացէք. և աղօթք
արէք, որ փորձանքի մէջ չի
ընկնէք: Հոգին յօժար է
բայց մարմին տկար: Մատ.
ԻԶ. 41.

---

### [illegible]

Արթո՛ւն լերուք՝ և հսկե-
ցէ՛ք, զի ոսոխն ձեր սա-
տանայ իբրև զառիւծ գո-
չէ. շրջի և խնդրէ՝ թէ
զո՛ կլանիցէ. որում 'ի դի-
մի հարկանիցիք հաստա-
տեալք հաւատովք: Ա.
Պետ. Ե. 8. 9.
Որ առնէ զմեղս 'ի սատա-
նայէ է: զի 'ի սկզբանէ
սատանայ մեղանչէ. վասն
այնորիկ յայտնեցաւ որդին
Ած

### [illegible]

Արթուն և աչքաբաց,
կացէք: որ ձեր թշնամին
սատանան առիւծի պէս գո-
ռում է: ման է գալիս և
խնդրում՝ թէ ում կուլ տայ:
Որ նորան դէմ կենաք հաս-
տատված հաւատով: Ա.
Պետ. Ե. 8. 9.
Ով որ մեղք գործէ, սա-
տանայիցն է: պատճառը
որ առաջուց սատանան է
մեղանչում. նորա համար
Ած

Աստուծոյ՝ զի լուծցէ ըզ-
գործս սատանայի ։ ա. Յովհ.
գ. 8 ։

Յաշխարհի աստ զնեղութի
ունիցիք. այլ քաջալերեցա-
րուք. զի ես յաղթեցի աշ-
խարհի ։ Յովհ. ժզ. 33 ։

Հաւատարիմ է Տէր, որ
և հաստատեսցէ զձեզ՝ և
պահեսցէ 'ի չարէ անտի ։ բ.
Թես. գ. 3 ։

Գիտեմ՝ յո՛ հաւատացեալն
եմ, և հաստատեալ եմ,
թէ կարօ՛ղ է զաւանդն իմ
պահել յօրն յայն ։ բ. Տիմ.
ա. 12 ։

Լուայ զձայն մեծ յերկնից՝
որ ասէր ։ արդ եղև զօրու-
թիւն, և փրկութի. և արքայ-
ութի Այ մերոյ. և իշխանութի
օծելոյ նորա. զի անկաւ
չարախօսն եղբարց մերոց.
որ չարախօսէրն զնոցանէ
առաջի Այ 'ի տուէ և 'ի
գիշերի ։ Եւ նոքա յաղթե-
ցին նմա արեամբ գառինն.
և բանիւ վկայութե նորա ։ և
ոչ

Այ որդին յայտնվեց՝ որ
սատանայի գործքերը քան-
դէ ։ ա. Յովհ. գ. 8 ։

Էս աշխարքումս նեղութի
կունենաք. բայց սրտապի՛նդ
կացէք. որ ես յաղթեցի
աշխարհքիս Յովհ. ժզ. 33.

Տէրն հաւատարիմ է, որ
նա ինքն կը հաստատէ ձեզ՝
և կըպահէ չարիցն ։ բ.
Թես. գ. 3 ։

Գիտումեմ՝ ում եմ հաւա-
տացել ։ և հաստատվլած
եմ, թէ նա կարող է պա-
հել իմ աւանդն (*) մինչև
էն օրն ։ բ. Տիմ. ա. 12 ։

Երկնքիցն մեծ ձայն լսեցի՝
որ ասումէր. հիմիկ էլաւ
զօրութին և փրկութին և ար-
քայութին մեր Աստուծուն. և
իշխանութին նորա օծվածին
պատժաւը որ վեր ընկաւ.
մեր եղբարներին չար խօսո-
ղըն, որ չար էր խօսում
նորանցից Այ առաջին ցե-
րեկ և գիշեր ։ Եւ նորանք
յաղթեցին նորան գառի
արիւ-

(*) ամանաթը.

ոչ հաճեցան ընդ վիշապին մինչև 'ի մահ: Յայտ. ժբ. 10. 11.

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս ամէն:

Քո է Տէր մեծութի. և զօրութի. և պարծանք. և յաղթութի. և կարողութի. վասն զի դու ամենեցուն որք են յերկինս և 'ի վր երկրի՝ տիրես. յերեսաց քոց դողան ամ թագաւորք՝ և ազգք. 'Ի քէն է մեծութի և փառք. դու ես ամենեցուն իշխան՝ Տէր. և իշխան ամ իշխանութեց. 'ի ձեռն քում է զօրութի և հաստատութի և 'ի ձեռն քում է ամենակալ մեծութի զօրացուցանել զամ: Եւ արդ Տր՝ գոհանամք զքէն և օրհնեմք զանուն պարծանացդ քոյ: ա. Մնաց. իթ. 11—13:

Ամէն

արիւնովն. և նորա վկայութեան խօսքովն. և չի հաւանեցին վիշապին մինչև մահըն: Յայտ. ժբ. 10. 11.

Որ քո է արքայութիւնն եւ զօրութիւն եւ փառքն յաւիտեանս ամէն:

Տէ՛ր՝ քո է մեծութիւն. և զօրութիւն. և պարծանքն և յաղթութիւն. և կարողութիւնն՝ նորա համար որ դու իշխանութի ես անում ամենքի վերայ որ երկնքումն և երկրիս վերայ կան. քո երեսիցդ դողում են ամեն թագաւորներն և ազգերն: Քեզանից է մեծութիւն և փառքն: Տէ՛ր՝ դու ես ամենքի իշխանն, և ամեն իշխանութիւնների իշխան. քո ձեռքիդ է զօրութի և հաստատութի և քո ձեռքիդ է ամենակալ մեծութի որ ամենը զօրացնես: Եւ հիմիկ Տր՝ քեզանից գոհանումենք, և օրհնումենք քո պարծանքի անունը: ա. Մնաց. իթ. 11—13:

Ամէն

Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութ՟բ․ և օրհնութ՟բ ընդ յարկս նորա ։ խոստովան եղերուք Տեառն՝ և օրհնեցէ՛ք զանուն նորա ։ Սաղմ․ ՂԹ․ 4 ։

Մտէ՛ք նորա դռներովն դաւանութիւնով՝ և նորա սրահըն օրհնութիւնով ․ Յայտնի արէք Տէրն և օրհնեցէ՛ք նորա անունը․ Սաղմ․ ՂԹ․ 4 ։

---

### Ընթերցուածս որ է Գրոց ճանապարհէն է ։

Յայտնութիւն բանից քոց լուսաւորէ և իմաստուն առնէ զտղայս ։ Ի պատուիրանաց քոց իմացեալ ատեցի զամ՟ ճանապարհս չարաց․ զի դու օրէնսդէտ արարեր զիս ։ Առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս պատուիրանաց քոց․ զի ընդ նոսա հաճեցայ ։ Խոնարհեցո զսիրտ իմ ՚ի վկայութիւնս քո․ և մի՛ յագահութ՟ ։ Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում․ և մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք ։ Սաղմ․ ՃԺԸ․ 130․ 104․ 35․ 36․ 133 ։

### Սուրբ Գրքերի ճառագայթն ճանապարհող է ։

Քո խօսքերի յայտնվիլը լուսաւորումէ, և իմաստուն է անում տղայքը ։ Քո պատուիրանքիցդ իմացայ և ատեցի չարերի ամեն ճանապարհները․ պատճառը որ դու ինձ օրէնք գիտող արիր ։ Տա՛ր ինձ քո պատուիրանքի ճանապարհն, որ նորանց հաւան կացայ ։ Ծածացրու իմ սիրտս դէպի քո վկայութիւնները, և ոչ դէպի ագահութ՟ն ։ Իմ ճանապարհները շիտակացրու քո խօսքերդ պէս․ և ամեն մեղք ինձ վերայ տէրութիւն չի անէ ։ Սաղմ․ ՃԺԸ․ 130․ 104․ 35․ 36․ 133 ։

Լինիջիք առնողք բանին․ և

Խօսքը կատարող լինիք և ձեզ

և մի՛ լսօղք միայն համարեսջիք զանձինս։ Յակ. Ա. 22։

———

Պտուղք Հոգւոյն։

Պտուղ հոգւոյն այս է. սէր. խնդութիւն. խաղաղութիւն. երկայնմտութիւն։ Քաղցրութիւն, բարութիւն. հաւատ. հանդարտութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն։ Գաղատ. Ե. 22. 23։

Թէպէտ և երբեմն էիք խաւարք. արդ լոյս էք 'ի Տէր։ Իբրև զորդիս լուսոյ գնացէք։ Զի պտուղ լուսոյ ամ՟ բարութեամբ է՝ և արդարութբ՝ և ճշմարտութբ։ Եփես. Ե. 8. 9։

Ա՟Ծ լոյս է՝ և խաւար 'ի նմա չի՛ք և ոչ մի։ Եթէ ասիցեմք՝ եթէ զհաղորդութին ունիմք ընդ նմա, և 'ի խաւարի շրջիցիմք՝ ստեմք, և ոչ առնեմք զճշմարտութիւն։ Իսկ եթէ ընդ լոյս գնասցեմք

ձեզ մենակ լսող չի՛ համարեք։ Յակոբ. Ա. 22։

———

Հոգւոյն պտուղը։

(Սուրբ) հոգւոյ պտուղն էս է. սէրն՝ ուրախութին, խաղաղութին, համբերութին, քաղցրութին, բարութին, հաւատն, հանդարտութին, հեզութին, ժուժկալութին (*)։ Գաղատ. Ե. 22. 23։

Ուղորդ է մին ժամանակ խաւար էիք. հիմիկ լոյս էք Տէրումն։ Ինչպէս լուսոյ որդիքներ գնացէ՛ք. Պատճառն որ լուսոյ պտուղն ամեն բարութենով է՝ և արդարութենով և ճշմարտութենով։ Եփես. Ե. 8. 9։

Ա՟Ծ լոյս է՝ և նորանում խաւար չկայ։ Թէ որ ասենք՝ թէ ընկերութին ունենք նորան հետ, և խաւարի մէջ ման գանք՝ սուտ ենք ասում, և ճշմարտութին չենք անում։ Բայց եթէ լուսով

---

(*) Փէօղաւոր տնէլն։

ցեմք. որպէս և նա 'ի լոյս է. զհաղորդութիւն ունիմք ընդ միմեանս. և արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց: Ա. Յովհ. Ա. 5—7.

լուսով մնանք, ինչպէս որ նա էլ լուսի մէջ է: իրար հետ ընկերութիւն ունենանք և նր որդւոյ Յին արիւնը մեզ կսրբէ ամեն մեղքերից: Ա. Յովհ. Ա. 5—7.

# ԳԼՈՒԽ Լ:

## Յաղագս օրինաց Ա.Ծ:

Եւ Մովսէս առաջի Տեառն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. հաց ոչ եկեր. և ջուր ոչ եարբ և գրեաց 'ի վերայ տախտակացն զբանս ուխտին զտասն պատգամացն: Ելից. Լդ. 28.

Ես եմ Տէր Ա.Ծ քո, որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց 'ի տանէ ծառայութեան: Մի՛ եղիցին քեզ աստուածք բաց յինէն: Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան. որ ինչ յերկինս 'ի վեր է, և որ ինչ յերկրի 'ի խոնարհ.

և

## Ա.Ծ օրէնքներին համար:

Մովսէս Տէրի առաջին էր քառասուն ցերեկ և քառասուն գիշեր. ոչ հաց կերաւ, և ոչ ջուր խմեց. և գրեց տախտակներին վերայ ուխտադնելոյ (որ է) պատուիրանքին տասն խօսքերը: Ելից. Լդ. 28.

Ես եմ քո Տէր Ա.Ծն, որ հանեցի քեզ եգիպտացւոց երկրիցն, ծառայութեան տանիցն: ինձանից ջոկ քեզ աստուածներ չի՛ լինին: դու քեզ կուռք չի՛ շինես ամեն ինչի նման որ լինի. ինչ որ վերի կողմն երկնքումն է, և ինչ որ ցած կողմն երկրու-

մէջ

և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի։ Մի՛ երկիրպագանիցես նոցա. և մի՛ պաշտիցես զնոսա. զի ես եմ Տէր Ա.Ծ քո՝ Ա.Ծ նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց՝ յերիս և ՚ի չորս ազգս ատելեաց իմոց։ Եւ առնեմ զողորմութի՛ ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց, և ոյք պահեն զհրամանս իմ։ Մի՛ առնուցուս զանուն Տեառն Ա.Յ քո ՚ի վերայ սնոտեաց. զի ոչ սրբեսցէ Տէր զայն, որ առնուցու զանուն նորա ՚ի վերայ սնոտեաց։ Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա։ Զվեց օր գործեսցես, և արասցես զամ զգործ քո։ Յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Ա.Յ քոյ, մի՛ գործեսցես ՚ի նմա զամենայն գործ քո. դու՝ և ուստր քո՝ և դուստր քո. ծառայ քո. և աղախին քո. եզն քո. և էշ քո, և ամենայն

պան

մըն է, և ինչ որ ջրումն է երկրի ներքևն։ Երկրպագութի՛ չըս տաս նորանց և չըս պաշտես նորանց. որ ես եմ Տէրն քո Ա.Ծն՝ նախանձոտ Ա.Ծ, որ կըհատուցանեմ հօրերի մեղքերը (ղաբահաթ) որդւոցն. երեք և չորս ազգերումն իմ ատողներին։ Եւ ողորմութի՛ կանեմ հազար ազգերումն իմ սիրելիքներին, և նորանց՝ որ իմ հըրամաններս կըպահեն։ Տէրին քո Ա.Յ անունը չըս գնես ոչ ինչ բանի վերայ. պատճառը որ Տէրն չի՛ սրբիլ նորան, որ ոչ ինչ բանի վերայ կըդնէ նորա անունը։ Յիշի՛ր շաբաթների օրն որ սուրբ պահես նորան։ Վեց օր պիտի գործ անես, և քո ամեն գործքերդ պիտի շինես։ Եօթն օրը շաբաթ է քո Տէր աստուծուն, նորանում քո ամեն գործդ չի՛ գործես. դու՝ և քո որդին՝ և քո դուստրը, քո ծառայն, և քո տնաղ-

ջինն

անասունք քո. և եկն քո,
և պանդուխտն որ ՚ի քեզ:
Զի զվեց օր արար Տէր
Ա՛ծ զերկինս և զերկիր.
և զծով՝ և զամենայն որ ՚ի
նոսա. և հանգեաւ յաւուրն
եօթներորդի. վասն այնո-
րիկ օրհնեաց Տէր զօրն
եօթներորդ, և սրբեաց
զնա: Պատուեա զհայր քո
և զմայր քո. զի քեզ բարի
լիցի. և զի երկայնակեաց
լիցիս ՚ի վերայ երկրին բա-
րութեան՝ զոր Տէր Ա՛ս-
տուած քո տացէ քեզ: Մի՛
սպանաներ: Մի՛ շնար:
Մի՛ գողանար: Մի՛ սուտ
վկայութ՛ն վկայեր զընկերէ
քումմէ: Մի՛ ցանկանար
տան ընկերի քոյ, և մի՛
անդոյ նորա. մի՛ ցանկանար
կնոջ ընկերի քոյ. և մի՛
ծառայի նորա, և մի՛ աղախ-
նոյ նորա. և մի եզին նո-
րա. և մի՛ իշոյ նորա. և
մի՛ ամենայն անասնոյ նո-
րա. և մի՛ ամենայնի զինչ
և

ջիկն, քո եզն և քո էշն,
և քո ամեն անասունքն, և
քո մօտ եկածն, և քաղա-
քում լինող օտարն (*).
Պատճառը որ Տ՛ր Ա՛ծն
վեց օրումն արաւ երկինքը
և երկիրս. և ծովը՝ և ա-
մեն բան որ նորանցումն է.
և եօթներորդ օրումն
հանգստացաւ. էնտուր հ՛մր
Տ՛րն օրհնեց եօթներորդ
օրն, և սրբեց նորան: պա-
տիւ տուր քո հօրդ և քո
մօրդ, որ քեզ բարի լինի.
և որ դու երկար կեանք ու-
նենաս էն բարութ՛ն երկրին
վ՛ր՝ որ Տ՛ր քո Ա՛ծն քեզ
պիտի տայ: Մի՛ սպաներ.
Շնութ՛ն մի՛ անիր: Մի՛ գո-
ղանար: Սուտ վկայութ՛ն մի՛
վկայեր քո ընկերիդ վ՛ր.
Մի՛ ցանկանար քո ընկերի
տանն, և ոչ ն՛ր յանդերն. Մի՛
ցանկանար քո ընկերի կընո-
կանն, և ոչ նորա ծառային,
և ոչ նորա տնաղջիկանն. և
ոչ ն՛ր եզանն, և ոչ ն՛ր իշին,
և

(*) ղարիպն.

ընկերի քո իցէ։ Ելից․ Ի․ 2—17։

Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և առաջին պատուիրան։ Երկրորդն նման սմին․ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան։ Մատթ․ ԻԲ․ 37—40։

և ոչ նորա ամեն անասուններին և ոչ ամեն բանի որ քո ընկերինն է․ Ելից․ Ի․ 2—17․

Պէտք է սիրես քո Տէր Աստուածը քո բոլոր սրտովդ՝ և քո բոլոր անձնովդ՝ և քո բոլոր մտքովդ․ էս է մեծ և առաջին պատուիրանքն։ Երկրորդ էսուր նման․ քո ընկերին պէտք է սիրես ինչպես քո անձնդ․ Էս երկու պատուիրանքից ամեն օրէնք և մարգարէք կախված կան։ Մատթ․ ԻԲ․ 37—40։

---

### Առաջին պատուիրանն։

Ես եմ Տէր Աստուած քո․ մի՛ եղիցին քեզ այլ Աստուածք բաց յինէն։

#### ա․ Յանձնառութիւն։

1․) Աստուած մեծ է․ և Տէր թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի․ Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի բարձրութիւնք լերանց նորա են

### Առաջին պատուիրանք․

Ես եմ Տէրն քո Աստուած․ չի լինեն քեզ ուրիշ Աստուածներ ինձանից ջոկ․

#### ա․ Յանձնառնելու․

1․) Աստուած մեծ է․ և Տէր մեծ թագաւոր ամեն երկրի վերայ․ Նորան ձեռին է երկրի ամեն կողմերն, սարերի բարձրութիւններն նորան են․

Նոյն

են ։ Նորա է ծով՝ և նա
արար զնա . և զցամաք՝
ձեռք նորա ստեղծին ։
Եկայք՝ երկիրպագցուք նմ̃,
անկցուք՝ և լացցուք առա-
ջի Տեառն արարչին մերոյ ։
Նա ինքն է Տէր Ա.Ծ մեր .
մեք ժողովուրդք ՚ի ձեռին
նորա, և խաշն արօտի նր̃ ։
Սաղմ . ՂԴ . 3—7 ։

Այս է սէրն Ա.Յ, եթէ
զպատուիրանս նորա պա-
հեսցուք . և պատուիրանք
նորա չե՛ն ինչ ծանունք ։
Ա . Յօհ . Ե . 3 ։

Եթէ ոք ասիցէ եթէ սի-
րեմ զԱ.Ծ, և զեղբայր իւր
ատիցէ՝ սուտ է ։ որ ոչ սի-
րէ զեղբայր իւր՝ զոր տե-
սանէ . զԱ.Ծ զոր ո՛չն ետես՝
զիա՞րդ կարիցէ սիրել ։ Եւ
զայս պատուէր ունիմք առ
՚ի նմանէ . զի որ սիրէ
զԱ.Ծ, սիրէ նա և զեղբայր
իւր ։ Ա . Յօհ . Դ .
20 . 21 ։

Ամեն-

Ծովն նորանն է՝ և նա է
շինել նորան . և ցամաքը
նորա ձեռներն են ստեղ-
ծել ։ Եկէ՛ք երկրպագութ̃
տանք նորան . Տէրի ստեղ-
ծողի առաջին վեր ընկ-
նենք՝ և լաց լինինք ։ Նա
ինքն է մեր Տէր Ա.Ծն .
մենք ժողովուրդ նորա ձե-
ռուամն, և նորա արօտի ոչ-
խարներն ։ Սաղմ . ՂԴ .
3—7 ։

Այս է ա̃յ սէրն՝ որ նորա
պատուիրանքները կըպա-
հենք . և նորա պատուի-
րանքներն չեն ծանր ։ Ա .
Յօհ . Ե . 3 ։

Թէ որ մէկն (մարդ) ասէ՝ թէ
Ա.Ծը սիրումեմ, և իւր եղ-
բայրը ատէ, (նա՝) սուտ է ։
էն՝ որ իւր եղբայրը որը
որ տեսնումէ՝ չի՛ սիրում,
ապա աստուծուն՝ որ չի՛
տեսալ՝ ի՞նչպէս կարող է
սիրել ։ Եւ էս խրատս մենք
ունենք նորանից որ՝ պատ-
ճառը ան որ Ա.Ծը սիրումէ,
նա իւր եղբայրն էլ կըսիրէ ։
Ա . Յօհ . Դ . 20 . 21 ։ Ամեն-

2.) Ամենեքին ընդ միմեա-նըս զխոնարհութիւն ունիցիք՝ զի Ա՟ծ ամբարտաւանից հա-կառակ կայ՝ տայ շնորհս խոնարհաց։ Խոնարհեցա-րուք ընդ հզօր ձեռամբն Ա՟յ. զի զձեզ բարձրա-ցուսցէ 'ի ժամանակի։ Ա. Պետ. Ե. 5. 6։

2.) Ամէնքդ մին մինի հետ խոնարհութիւն պիտի ունենաք. պատճառը որ Ա՟ծ հպարտ-ներին հակառակ է՝ շնորհք խոնարհներին է տալիս։ Խոնարհվեցէ՛ք Ա՟յ զօրա-ւոր ձեռքի ներքև. որ ձեզ բարձրացնէ ժամանակով։ Ա. Պետ. Ե. 5. 6։

3.) Լե՛ր յուսացեալ 'ի Տէր յամենայն սրտէ քումմէ։ և յիմաստութիւն քո մի՛ հպարտանար։ Առակ. Գ. 5։

3.) Յոյս դի՛ր Տէրի վե-րայ քո ամէն սրտովդ, և քո իմաստութեանդ համար չի՛ հըպարտանաս։ Առակ. Գ. 5։

Տէր օգնական իմ, և պաշտ-պան իմ։ 'ի նա յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ՝ և զուարճացաւ մարմին իմ։ և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա։ Սաղ. ԻԷ. 7։

Տէ՟րն ինձ օգնող (է) և պա-հող. իմ սիրտս նորա վերայ յոյսը դրաւ, օգնվեց՝ և ու-րախացաւ իմ մարմինս. և ես իմ կամքովս յայտնի կա-նեմ նորան։ Սաղ. ԻԷ. 7։

Համբե՛ր Տեառն՝ և քաջա-լերեա՛ց՝ զօրասցի՛ սիրտ քո՝ և համբե՛ր Տեառն։ Սաղ. ԻԶ. 14։

Համբերի՛ր Տէ՟րին՝ և սըր-տապի՛նդ կացի՛ր՝ քո սիրտդ զօրանայ՝ համբերի՛ր Տէ՟րին Սաղ. ԻԶ. 14։

Ե՛ղբարք իմ սիրելիք, հաս-տատո՛ւն եղերուք անշարժ կացէք. առաւել լերո՛ւք 'ի գործս Տեառն յամ՟ ժամ,

գիտաս-

Իմ սիրելի եղբարք՝ հաս-տատ էլէք և անշարժ կա-ցէք, ամէն ժամ էվէլա-ցէ՛ք Տէրի գործքերին մէջ։

գիտա-

գիտասջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն ։ Ա. Կորն. ԺԵ. ԾԸ.

## Ը. Աստուածպաշտութիւն ։

Ա.) Ասաց անզգամն 'ի սրտի իւրում. թէ ոչ գոյ Ած ։ Սաղմ. ԺԴ. 1.

Բ.) 'Ի Տեառնէ Աստուածոյ քումմէ երկիցես. և զնա պաշտեսցես. և 'ի նա յարեսցիս. և յանուն նորա երդնուցուս ։ Մի' երթայցէք զհետ աստուածոց օտարաց. և զհետ աստուածոց ազգացն՝ որք շուրջ զձեօք իցեն ։ զի Աստուած նախանձոտ, Տէր Աստուած 'ի միջի քում. գուցէ բարկացեալ սրտմտիցի Տէր Աստուած քո սատակել զքեզ յերեսաց երկրի ։ Բ. Օրին. Զ. 13—15 ։

Գ.) Ասէ ցիս Տէր՝ մերձ է առ իս ժողովուրդս այս բերանով իւրով. և շրթամբք

իւ

գիտացէ՛ք՝ որ ձեր աշխատանքն տէրի առաջին անպտուղ չէ՛ն ։ Ա. Կորն. ԺԵ. 58 ։

## Ը. Աստուածպաշտութիւն ։

Ա.) Անզգամն իւրան սրտումըն ասեց՝ թէ Ած չկայ ։ Սաղմ. ԺԴ. 1 ։

Բ.) Քո Տէր Ածանից պէ'տք է վախենաս. և նորան պիտի պաշտես. և նորա հետ պիտի կապվիս. և նորա անունովն պիտի երդում ուտես ։ Օտար Ածներին ետնայ և էն ազգերի որ ձեր չորս կողմին են, նորանց Ածներին ետնայ չի' գնաք ։ Պատճառը որ նախանձոտ Ած (է), Տէ՛ր Ածն քո միջումդ ։ կըլինի որ բարկանայ և սատկանայ քո Տէր Ածն, և էս երկրէս երեսիցը քեզ փատափացնի ։ Բ. Օրին. Զ. 13—15 ։

Գ.) Տէրն ինձ ասում է՝ էս ժողովուրդս մօտ է ինձանից իւր բերանովն, և իւ-

րեանց

ք իւրեանց պատուեն զիս. և սիրտք իւրեանց հեռացեալ ք մեկուսի են յինէն. զուր պաշտեն զիս՝ ուսուցանեն զպատուէրս մարդկան՝ և զվարդապետութիւնս։ Վասն այսորիկ ահաւասիկ ես յաւելից փոփոխել զժողովուրդ զայդ. և փոխեցից զդոսա։ և կորուսից զիմաստութիւն իմաստնոց. և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ Եսայ. ԻԹ. 14։ 15.

րանց պռօշներովն պատուումեն ինձ, և իւրանց սիրտները հեռացած ջոկված են ինձանից. զուր տեղ են պաշտում ինձ. և սովորցնումեն մարդիկների հրամանները և (նոցանց) վարդապետութիւնները։ Էստուր հմր հիմիկ ահա պիտի փոխեմ էդ ժողովուրդը. և կըփոխեմ դորանց. և իմաստունների իմաստութիւնը կըկորցնեմ. և խորհուրդ անողների խորհուրդները ոչ ինչ կըհամարեմ։ Եսայ. ԻԹ. 14. 15.

4.) Այսպէս ասէ Տէր՝ մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր. և մի՛ պարծեսցի հզօրն ՚ի զօրութիւն իւր. և մի՛ պարծեսցի մեծն ՚ի մեծութիւն իւր։ Այլ այն պարծեսցի՝ որ պարծիցի, իմանալ և ճանաչել զիս. թէ ես եմ Տէր. որ առնեմ զիրաւունս՝ և զողորմութիւն. և զարդարութիւն ՚ի վերայ երկրի, և ՚ի նոյնս են կամք իմ՝ ասէ Տէր։

Երեմ

4.) Այսպէս է ասում Տէրն՝ իմաստունը ([illegible]) իւրան իմաստութիւնովն չի՛ պարծենայ. և ուժով ([illegible]) չի՛ պարծենայ իւրան զօրութիւնովն. և չի՛ պարծենայ մեծն իւրան մեծութիւնովն։ Բայց նորանով պարծենայ նա, որ կըպարծենայ, ինձ իմանալ և ճանաչել. թէ Տէրն ես եմ, որ իրաւունքը և ողորմութիւնը և արդարութիւնը անում եմ երկրի վրայ. և նորանցումն են իմ

կամքս

Երեմ. Թ. 23. 24։

Իմացարուք ամենեքեան՝ որոց մոռացեալ իցէ զԱծ։ Գուցէ երբեք յափշտակիցիք. և ոչ ոք իցէ՝ որ փրկիցէ։ Սաղմ. ԽԹ. 22։

Այսպէս ասէ Տէր. անիծեալ լիցի մարդ որ արասցէ զյոյս իւր ՚ի մարդ. և ապաստան լիցի ՚ի մարմին բազկի նորա. և ապստամբ իցէ ՚ի Տեառնէ սիրտ նորա։ Երեմ. ԺԷ. 5։

5.) Ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս. զի առաւելութիւն զօրութեան իցէ յԱյ, և ոչ ՚ի մէնջ։ Յամենեղեալք՝ այլ ոչ նուաղեալք. կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք՝ հալածեալք՝ այլ ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք. Յամ ժամ ըզմահն Յիսուսի ՚ի մարմինս մեր կրեսցուք՝ զի և կեանքըն Յիսուսի ՚ի մարմինս մեր յայտնեսցին։ Բ. Կոր. Դ. 7—10։

Նե-

կամքս՝ տէրն ասումէ։ Երեմ. Թ. 23. 24։

Ամենքդ իմացէ՛ք՝ ով որ Աձը մոռացել է. չլինի թէ մին ժամանակ կըյափշտակվիք, և ոչ ով չի՛ լինիլ որ փրկէ։ Սաղմ. ԽԹ. 22։

Տէրն էսպէս է ասում՝ անիծված լինի (էն) մարդն, որ իւրան յոյսը մարդի վրայ կըդնէ. և որ նորան մարմնի թևին ապաւինի. և եւ կըդառնայ նր սիրտը տէրիցն։ Երեմ. ԺԷ. 5։

5.) Ունենք էս գանձս հողի ամանի մէջ. պատճառը որ Աձանից լինի զօրութեավելութիւնս և ոչ մեզանից. Ամեն բանի մէջ նեղացած ենք՝ բայց չե՛նք նուաղված. կարօտված՝ բայց չե՛նք տարակուսված. հալածված՝ բայց չի թուլացած. չարչարված՝ բայց չի սատակված։ Ամեն ժամանակ յի մահըն մեր մարմիններումս պիտի տանենք. որ յի կեանքն էլ մեր մարմիններումս յայտնըվի։ Բ. Կոր. Դ. 7—10։

ՆԵ

Երկրորդ պատուիրան ։

Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան․ որ ինչ յերկինս ՚ի վեր, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի․ մի՛ երկիրպագանիցես նոցա և մի՛ պաշտեսցես զնոսա ։

Երկրորդ պատուիրան ։

Դու քեզ համար կուռք չի շինե՛ս ամեն ինչի նման որ լինի․ ինչ որ վերի կողմըն երկնքումն է, և ինչ որ ցած կողմն երկրումն է, և ինչ որ ջրումն է երկրի ներքեւն․ երկրպագուն չի՛ տաս նորանց, և չի պաշտես նորանց ։

---

Ա․ Հռովմայեցւոց

1.) Ծանեան զԱ՟ծ, և ոչ իբրև զԱ՟ծ փառաւորեցին, կամ գոհացան ։ այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց․ և խաւարեցան անմտութեք սիրտք նոցա ։ Զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան ։ Եւ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ՝ ՚ի նմանութիւն պատկերի եղծանելոյ մարդոյ՝ և թռչնոց՝ և չորքոտանեաց՝ և սողնոց ։ Վասն որոյ մատնեաց զնոսա Աստուած

Ա․ Հռովմայեցւոց ։

1.) Ա՟ծը ճանաչեցին, և նորան փառք չի՛ տուին ինչպ՟ Ա՟յ և չի գոհացան ։ բայց դատարկվեցան իւրանց խորհուրդների մէջ, և նրանց սիրտերն անմտութենով խաւարվեցան ։ Իւրանց իմաստուն էին համարում՝ յիմարվեցան ։ Եւ չի ապականվելը աստուծոյ փառքը, փոխեցին նմանացրին ապականվելի մարդոյ պատկերին, և թռչունների, և չորս ոտնաւորների և

սող

Աստուած ՚ի ցանկութիւնս սրտից նոցա ՚ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց։ Որք փոխանակեցին զճշմարտութիւն աստուծոյ ընդ ստութեան. հնազանդեցան և պաշտեցին զարարածս, և ոչ զարարիչն. որ է օրհնեալ յաւիտեանս. Ամէն։ Հռով. Ա. 24—25։

2.) Մի՛ գտանիցի ՚ի քեզ՝ որ ածիցէ զուստր իւր կամ զդուստր իւր զբոցով. և դիւթիցէ զդիւթութիւն, և հմայիցէ. և հաւահարց լինիցի։ Եւ կախարդիցէ կախարդանօք. և վհուկ և նշանագէտ լինիցի առ ՚ի զմեռեալս հարցանելոյ. Զի պիղծ է Տեառն ամենայն՝ որ առնէ զայն։ Բ. Օրին. ԺԸ. 10—12։

3.) Ոչ ոք կարէ երկուց տերանց

ւած ծառայողներին։ Նոր Աստուած մատնեց նորանց իւրանց սրտների ցանկութեամբ որ պղծվին և անարգեն (1) իւրանց մարմինները իւրանցով. Նորանք որ Աստուծոյ ճշմարտութիւնը, ստութեան հետ փոխեցին. ստեղծվածներին հնազանդվեցան և պաշտեցին, և ոչ ստեղծողին, որ օրհնված է յաւիտեանս. Ամէն. Հռով. Ա. 24—25։

2.) Պիտի չի գտնվի ձեր միջում էնպէս մարդ՝ որ իւրան տղայն կամ աղջիկն բոցի չորս կողմովն ման պտիտածէ, և դիւական կախարդութին անէ և հմայէ (2) և հաւի հարցնէ և կախարդութեամբ կախարդութին անէ և վհուկ (3) և նշանի նայող լինի մեռածների հարցնելոյ համր. պատճառը որ պիղծ է տէրոջին ամեն ([illegible]) որ էն կանէ. Բ. Օրին. ԺԸ. 10—12։

3.) Ոչ մէկ չի կարող երկու Տէրի

(1) Խայտառակ անեն. (2) Փալ բացանէ։ (3) Ճատուգեարը։

րանց ծառայել. կամ զմի՛ն ատիցէ, և զմիւսն սիրիցէ կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ, ո՛չ կարէք Այ ծառայել և մամոնայի։ Մատ. Զ. 24։

Զի՞նչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահեսցի. և զանձն իւր տուժեսցէ։ կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։ Մատ. ԺԶ. 26։

---

## Ը. Յանձնառական։

1.) Ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք։ Վասն որոյ գրեալ է՝ եթէ եղերուք սուրբք զի ես սուրբ եմ։ Ա. Պետ. Ա. 15. 16։

2.) Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է։ Իսկ որ ուրասցի զիս առաջի մարդկան ուրացայց և ես զնա ա-

ռաջի

Տէրի ծառայել կամ մէկը կատէ և միւսը կըսիրէ, կամ մէկը կըպատուէ, և միւսը ոչինչ կըհամարէ։ Չէ՛ք կարող Այ ծառայել և մամոնային։ Մատ. Զ. 24։

Ի՞նչ օգուտ կըլինի մարդոյն՝ թէ եա ամէն աշխարհ դատուլմանէ, և իւր անձնին վնաս տայ. կամ ի՞նչ գին տալու է մարդ իւրան անձին փրկելոյ համար։ Մատ. ԺԶ. 26։

---

## Ը. Յանձն առնելը։

1.) Սուրբին նմանն՝ որ ձեզ կանչեց՝ դուք էլ ձեր ամէն ճանապարհներումն սբ պիտի լինիք։ Իր համար գրված է՝ թէ սբ էլէք՝՝ պատճառը որ ես սբ եմ։ Ա. Պետ. Ա. 15. 16։

2.) Ամէնն որ ինձ կըդաւանա-նէ մարդկանց առաջին, ես էլ նորան կըդաւանեմ իմ Հօր առաջին որ երկնքումն է։ Իսկ ով որ ինձ կըուրանայ մարդկանց առաջին, ես էլ կըուրանամ

նորան

ռաջի Հօր իմոյ՝ որ յերկինըս է։ Մատթ. Ժ. 32. 33։

Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն. և առցէ զխաչ իւր . և եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի զանձըն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա։ Եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա։ Մատթ. ԺԶ. 24. 25։

Այլ դու զուա՛րթ կաց՝ յամենայնի ճգնեա՛ց՝ զգործս աւետարանչի գործեա՛, զպաշտօն քո կատարեալ կա՛ց Բ. Տիմ. Դ. 5։

---

Երկրորդ պատուէրն։

Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո ՚ի վերայ սնոտեաց։

Ա. Հրաժարելին։

1.) Մարդասէր Հոգւոյն իմաստութեան՝ ո՛չ արդարացուցանէ զհայհոյիչն ՚ի շրթանց իւրոց. զի երիկամանց նորա է Աստուած վկայ։ Եւ սրտի նորա ոստիկան ճշմա-

րիտ

ն՞րն իմ Հօր առաջին որ երկնքումն է։ Մատթ. Ժ. 32. 33։

Թէ մինն ուզում է ինձ ետևից գալ՝ պիտի (ն—րան) անձն ուրանայ, և իւր խաչն վեր ունի, և ինձ ետևից գայ։ Պատճառը նա որ կամենում է իւրան անձն ապրացնել կըկորցնէ, նորան. Եւ նա որ իւր անձն ինձ համար կըկորցնէ, կըգտնէ նորան։ Մատթ. ԺԶ. 24. 25։

Դու ժի՛ր կաց՝ ամեն բանի մէջ աշխատի՛ր. աւետարանչի գործերը գործի՛ր, քո պաշտօնիդ կատարեալ հետևի՛ր։ Բ. Տիմ. Դ։ 5։

---

Երկրորդ պատուէրն։

Տէրին քո Աստուծոյ անունը չի՛ դնես ոչ ինչ բանի վերայ։

Ա. Հեռանալը։

1.) Մարդասէր իմաստութեան հոգին չի՛ արդարացնիլ ուշունց տուողը իւրան պռօշներիցն. պատճառը որ ն՞ր երիկամունքներին (*) Աստուած է վկայ. և նորա սըր-

---

(*) պուրջիկներին (տին

ըխտ. և լեզուի նորա ունկն-դիր։ Իմաստ. ա. 6։

Ամենայն դառնութիւն՝ և բարկութիւն՝ և սրտմտութիւն՝ և աղաղակ՝ և հայհոյութիւն բարձցի ՚ի ձէնջ ամենայնիւ չարութեամբ հան-դերձ։ Եփես. դ. 31։

2.) Մի՛ երդնուցուք սուտ յանուն իմ. և մի՛ պղծիցեք զանուն Տեառն Աստուծոյ ձերոյ. ես եմ Տէր Ա̃ծ ձեր։ Ղևտ. ժթ. 12։

Ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ. և մի՛ յերկիր՝ զի պատուան-դան է ոտից նորա. և մի՛ յԵ-րուսաղէմ. զի քաղաք է մեծի արքայի։ Եւ մի՛ ՚ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։ Այլ եղիցի ձեր բան՝ այոն, այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայս ՚ի չարէն է։ Մատ. ե. 34—37.

Բ.

տէին ճշմարիտ վերակացու, և ն̃ր լեզուին ականջ դնող։ Իմաստ. ա. 6։

Ամէն դառնութի՛ւն՝ և բարկութի՛ւն և սրտի վառվիլը՝ և աղա-ղակ՝ և ուշունց տալը պիտի վեր կենայ ձեզանից, ամէն չարութեան հետ։ Եփես. դ. 31.

2.) Իմ անունովս սուտ եր-դումն չի՛ ուտէք, և ձեր Տէր ա̃յ անունը չի՛ պղծէք. ես եմ Տ̃ր, ձեր Ա̃ծն։ Ղևտ. ժթ. 12։

Ես ասում եմ ձեզ, բնաւ երդում՝ չի՛ ուտէք. ոչ եր-կնքովն՝ որ ա̃յ աթոռն է. և ոչ երկրովս՝ որ ն̃ր ոտներն դնելոյ տեղն է, և ոչ Երու-սաղէմովն՝ որ մեծ թագա-ւորի քաղաքն է։ և քո գըլ-խովդ էլ երդում չի՛ ուտես, որ չես կարող մին մազ ըս-պիտակ շինել կամ թուխ. Բայց ձեր խօսքն լինի՝ հան, հա, և չէն՝ չէ՛, պատ-ճառը որ նորանից աւելին՝ չարիցն է, Մատ. ե. 34-37։

Բ.

Է. Յանչնաւորական։

Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանճար բարի ամենեցուն՝ որք առնեն զնա։ Առակ. ա. 7։

Մի՛ երկնչիք յայնցանէ՝ որք սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել։ այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել ՚ի գեհենի։ Մատթ. ժ. 28։

Երկիւղ Տեառն ատեայ զանիրաւութիւն՝ զթշնամանս՝ զամբարտաւանութիւն, և և զճանապարհս չարեաց։ Առակ. ը. 13։

2.) Որ կամիցի զկեանս սիրել՝ և տեսանել զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր ՚ի չարութենէ, և շրթունս իւր ՚ի չխօսելոյ զնենգութիւն։ ա. Պետ. գ. 10։

Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել՝ և ոչ սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղեցու-

Է. Յանչնաւոնելէ։

Իմաստութեան սկիզբն Տէրի երկիւղն է։ լաւ խելքութիւն ամէն մարդկանց որ գործեն նէ՛ն։ Առակ. ա. 7։

Նորանցից չի՛ վախեք որ մարմինն կսպանեն՝ և հոգին չե՛ն կարող սպանել։ Բայց նորանից աւելի վախեցէ՛ք՝ որ կարող է հոգին և մարմինը դժոխքին մէջ կորցնել։ Մատ. ժ. 28։

Տէրի երկիւղն ատում է անիրաւութիւնը՝ թշնամանքը՝ ամբարտաւանութիւնը և չարերի ճանապարհները։ Առակ. ը. 13

2.) Ով որ կամենում է կեանք սիրել՝ և բարի օրեր տեսնել՝ պիտի լռացնէ իւր լեզուն չարութիւնից, և իւր պռօշները որ խաբեբայութիւնը չի՛ խօսի։ ա. Պետ. գ. 10։

Թէ որ մինն ուզէ կրօնաւոր (*) լինել, և իւր լեզուին սանձ չի՛ դնէ, բայց զբաղմունքի

(*) Յակոբ. ա. 26

ցուցանիցէ զխլոտ իւր՝ այն-
պիսւոյն վայրապար է կրօ-
նաւորութիւն։ Յակ. Ա. 26։
Բազում ինչ յանցանեմք ա-
մենեքեան։ եթէ ոք բանիւ
ոչ յանցանիցէ՝ նա է մարդ
կատարեալ՝ որ կարօղ է
սանձահարել զամենայն մար-
մին իւր։ Յակ. Գ. 2։

---

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ։

Յիշեսջի՛ր զօրն շաբա-
թուց սրբել զնա. զվեց օր
գործեսցե՛ս և արասցես
զամենայն գործս քո՝ յաւու-
րըն եօթներորդի շաբաթ
Տեառն Աստուծոյ քում։

### Ա. ՅԱՆՁՆԱՌԱԿԱՆ։

1.) Լուացից սրբութեամբ
զձեռս իմ։ և շուրջ եղէց
զսեղանովքով Տէր։ Լսել
ինձ զձայն օրհնութեան քո
և պատմել զամենայն սքան-
չելիս քո. Տէր՝ սիրեցի զը-
վայելչութիւն տան քոյ և
զտեղի յարկի փառաց քոց։
Սաղմ. ԻԵ. 6–8։

Աղա-

մունքի ձգէ իւր սիրտն, էն-
պէսուն կրօնաւոր լինելն
զուր է։ Յակ. Ա. 26։
Ամենքս շատ բաներով սը-
խալվումենք։ մարդ՝ որ խօս-
քով չի՛ սխալվի՝ նա է կա-
տարեալ մարդ. որ կարող է
իւր բոլոր մարմինը հնազան-
դացնել։ Յակ. Գ. 2։

---

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ։

Յիշի՛ր շաբաթների օրն,
որ սուրբ պահես նո՛րն. վեց
օր պիտի գործ անես, և քո
ամէն գործդ պիտի շինես՝
եօթն օրն շաբաթ է քո
Տէր Աստուծուն։

### Ա. ՅԱՆՁՆԱՌՆԵԼԻ։

1.) Իմ ձեռներս կըլուա-
նամ սրբութիւնով. և քո սեղա-
նի չորս կողմովըն ման կը-
գամ Տէ՛ր։ Որ լսեմ քո օրհ-
նութեան ձայնն. և քո ամեն բա-
քանչելիքներն պատմեմ։ Տէ՛ր
քո տան վայելչութիւնը սիրեցի
և քո փառքի տան տեղըն.
Սաղմ. ԻԵ. 6–8։

Զեղ

Աղաչեմ զձեզ եղբարք գըթութբն Այ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի սուրբ՝ հաճոյ Աստուծոյ՝ զխօսուն պաշտօնդ ձեր։ Հռոմ. ԺԲ. 1։

Ձեզ աղաչումեմ ե՛ղբարք՝ Այ գթութիւնն՝ որ պատրաստէք ձեր մարմինները պատարագ կենդանի սբ՝ Այ ընդունելի՝ ձեր մտքով լինող պաշտօնը։ Հռոմ. ԺԲ. 1։

Ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ, հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ այս այսպէս։ Գործ. ԺԷ. 11։

Խօսքն ընդունեցին բոլոր յօժարութիւնով, միշտ քըննումէին գրքերըն, թէ էս էսպէս լինի։ Գործ. ԺԷ. 11։

Զգուշացարուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց։ Այլ մի՛ թողցուք զժողովս միմեանց, որպէս և սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, և այսչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ Եբր. Ժ. 24. 25։

Զգուշացէ՛ք մին մինի սէրի և բարի գործքերի յորդորմունքով։ Այլ չի թողնենք մեր ժողովները, ինչպ՞ս որ մին քանիսն սովոր են. բայց մխիթարվենք, և այնչափ էլ առաւելի որչափ որ կըտեսնէք օրն մօտացած։ Եբր. Ժ. 24. 25,

2.) Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի տնանկին. ըստ տրոց նորա հատուսցէ նմա։ Առակ. ԺԹ. 17։

2.) Այ փոխ է տալիս նա, որ ողորմումէ աղքատին. Նր տուվածին չափ կըհատուցանէ նրն։ Առակ. ԺԹ. 17։

Կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ յԱյ, և 'ի Հօրէ՝ այս է, այցելու լինիլ որբոց. և այրեաց 'ի նեղուե

Սբ և անարատ կրօնաւորութի՝ (*) Այ և Հօր մօտ էս է, որբ և այրինըրին՝ իրանց նեղուե մէջ գնացող տեսնող

(*) Ածպաշտութիւն։

նեղութեան իւրեանց. ա-
նարատ պահել զանձն յաշ-
խարհէ։ Յակ. Ա. 27։

Որ տայ աղքատաց՝ ոչ կա-
րօտասցի։ իսկ որ դարձու-
ցանէ զակն իւր ՚ի նոցանէ,
՚ի բազում կարօտութեան
եղիցի։ Առակ. ԻԸ. 27։

---

Ժ. Պատուիրան։

1.) Արհամարհեալ ուրուք
զօրէնսն Մովսէսի առանց ի-
րիք ողորմութեան՝ առ եր-
կուք կամ երիւք վկայիւք
մեռանիւր։ իսկ արդ՝ Ո՞րչափ
սաստիկ պատժոց արժանի
համարիցիք զայն, որ զՈր-
դին Աստուծոյ առ ոտն ե-
հար. և զարիւն նորոյ ուխ-
տին խառնակ համարեցաւ.
որով և սրբեցաւն։ և զհո-
գին շնորհաց թշնամանեաց։
Եբր. Ժ. 28. 29։

Տեսէ՛ք եղբարք՝ գուցէ
երբէք լինիցի յումեք ՚ի
ձէնջ սիրտ չար անհաւա-
տութեան՝ ապստամբ լինել
յԱստու-

տեսնող լինիլ (*) իւրան
անձն անարատ պահել աշ-
խարհքիցս։ Յակ. Ա. 27։

Ա՛վ որ աղքատներին կըտայ
չի՛ կարօտիլ. բայց ով որ
ե՛տ դարձնի իւր աչքը նո-
րանցից, շատ կարօտուն մէջ
կըլինի։ Առակ. ԻԸ. 27։

---

Ժ. Պատուէր։

1.) Մարդ՝ որ ոչինչ հա-
մարեց Մովսէսի օրէնքն ա-
ռանց ողորմելոյ՝ երկու կամ
երեք վկաներու առաջին
մեռնումէր։ բայց հիմիկ՝ Ո՞ր-
քան մեծ պատժի արժանի
կըհամարէք էն, որ Այ որ-
դին ոտի տակն քցեց. և նոր
ուխտի արիւնը խառնակ
(*) համարեց. նորանով որ
ինքն սրբվեց, և շնորհքի
հոգին նախատեց։ Եբր.
Ժ. 28. 29։

Տեսէ՛ք եղբարք՝ չլինի որ
ձեզանից մինումն չար և
անհաւատ սիրտ լինի՝ որ
կենդանի աստուածանից ա-
պստամբ

---

(*) հարամ։

յԱստուծոյ կենդանւոյ։ Ա՛յլ մխիթարեցէ՛ք զմիմեանս զօրհանապազ՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ. զի մի՛ ոք խստասցի ՚ի ձէնջ խաբէութեամբ մեղաց։ Եբր. Գ. 12. 13։

ապստամբ (*) լինի։ Բայց մխիթարեցէ՛ք միշտ մէկ ըզ-մէկու, քանի որ այսօրն ձեր առաջին կայ. որ ձեզանից մինն չի՛ պնդվի (սրտովն) մեղքերի խաբէութիւնովն Եբր. Գ. 12. 13։

2.) Ե՛ղբարք՝ առաւել փութասջի՛ք՝ զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն և զընտրութիւն պահիցէք։ զայս արարեալ ոչ երբէք յանցանիցէք։ Բ. Պետ. Ա. 10։

2.) Ե՛ղբարք՝ էլ աւելի ջանք արէք՝ որ բարի գործքով ձեր կանչվիլը և ձեր ընտրվիլը հաստատ պահէք։ որ եթէ էս անէք՝ իսկի մին ժամանակ չէ՛ք մեղանչիլ։ Բ. Պետ. Ա. 10։

Ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի և ՚ի հուր արկանի։ Մատ. Գ. 10։

Ամեն ծառն որ բարի պտուղ չի՛ բերիլ, կըկտրվի և կըրակի մէջ կըքցվի։ Մատ. Գ. 10։

Զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս հաստատեցէ՛ք։ Եւ զշաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց. զի մի՛ որ կաղն իցէ՝ գլորիցի. այլ մանաւանդ բժշկեսցի։ Եբր. ԺԲ. 12. 13։

Թուլացած ձեռները՝ և վաստակած ծնկները հաստատեցէ՛ք։ Եւ ձեր ոտներին առաջ ճանապարհները շիտակացրէ՛ք. պատճառը որ՝ չի վեր ընկնի էն որ կաղ է. բայց առաւել բժշկվի։ Եբր. ԺԲ. 12. 13։

3.) Դու հոգաս՝ և զբազում իւիք զբաղեալ ես։ բայց

3.) Դու հոգս ես քաշում և շատ բաներով զբաղմունքի մէջն

(*) դէօնմիշ։

բայց աստ սակաւ ինչ պիտոյ է։ Ղուկ. Ժ. 41. 42։

Ամենեւին ընդունայն է ամենայն մարդ մսեղի։ Այսպաքէն որպէս 'ի պատկերի շրջի մարդ. սակայն 'ի զուր խռովի. գանձէ՝ եւ ոչ գիտէ ում ժողովէ։ Սաղմ. ԼԸ. 6. 7։

միջն ես։ բայց էս տեղ քիչ մի պէտք է։ Ղուկ. Ժ. 41. 42։

Իսկի ոչ ինչ է ամեն մսեղէն մարդ։ Ճշմարիտ որ պատկերի մէջի (շուքի պէս) է շրջում մարդ. բայց զուր տեղը անհանգիստ է լինում. փող է հաւաքում. եւ չի գիտում թէ ում հա՛մր է ժողովում։ Սաղմ. ԼԸ. 6. 7։

---

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ։

Պատուեա զհայր եւ զմայր քո. զի քեզ բարի լինիցի եւ զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի։

ա. ՅԱՆՁՆԱՌԱՋԱՆ։

Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց 'ի Տէր։ զի այն է արժանն։ Պատուեա զհայր քո եւ զմայր։ որ է առաջին պատուիրան յաւետիսն

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ։

Պատի՛ւ տուր քո հօրդ եւ քո մօրդ. որ քեզ բարի լինի, եւ որ երկար կեանք ունենաս երկրի վերայ։

ա. ՅԱՆՁՆԱՌՆԵԼԻ։

Ո՛վ որդիք՝ ձեր ծնողքերին հնազանդ կացէք տէրոջն։ որ էն է պէտքն։ Քո հօրն եւ մօրն պատիւ տուր որ առաջին պատուիրանքն

ովման։ Զի քեզ բարի եղիցի. և երկայնակեաց լինիցես ՚ի վերայ երկրի։ Եփես. Զ. 1—3։

Լուր որդեակ հօր քո՝ որ ծնաւ զքեզ։ և մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քոյ։ Առակ. Իգ. 22։

Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի, մի՛ առ անկանէ ծառայութեամբ իբրև մարդահաճոյք. այլ միամտութեամբ սրտի երկնչիլ ՚ի տեառնէ։ Զոր ինչ առնիցէք սրտի մտօք գործեսջիք իբրև Տեառն, և ոչ իբրև մարդկան. Կողոս. Գ. 22. 23։

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ ՚ի հնազանդութեան կացցէ։ քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ։ և որք ենն, յԱստուծոյ կարգեալ են։ Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն, այ̃ հրամանին հակառակ կայ։ և որք

րանքն է աւետիքով, որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս երկրի վր̃։ Եփես. Զ. 1—3։

Ո՛րդի՝ քո հօրն լսի՛ր, որ քեզ ծնել է. և քո մօր ծերութիւնը աչքից չի՛ ձգես։ Առակ. Իգ. 22։

Ո՛վ ծառայք՝ ձեր տէրերին հնազանդ կացէք ամեն բանի մէջ. երեսպաշտութենով չի՛ ծառայէք մարդահաճոյների պէս, բայց սրտի միամտութենով տէրիցն վախելով։ Ինչ որ անէք, սրտով գործեցէ՛ք ինչպ̃ Տ̃ին, և ոչ ինչպ̃ մարդկանց։ Կողոս. Գ. 22. 23։

Ամեն անձն՝ որ իշխանութեան տակի է՝ հնազանդ պիտի կենայ։ պատճառը որ իշխանութիւն ուրիշ տեղից չի՛, մենակ ածանից (է։) էնտունք որ կան, ածանից են կարգված։ հիմիկաց ետև, ով որ իշխանութեան հակառակ լինի, այ̃ հրամանին է հակառակ։ և նորանք որ

հակա-

որք հակառակ կան, անձանց դատաստանս ընդունելին: Վասն որոյ հարկ է հնազանդ լինիլ ոչ միայն վասն բարկութեանն, այլ և վասն մըտացն խղճի: Վասն այնորիկ և հարկս հարկանէք զի Աստուծոյ սպասաւորք են 'ի նոյն կանխեալք: Հռոմ. ԺԳ. 1. 2. 5. 6:

Ունկնդիր լերո՛ւք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա: Զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր: զի խընդութեամբ արասցեն զայն՝ և մի՛ յոգւոց հանելով: զի այն ոչ յօգուտ ձեր է: Եբր. ԺԳ. 17. 18:

Առաջի ալեաց յառնիցես. և պատուեսցես զերեսս ծերոյն. և երկնչիցես յԱստուծոյ քումմէ: Ես եմ Տէր Աստուած քո: Ղևտ. ԺԹ. 32.

Հնա-

հակառակ լինին, իրենց անձներին դատաստան կըընդունին: Անոր համար պէտք է հնազանդ կենալ չէ թէ մենակ բարկութեան համար, բայց նաև խղճմտանքի համար: Անոր համար նաև հարկ (*) էք տալիս՝ պատճառը որ այդ ծառայք են էն բանին վերայ դրած: Հռոմ. ԺԳ. 1. 2. 5. 6:

Ականջ դրէք ձեր առաջնորդներին, և հնազանդ կացէք նորանց: Պատճառը որ նորանք աչքաբաց հոգս են անում ձեր հոգւոց համար՝ ինչպէս թէ ձեզ տեղ պիտի համար տան. պատճառը որ ուրախութիւնով անեն էն՝ և ոչ հոգւոց հանելով, որ էն ձեր օգուտ չէ: Եբր. ԺԳ. 17. 18:

Հալևոր (Տարդէհանց) առաջին պիտի վեր կենաս, և ծեր (Տարդէոյ) երեսը պիտի պատուես. և քո Աստուծանից պիտի վախես: Ես եմ քո Տէր Աստուածն: Ղևտ. ԺԹ. 32:

Աս

(*) Խարճ:

Հնազանդիլ պարտ է Աստուծոյ՝ առաւել քան մարդկան։ Գործ. Ե. 29։

2.) Աղաչեմք զձեզ եղբարք ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր ՚ի Տէր՝ և զխրատիչս ձեր. Եւ համարեսջիք զնոսա արժանիս առաւել սիրոյ վասն գործոյ նոցա։ Ա. Թես. Ե. 12. 13։

---

### Է. Հրաժարական։

1.) Որդի՝ որ անարգէ զհայր. և կամ ՚ի բաց մերժէ զմայր իւր, ամօթ կրեսցէ. և նախատ լիցի։ Որդի՝ որ թողուցու պահել զխրատ հօր, խորհի զճառս չարեաց։ Առակ. ԺԹ. 26. 27։

Յոյս անշնորհակալին որպէս սառն ձմերայնոյ հալեսցի։ և ծորեսցի որպէս զջուր անպիտան։ Իմաստ. ԺԶ. 29։

Այ աւելի պէտք է հնազանդիլ՝ քանց մարդկանց Գործ. Ե. 29։

2.) Ձեզ աղաչումեմ եղբարք՝ որ ճանաչէք ձեր աշխատաւորները՝ և ձեր վերակացուները Տէրով՝ և ձեր խրատողները։ Եւ նորանց համարեցէք էլ աւելի սիրոյ արժանի նորանց գործքերի համար։ Ա Թես. Ե. 12. 13։

---

### Է. Հեռանալէ։

1.) Որդին՝ որ կանարգէ իւր հայրը. և կամ իւր մայրը կըհեռացնէ, ամօթ կըքաշէ, և նախատինք կըլինի։ Որդին՝ որ իւրան հօր խրատ պահելը կըթողնի, նա չար խօսքերը է մտածում։ Առակ. ԺԹ. 26. 27։

2.) մարդ որ շնորհակալ չէ նորա յոյսն ձմեռան սառնի պէս կը հալվի։ և կըկաթի ինչպէս որ անպիտան ջուր։ Իմաստ. ԺԶ. 29։

Սէյէ-

## Վեցերորդ պատուիրան։

## Մի՛ սպանաներ

### ա. Հրաժարական։

Լուարուք՝ զի ասացաւ առաջնոյն. Թէ մի՛ սպանաներ. զի որ սպանանիցէ պարտական լիցի դատաստանի։ Բայց ես ասեմ ձեզ՝ եթէ ամ̃ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր՝ յիմար, պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի գեհեն հրոյն։ Մատ. Ե. 21. 22։

Ամենայն որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է։ և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի զկեանսն յաւիտենականս յանձին հաստատեալ։ Ա. Յով. Գ. 15.

Մի

## Վեցերորդ պատուիրանք։

## Մի՛ սպաններ։

### ա. Հեռանալը

1.) Լսել էք՝ որ առաջի մարդկանցն ասվեց. Թէ չի սպաննես. պատճառը՝ ով որ սպաննէ՝ պարտական կը լինի դատաստանին։ Բայց ես ասումեմ ձեզ. Թէ ամեն մարդ՝ որ զուր տեղ բարկանումէ իւրան եղբօր վ̃ր՝ պարտաւոր կը լինի դատաստանին. և ով որ իւր եղբօրն յիմար ասէ, պարտաւոր կը լինի ատենին. (*) և ով որ իւր եղբօր ասէ՝ անխելք պարտաւոր կը լինի դժոխքի կրակին Մատ. Ե. 21. 22։

Ամենն որ իւր եղբայրն ատումէ՝ մարդասպան է։ և գիտումէք՝ որ ամեն մարդասպանն իւր անձնումն յաւիտենական կեանքը հաստատած չունի։ Ա. Յով. Գ. 15։

Մին

(*) Գեհեանն։

Մ՛ի տրտմեցուցանիցէք զմիմե-
անս ե՛ղբարք զի մի՛ դատի-
ցի՛ք. ահաւասիկ դատաւորն
առ դուրս կայ: Յակ. Ե. 9:

2.) Ոչ ո՛ք երբէք ատեաց
զանձն իւր՝ այլ սնուցանէ
և դարմանէ զնա: Եփես.
Ե. 29:

Աշխարհի տրտմութիւն
զմահ գործէ: Բ. Կոր.
Է. 10:

Որ ունիցի զկեանս ինչ
յաշխարհիս՝ և տեսանիցէ
զեղբայր իւր կարօտեալ ի-
մի՛ք՝ և փակիցէ զգութ իւր
՚ի նմանէ. զիա՞րդ սէրն
Աստուծոյ ՚ի նմա իցէ բնա-
կեալ: Ա. Յօհ. Գ. 17:

Եթէ եղբայր ոք կամ քոյր
իցեն մերկք, կամ կարօ-
տեալք աւուրն կերակրոյ՝
Ասիցէ ոք ՚ի ձէնջ ցնոսա.
գնայցէք խաղաղութեամբ,
ջեռուարո՛ւք, և յագեցարո՛ւք.
և տայցէք ո՛չ նոցա զպէտս
մարմնոյն՝ զի՞նչ օգուտ
իցէ: Յակ. Բ. 15. 16:

3.) Յայնժամ ասասցէ
(Յէ-

Մ՛ին մինի չէ՛ք տրտմացնէք
ե՛ղբարք. որ չէ՛ք դատվի՛ք.
ահա դատաւորն դրան մօտն
է: Յակ. Ե. 9:

2.) Ոչ ո՛վ իւր իւրան անձն
չէ՛ ատում. բայց կըկերակրէ
և կը պահէ նորան: Եփես.
Ե. 29:

Աշխարհքիս տրտմութիւնն,
մահ է գործում: Բ. Կոր.
Է. 10:

Ով որ էս աշխարհքումս
ապրուստի բաները ունենայ
և տեսնէ իւրան եղբայրն մէկ
բանի կարօտ և խնամքն նո՛ր
նից փակէ՝ էլ ի՞նչպէս բնակ-
ված կըլինի ա՛յ սէրն նորա-
նում: Ա. Յօհ. Գ. 17:

Թէ որ մին եղբայր կա՛մ քոյր
մերկ ըլինին, կամ օրի հա-
ցին կարօտ. ձեզանից մինն
նորանց ասէ. Թէ գնացէ՛ք
խաղաղութենով, տաքացէ՛ք, և
կուշտացէ՛ք. և ինչ որ մարմ-
նոյ պէտքն է՝ չէ՛ք տաք նո-
րանց՝ ի՞նչ օգուտ կըլինի.
Յակ. Բ. 15. 16:

3.) Էն ժամանակն կասէ
(Յէ-

(Յիսուս) և ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական. որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա: Զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և ոչ արբուցէք զիս. օտար էի, և ոչ ժողովեցէք զիս. մերկ էի, և ոչ զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ և ՚ի բանտի՝ և ոչ տեսէք զիս: Ամէն ասեմ ձեզ՝ որովհետև ոչ արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ՝ և ոչ ինձ արարէք: Մատ. իե. 41—43. 45:

4.) Մի զանձանց վրէժխնդրէք սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան: Քանզի գրեալ է. իմ է վրէժխնդրութիւն՝ և ես հատուցից ասէ Տէր: Հռօմ. ժբ. 19:

Մի ասիցես թէ աւից զվրէժ ՚ի թշնամւոյն: այլ համբեր Տն. զի քեզ օգնական

(Յիսուս) նորանց՝ որ ձախ կողմին կը կենին. գնացէք ինձանից անիծվածներ յաւիտենական կրակի մէջն. որ պատրաստված է սատանային և նորա հրեշտակներին: Պատճառը որ սովեցի, և չի տուէք որ ուտեմ. ծարաւեցի, և ինձ չի խմացրէք. օտար էի, և ինձ չի տարաք. մերկ էի, ինձ շոր չի հագցրէք. հիւանդ էի՝ և բանտի մէջ. և չի տեսէք ինձ: Ճշմարիտ եմ ասում ձեզ որովհետև էս փոքրիկներիս մէկին չի արէք՝ ինձ էլ չի արէք: Մատ. իե. 41—43. 45:

4.) Սիրելիք՝ ձեր անձներիդ քէնը չի խնդրէք: բայց տեղ տուէք բարկութեան. պատճառը որ գրված է՝ թէ քէն խնդրելն իմն է. և ես կըհատուցանեմ ասումէ Տէրն: Հռօմ. ժբ. 19:

Չի ասես թէ քէն կառնեմ թշնամիցն. բայց համբերիր Տէրին. որ քեզ օգնական.

նակամն լիցի։ Ղուկ. Ի. 22։

Յանձնառական

1.) Մի յաղթիր ՚ի չարէն․ այլ յաղթեա բարեաւքն չարին։ Հռոմ. ԺԲ. 21։

Զգոյշ լերուք՝ գուցէ ոք չարի զչար հատուցանիցէ։ այլ յամենայն ժամ զբարեաց զհետ երթայք առ միմեանս, և առ ամենեսեան։ Ա. Թես. Ե. 15։

2.) Զմիմեանց բեռն բարձէք՝ և այնպէս կատարեցէք մի ըստ միոջէ զօրէնսն Քրի։ Գաղատ. Զ. 2։

Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա. Ղուկ. Զ 31։

Եօթներորդ պատուիրան։

Մի շնար։

ա. Հրաժարական

1.) Լուարուք՝ զի ասացաւ. մի՛ շնար բայց ես ասեմ ձեզ

նամքն ըլնի։ Ղուկ. Ի. 22։

Յանձնառնելէ

1.) Մի յաղթվիր չարիցն․ բայց բարութիւնովը յաղթիր չարին։ Հռոմ. ԺԲ. 21.

Զգոյշ կացէք՝ չըլնի որ մէկն չարին փոխ չար հատուցանէ։ բայց ամեն ժամանակ բարուն ետևէն գնացէք մէկ մէկու հետ, և ամեն մարդկանց հետ։ Ա. Թես. Ե. 15։

2.) Մէկզմէկու բեռն վեր կալէք՝ և էնպէս մէկը մէկու հետ կատարեցէք Քրի. օրէնքն։ Գաղատ. Զ. 2։

Էնչպէս որ ուզումէք թէ մարդիկ ձեզ անեն, էնպէս էլ արէք դուք նորանց։ Ղուկ. Զ. 31։

Եօթներորդ պատուիրանքն։

Շնութիւն մի՛ անիր

ա. Հետեւանք

1.) Լսեր էք որ ասվեց՝ թէ շնութիւն մի՛ անիր. բայց ես ասումեմ

ձեզ. թէ ամենայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում։ Մատթ. Ե. 27. 28։

ասում եմ ձեզ. թէ ամեն մի որ կնիկ արմատի վր նայէ՝ նորան ցանկանալոյ համր, հենց էն ժամանակն շնացաւ նորա հետ իւր սրտումն։ Մատթ. Ե. 27. 28։

Պոռնկութիւն, և ամենայն պղծութիւն, կամ ագահութիւն, և անուանեսցի մի՛ 'ի միջի ձերում. որպէս և վայել է սրբոց։ Եւ զազրութիւն՝ կամ խօսք յիմարութեան, կամ խեղկատակութիւն՝ որ ոչ վայել է. այլ մանաւանդ գոհութիւն։ Եփես. Ե. 3. 4։

Պոռնկութին, և ամեն պղծութին, կամ ագահութին, նորանց անունն էլ ձեր մէջ պիտի չի յիշվի. ինչպես սուրբերին վայելում է։ Եւ վատութին կամ յիմարութե խօսք, կամ տնազ անելն՝ որ իսկի չի վայելիլ. բայց աւելի գոհութիւն։ Եփես. Ե. 3. 4։

Սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Այ։ Բ. Կոր. Է. 1։

Սրբենք մեր անձները ամեն պղծութինից մարմնոյ և հոգւոյ. կատարենք սրբութիւն աստուծոյ վախովը։ Բ. Կոր. Է. 1։

2.) Որպէս 'ի տուընջեան զգաստացեալք շրջիցուք. մի՛ անառակութեամբք՝ և արբեցութեամբք. և մի՛ խառն անկողնօք՝ և պղծութեամբք. և մի՛ նախանձու՝ և

2.) Ինչպես ցերեկով արթուն մնանք. ոչ անառակութենով՝ և հարբեցութենով. ոչ խառնուած անկողիներով (*)՝ և պղծութենով. և ոչ նախանձով և հակառակութենով։

(*) Պէօշակներով։

| | |
|---|---|
| և հակառակութեամբ։ Այլ զգեցարուք զՏէր Յիսուս ք̃ս̃ն. և մարմնոյ խնամ մի՛ տանիք ՚ի ցանկութիւնս։ Հռով. ԺԳ. 13. 14։ | թ̃ուով։ բայց հագէք տ̃ր յ̃ս̃ Քրիստոս. և ցանկութեան համար (չէր) մարմնոյն խնամք մի՛ անէք։ Հռով. ԺԳ. 13. 14։ |
| Եղբարք՝ պարտապան եմք՝ ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ։ Զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք՝ մեռանելոց էք։ Հռով. Ը. 12. 13. | Եղբարք՝ պարտական ենք՝ որ մարմնով մարմնոյ (հաճ-քէն) պէտ չէ ապրինք։ պատճառը թէ որ մարմնոյն պ̃ս ապրէք՝ պիտի մեռնէք։ Հռով. Ը. 12. 13։ |
| Զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շռայտութեամբ և արբեցութեամբ և հոգօք աշխարհականօք. և յանկարծակի հասանիցի ՚ի վերայ ձեր օրն այն։ Ղուկ. ԻԱ. 34. | Աչքաբաց կացէք (չէր) անձըներնի վերայ. չըլինի որ ձեր սիրտերնին ծանրանայ շատ ուտելով և հարբեցութ̃ով. և աշխարհքիս հոգս քաշելով և յանկարծակի հասնի ձեր վ̃ր էն օրն։ Ղուկ. ԻԱ. 34։ |
| Մի՛ արբենայք գինւով, յորում զեղխութիւն է. այլ մանաւանդ լցարուք հոգւով սրբով։ Եփես. Ե. 18։ | Գինով չըլ հարբենաք, որ նորանում անառակութի̃ է. բայց աւելի՛ նոր հոգւով լըցվեցէք։ Եփես. Ե. 18։ |

---

| | |
|---|---|
| Բ. Յանցնաւորական։ | Բ. Յանցնաւորնէլէ։ |
| (1. Այս են կամքն Աստուծոյ, սրբութիւն ձեր. ՚ի բաց լինել ձեզ ՚ի պոռնը-կուէ̃ | 1.) Էս է Այ̃ կամքն, ձեր սրբվիլն. որ պոռնկութենից հեռու լինիք. և գի-տէք |

կութենէ, գիտել իւրաքանչիւր ումեք ՚ի ձէնջ զիւր ամանն ստանալ սրբութբ և պատուով։ Մի՛ ՚ի ցաւս ցանկութեան՝ որպէս և այլք հեթանոսք՝ որք ոչ գիտեն զԱծ։ Ա. Թեսաղ. Դ. 3—5։

տէք ամենն ձեզանից իւր ամանն ստանայ սրբութով և պատուով։ չէ թէ ցանկուե ցաւի մէջ՝ ինչպես որ ուրիշ հեթանոսները՝ որ չե՛ն ճանաչում Ածը։ Ա. Թեսաղ. Դ. 3—5։

Որք Քրիստոսեանքն են, զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին՝ կարեօք և ցանկութեամբք հանդերձ։ Գաղատ. Ե. 24։

Նորանք որ Քրիստոսին են, իրանց մարմինները խաչեն հանում՝ վատ ցաւերի և ցանկութիւնների հետ։ Գաղատ. Ե. 24։

Եթէ ըստ մարմնոյ կեցջիք՝ մեռանելոց էք, իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք։ Հռոմ. Ը. 13։

Եթէ մարմնոյն պէս ապրէք՝ պիտի մեռնէք, բայց թէ որ հոգւով մարմնոյ գործքը սպանէք՝ կապրէք։ Հռոմ. Ը. 13։

2.) Զգաստացարո՛ւք այսուհետև՝ և լերո՛ւք զուարթունք ՚ի յաղօթս։ Ա. Պետ. Դ. 7։

2.) Զգաստ կացէք հիմիկաց ետն՝ և արթուն կացէք աղօթքումն։ Ա. Պետ. Դ. 7։

---

## Ութերորդ պատուիրանն։

## Մի՛ գողանար։

### Ա. Հրաժարականն։

1.) Որ գողանայր, մի՛ ևս գողասցի՝ այլ մանաւանդ վաստա-

## Ութերորդ պատուիրանը։

## Մի՛ գողանար։

### Ա. Հեռանալը։

1.) Որ գողանում էր, էլ չի գողանայ՝ բայց աւելի իխտ

վաստակեսցէ՝ գործել ձեռամբ իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ՝ ում պիտոյ իցէ։ Եփես. Դ. 28,

2.) Մի՛ զլասցես զվարձն տնանկին՝ և զկարօտելոյ յեղբարց քոց. կամ յեկաց քաղաքաց քոց. Նոյն օրին հատուսցես զվարձս նորա. և մի՛ մտանիցէ արեգակն ՚ի վերայ այնորիկ. զի տընանկ է. և այն է յոյս նորա. և մի՛ բողոք հարկանիցէ զքէն առ Տէր. և մի՛ լինիցի այն քեզ ՚ի մեղս։ Բ. Օրին. Իդ. 14. 15։

Մի՛ լինիցի յամանի քում կշիռ, և կշիռ. մեծ կամ փոքր։ Եւ մի՛ լինիցի ՚ի տան քում չափ, և չափ. մեծ կամ փոքր։ Կշիռ սոյգ և արդար եղիցի քեզ՝ և չափ սոյգ և արդար եղիցի քեզ։ զի բազմօրեայ եղիցես ՚ի վերայ երկրին՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ՚ի ժառանգութիւն. Զի պիղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն, որ առնէ զայն և

ամ

պիտի աշխատէ՝ իւրան ձեռքովն բարին գործէ. որ կարողանայ տալ՝ ում որ պէտք լինի։ Եփես. Դ. 28։

Աղքատի, քո կարօտեալ եղբարներին մինին՝ կամ նոր քո քաղաքդ և կածներին վարձքն չի ուրանաս. հենց էն օրը նորան ցվարձքն հասցնես. էն բանին վըր արեգակն չի մըտնի. պատճառը որ աղքատ է, և նորա յոյսն էն է. և քեզանից Տէրին գանգատ չի անի, որ քեզ համար մեղք չի լինի։ Բ. Օրին. Իդ. 14. 15։

Քո ամանումն կշեռք և կշեռք. մեծ կամ փոքր չի լինի։ Եւ քո տանդ չափ, և չափ. մեծ կամ փոքր չի լինի։ Կշեռք ճշմարիտ և արդար լինի քեզ, և չափ ճըշմարիտ և արդար լինի քեզ, որ շատ ապրիս երկրին վերայ՝, որ Տէրն քո Աստուածն կըտայ քեզ ժառանգելոյ համար. Պատճառը որ պիղծ է Տէրին քո Ածուն ամենին, որ էն անումէ. և

ամենն

ամ՚ որ առնէ զանիրաւութիւն։ Բ. Օրին. իե. 13—15։

Փոխ առնու մեղաւորն. և ոչ հատուցանէ. այլ որ արդարն է՝ ողորմի, և տայ։ Սաղ. լզ. 21։

Որք կամին մեծանալ՝ անկանին 'ի փորձութիւնս և 'ի որոգայթս, և 'ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս. որք ընկղմեն զմարդիկ 'ի սատակումն և 'ի կորուստ։ Զի արմատ ամենեցուն չարեաց՝ արծաթասիրութիւն է։ որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան 'ի հաւատոյն, և զանձինս արկին ընդ բազում ցաւօք։ Ա. Տիմ. Զ. 9. 10։

Որ ոչն կամիցի գործել՝ և կերիցէ մի։ Բ. Թես. Գ. 10։

---

Բ. Յանցնաւորաչանէ։

1.) Շահավաճառ մեծ՝ աստու-

ամենին որ անիրաւութին է անում Բ. Օրին. իե. 13—16։

Մեղաւոր (Յարդըն) փոխ առնումէ. և ետ չի տալիս բայց էն որ արդարն է՝ ողորմումէ և տալիս։ Սաղ. լզ. 21։

Նորանք որ կամենումեն մեծանալ՝ ընկնումեն փորձանքի և. որոգայթների (*) մէջ, և շատ անմիտ և վնաս բերող ցանկութիւններին մէջ, որ խեխտումեն մարդիկը սատակելի և կորուստի մէջ. Պատճառը որ ամեն չարութիւնների արմատն՝ արծաթ սիրելն է՝ որ նորան մին քանիներն ցանկացան՝ և հաւատիցը ծուվեցին և իւրանց անձիները ձգեցին շատ ցաւերի մէջ։ Ա. Տիմ. Զ. 9. 10։

Ո՛վ որ չի կամենայ գործել նա էլ չի պիտի ուտէ։ Բ. Թես. Գ. 10։

---

Բ. Յանցն առնելէ։

1.) Մեծ շահ բերող է աստու-

---

(*) Ծուղակները

աստուածպաշտութիւն է բաւականութեամբ հանդերձ. զի ոչ ինչ բերաք յաշխարհ և ո՛չ տանել ինչ կարասցուք։ Այլ ունիմք զկերակուր և հանդերձս, և այնու շատասցուք։ Ա. Տիմ. Զ. 6—8։

Գանձեցէք ձեզ գանձս յերկինս. ուր ո՛չ ցեց՝ և ո՛չ ուտիճ՝ ապականեն՝ և ո՛չ գողք ական հատանեն, և գողանան։ Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։ Մատ. Զ. 20. 21։

Յասել ինձ ցամբարիշտն թէ մահու մեռջիր. և դարձցի ՚ի մեղաց իւրոց. և արասցէ իրաւունս՝ և զարդարութիւն։ Եւ զգրաւ պարտապանին ՚ի բաց տայցէ. և զյափշտակութիւնն դարձուցանիցէ. ՚ի հրաման կենաց գնասցէ. չառնել զանիրաւութիւն. կելով կեցցէ՝ և մի՛ մեռցի։ Եզեկ. ԼԳ. 14. 15.

Եկն

ածպաշտութիւն բաւական լինելովն։ պատճառը որ ոչինչ չենք բերել էս աշխարհքս՝ և ոչինչ կարող չենք տանիլ Բայց եթէ ունենք կերակուր և շորեր, նորանցով էլ հերիքանանք։ Ա. Տիմ. Զ. 6—8։

Ձեզ գանձ հաւաքեցէք երկինքումը. որ էն տեղ ո՛չ ցեց՝ և ո՛չ ժանգ չե՛ն փչացնիլ՝ և գողերն տափը չե՛ն փորիլ. և գողանալ։ Պատճառը՝ որ տեղ որ ձեր գանձերն են՝ ձեր սիրտներն էլ էնտեղ կըլինին։ Մատ. Զ. 20. 21։

2.) Երբ որ ես ամբարիշտ մարդին ասեմ, թէ մահով պիտի մեռնես, և իւր մեղքերիցն ետ դառնայ, և իրաւունք և արդարութիւն անէ, և պարտատիրոջ գրաւն իւրան տայ, և խլածն ետ դարձընէ, կեանքի հրամանունքի գնայ, և անիրաւութիւն չանէ՝ լաւ կապրի՝ և չի՛ մեռնիլ։ Եզեկ. ԼԳ. 14. 15։

Եկաւ

Եկն՝ եկաց զաքէոս՝ և ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Ղուկ. ԺԹ. 8։

Եկաւ՝ կանգնեց զաքէոսն՝ և ասեց Տէրին. Տէր՝ ահա իմ ապրանքիս կէսն կըտամ աղքատներին. և թէ մէկն մարդ զրկեցի՝ մէկին տեղ չորս կըհատուցանեմ։ Ղուկ. ԺԹ. 8։

---

Իններորդ պատուիրան։

Մի՛ սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ։

Ա. Հրաժարականն։

1.) Մի՛ խոտորեսցես զիրաւունս տնանկի 'ի դատաստանի իւրում։ Յամենայն 'ի զուր բանէ 'ի բաց լինիցիս. և զանպարտն՝ և զարդարն՝ մի՛ սպանանիցես. և զամբարիշտն մի՛ արդարացուցանիցես. վասն կաշառուի։ Եւ կաշառ մի՛ առնուցուս. զի կաշառ կուրացուցանէ զաչս համարձակահայեցաց. և ապականէ զբանս արդարս։ Ելից. ԻԳ. 6—8։

Որ արդար համարի զանիրաւն և անիրաւ զարդարն.

պիղծք

---

Իններորդ պատուիրան։

Սուտ վկայուն մի՛ անիր քու ընկերիդ վրայ։

Ա. Հեռանալու

1.) Աղքատի իրաւունքը չի ծռես իրան դատաստանումը. Ամեն անպէտք խօսքից հեռու կենաս. և անպարտ, և արդար մարդն չի սպանես. և կաշառքի համար ամբարիշտ մարդը չի արդարցնես։ և կաշառք չի առնես. պատճառը որ կաշառքն կըքոռացնէ համարձակ մըտիք տուողներին. և կըփըչացնէ արդար խօսքերը. Ելից. ԻԳ. 6—8։

Ո՛վ որ արդարը անիրաւ համարի, և անիրաւը արդար.

եր-

պիղծք են՝ և գարշելիք երկոքեան առաջի Տեառն։ Առակ. ժե. 15։

2.) Մի՛ բամբասէք զմիմեանս եղբարք. որ բամբասէ զեղբայր՝ կամ դատէ զեղբայր իւր՝ զօրէնս բամբասէ՝ և զօրէնս դատէ։ Եւ եթէ զօրէնս դատիցես՝ ո՛չ առնող օրինացն ես՝ այլ դատաւոր։ Դու ո՛ ես՝ որ դատես զընկերն։ Յակ. դ. 11 և 13։

Մի՛ դատէք՝ զի մի՛ դատիջիք. զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք. և որով չափով չափէք, չափեսցի ձեզ։ Մատ. է. 1. 2։

Մի՛ ստիցէք. և մի՛ զրպարտիցէք իւրաքանչիւր զընկեր իւր։ Ղևտ. ժթ. 11։

Ի բաց ընկեցէք զստութիւն։ խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք։ Եփես. դ. 25։ (3.) Պար-

երկուսն էլ պիղծ և գարշելի են տէրի առաջին։ Առակ. ժե. 15։

2.) Մէկ զմէկու չի բամբասէք եղբարք. ով որ իւրան եղբօրն բամբասէ, կամ դատէ իւր եղբայրը. օրէնքին է բամբասում՝ և օրէնքին է դատում. և թէ որ օրէնքին դատես, էլ օրէնքին պահող չես՝ բայց դատող։ Դու ով ես որ քո ընկերդ դատումես։ Յակ. դ. 11. և 13։

Չի դատէք՝ որ չի դատվիք. պատճառը որ՝ ինչ դատաստանով դատէք՝ կըդատվիք։ և ինչ չափով չափէք, կը չափվի ձեզ։ Մատ. է. 1. 2։

Չի ստէք. և զուր տեղն պարտաւոր չի շինէք ամէնքդ իւր ընկերն։ Ղևտ. ժթ. 11։

Դուրս ձգեցէք ստութիւնը ճշմարտութիւն խօսեցէք ամեն մարդ իւր ընկերին հետ, պատճառը որ՝ մէկ մէկու անդամներ ենք։ Եփես. դ. 25։ 3.) Պար-

Պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն այսպիսիք պարծանք չարութեան են: Յակ. Դ. 16:

3.) Պարծենումէք ձեր ամբարտաւանութեան մէջ. ամեն էսպէսի պարծանքները չարութեն (պարծանք) են: Յակ. Դ. 16:

Պիղծ է առաջի Տեառն ամենայն մեծամիտ: Առակ. ԺԶ. 5:

Ամեն մեծամիտ մարդ, որ առաջին պիղծ է: Առակ. ԺԶ. 5:

---

Բ. Յանցանաւորաց:

Բ. Յանցանք անելու:

1.) Լուացարուք՝ սրբեցարուք. ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձերոց առաջի աչաց իմոց: դադարեցէք ՚ի չարեաց ձերոց: Ուսարուք զբարիս գործել: խնդրեցէք զիրաւունս. փրկեցէք զրկեալն՝ դատ արարէք որբոյն. և տուք իրաւունս այրւոյն: Եսայ. Ա. 16. 17:

1.) Լուացվեցէք՝ սրբվեցէք. ձեր անձնից ձեր չարութիւնները դուրս ձգեցէք իմ աչքերիս առաջին: ձեր չարութիւնիցն դադարեցէք (1): Սովորեցէք բարի գործելն: իրաւունքը խնդրեցէք. զրկվածին փրկեցէք՝ դատ արէք որբոյն (2) և իրաւունք տուէք անմարդ կնկանն: Եսայ. Ա. 16. 17:

2.) Եղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնիցի ոք ՚ի ձէնջ յինչ և իցէ յանցանս՝ դուք՝ որք հոգեւորքդ էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան: զգոյշ

լինիցիք

2.) Եղբարք՝ թէ որ ձեզանից մինն յանկարծ բռնվի ինչ մեղքով որ լինի՝ դուք՝ որ հոգևորներդ էք: հաստատեցէք էնպէսը հանդարտութեն հոգւովը: աչքաբաց

բաց

---

(1) դինջացէք: (2) եթիմին:

Լինիցիք անձանց՝ զի մի՛ և դուք փորձիցիք։ Գաղա. Զ. 1։

(Յովհ. Ոսկեբերանոյ)... մի՛ զոք հայհոյել՝ անխռովս լինել, հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել։ Տիտ. Գ. 2.

3.) Զգեցարուք այսուհետև իբրև ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք՝ զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն։ Ներել միմեանց. շնորհել իրերաց. եթէ ուրուք|զումեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս Աստուած Քրիստոսիւ շնորհեաց ձեզ՝ նոյնպէս և դուք. Կողո. Գ. 12. 13։

Աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ 'ի Տէր. արժանի գնալ կոչմանն, յոր կոչեցայք։ Ամենայն խոնարհութեամբ՝ և հեզութեամբ, և երկայնմտութեամբ՝ ան-

սաւ

բա՛յց կացէք (չէք) անձներին, որ դուք էլ չի փորձվիք։ Գաղատ. Զ. 1։

(Յովհաննէս Ոսկեբերան) ....... մինին ուշունց չի տան՝ անկռիւ (և) հանդարտ կենան. ամեն ցածունի (*) ամեն մարդկանց ցոյց տան։ Տիտ. Գ. 2։

3.) Հագէք հիմիկաց ետն ինչպէս Ա՜յ ընտրածներին՝ ինչպէս ս՜բերին՝ և սիրվածներին՝ գութը, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, երկայնմտութիւնը։ Ներեցէք և շնորհեցէք մին մինի, թէ որ մինն մինի վերայ նեղացած լինի, ինչպէս Աստուած Քրիստոսիւ բաշխեց ձեզ՝ էնպէս էլ դուք։ Կողո. Գ. 12. 13։

Աղաչումեմ ես ձեզ՝ որ կապած եմ տէրին. արժանի գնայք էն կանչվիլին, որին մէջ որ կանչվեցիք, որ ամեն խոնարհութիւնով, հեզութիւնով և համբերութիւնով մին

մինի

(*) [illegible]։

տալ միմեանց սիրով։ Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան։ Եփես. Դ. 1—3։

Տասներորդ պատուիրան։

Մի՛ ցանկանար տան ընկերի քո, և մի՛ անդոյ նորա. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ, և մի՛ ծառայի նորա. և մի՛ աղախնոյ նորա. և մի՛ եզին նորա. և մի՛ իշոյ նորա. և մի՛ ամենայն անասնոյ նորա՝ և մի՛ ամենայնի զինչ ընկերի քո իցէ։

ա. Հրաժարականն։

1.) Ցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝ մի՛ ցանկանայցես։ Հռօմ. Է. 7։ Մի՛ ոք զանձին և եթ խնդրեսցէ՝ այլ և զընկերին։ Ա. Կորն. Ժ. 24։

մէնի հաւան կենաք սիրով և ջանք անենք պահել միաբանութիւնը հոգւոյ խաղաղութեան կապովն։ Եփես. Դ. 1—3։

Տասներորդ պատուիրանք։

Մի՛ ցանկանար քո ընկերի տանն, և ոչ նորա յանդին։ մի՛ ցանկանար քո ընկերի կնկանն, և ոչ նորա ծառային, և ոչ նորա աղախնկանն. և ոչ նորա եզանն, և ոչ նորա էշին. և ոչ նորա ամեն անասունքին՝ և ոչ ամենին ինչ որ քո ընկերինն է։

ա. Հետևանքը։

1.) Ցանկութիւնը չէի ճանաչիլը, եթէ օրէնքն չի ասէր՝ թէ մի՛ ցանկանար։ Հռօմ. Է. 7։ Չի լինի որ մէկն մենակ իւրան անձնի (օգուտը) խնդրէ՝ բայց իւր ընկերին (օգուտն) էլ։ Ա. Կորն. Ժ. 24։

Որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի. Մատ. Իգ. 12.

2.) Ամենեքին դուք որդիք լուսոյ էք՝ և որդիք տուընջեան։ չեմք գիշերոյ՝ չեմք խաւարի. Ապա մի՛ զքնով անկանիցիմք՝ որպէս և այլքն։ այլ արթունք, և զուարթունք եղիցուք. Ա. Թես. Ե. 5. 6.

---

Ե. Յանձնառականն։

1.) Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի՛ իբրև անիմաստք. այլ իբրև իմաստունք։ գնեցէք զժամանակս՝ զի աւուրքս չարութեան են. վասն այնորիկ մի՛ լինիք անմիտք՝ այլ իմացարո՛ւք զինչ կամք են Տեառն։ Եփես. Ե. 15-17.

2.) Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն. և առցէ

Ո՛վ որ իւրան անձն բարձրացնէ, կը խոնարհվի, և ո՛վ որ իւրան անձն խոնարհացնէ՝ կը բարձրանայ ։ Մատ. Իգ. 12.

2.) Դուք ամենքդ էլ լուսոյ որդիք՝ էք՝ և ցերեկի որդիք. չե՛նք գիշերի՝ չենք խաւարի. Ուրեմն հիմիկ չի՛ պիտի քնենք՝ ինչպէս որ ուրիշներն. բայց արթուն և քաջ լինինք. Ա. Թես. Ե. 5. 6։

---

Ե. Յանձն առնելը։

1.) Տեսէք՝ թէ ինչպէ՛ս պիտի ճշմարտութե՛ով գնաք. ո՛չ անխելքի պէս. բայց իմաստունի պէս. գնով առէք ժամանակս՝ որ էս օրերս չար են. Նորա համար անմիտք չի՛ լինիք՝ բայց իմացէք թէ ի՛նչ է տէրի կամքն։ Եփես. Ե. 15—17։

2.) Թէ որ մինն ուզումէ ինձ ետնայ գալ պիտի (ի-րան) անձն

առցէ զխաչ իւր. և եկես-
ցէ զկնի իմ։ Զի որ կամի-
ցի զանձն իւր կեցուցանել՝
կորուսցէ զնա։ և որ կո-
րուսցէ զանձն իւր վասն
իմ, գտցէ զնա, Մատթ. ԺԶ.
24. 25։

անձն ուրանայ, և իւր խաչն
վեր առնի և ինձ ետևայ
գայ։ պատճառը՝ նա որ կա-
մենումէ իւրան անձն ապրա-
ցընել՝ կըկորցնէ նորան։ և
նա որ իւր անձն ինձ հա-
մար կըկորցնէ, կըգտնէ նո-
րան։ Մատթ. ԺԶ. 24. 25։

---

Բովանդակութիւն օրինաց

Այսուհետև եղբարք՝ որ
ինչ ճշմարտութեամբ է՝
որ ինչ պարկեշտութեամբ,
որ ինչ արդարութեամբ,
որ ինչ սրբութեամբ, որ
ինչ սիրով, որ ինչ համբաւ
բարեաց, որ ինչ քաջութիւն,
որ ինչ գովութիւն՝ զայն
խորհիջիք։ Զոր ուսայքն,
և ընկալայք, և լուայք և
տեսէք յիս՝ զայն արարէք։
և Աստուած խաղաղութեան
եղիցի ընդ ձեզ։ Փիլիպ.
Դ. 8. 9։

Որ սիրէ զընկերն, զօրէնսն
կատարէ։ Զի մի՛ շնայցես,
և

Օրէնքի մէկ տեղ ժողովելը։

Ախմիկաց եմն եղբարք՝
ինչ որ ճշմարտութիւնով է՝
ինչ որ պարկեշտութիւնով (*)
է, ինչ որ արդարութիւնով է,
ինչ որ սրբութիւնով, ինչ որ
սիրով, ինչ որ բարի անու-
նով, ինչ որ քաջութիւնով, ինչ
որ գովասանքով՝ էն մտա-
ծեցէք։ Ինչ որ սովորեցիք,
և ընդունեցիք, և լսեցիք,
և տեսիք ինձանում՝ էն ա-
րէք։ և խաղաղութեան Աստուածն
ձեզ հետ կըլինի։ Փիլիպ.
Դ. 8. 9։

Նա որ ընկերը սիրումէ,
օրէնքն է կատարում։ մի՛
շնութիւն

---

(*) Եպէֆլէ

և մի՛ սպանանիցես։ և մի՛ գողանայցես․ և մի՛ սուտ վկայիցես․ և մի՛ ցանկանայցես, և եթէ այլ ինչ պատուիրան է․ յայն բան բովանդակի․ եթէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ։ Լրումն օրինացն սէր է։ Հռօմ․ ժգ․ 8—10։

շնութիւն անելը։ մի՛ սպանելը, մի՛ գողանալը, և մի՛ սուտ վկայելը, մի՛ ցանկանալը և թէ ինչ որ ուրիշ պատուիրանք կան՝ էն խօսքումն է տեղաւորվում, թէ պիտի սիրես քո ընկերդ ինչպէս քո անձնդ։ Սէրն չար չի անում իւր ընկերին։ օրէնքի կատարումն սէրն է։ Հռօմ․ ժգ․ 8—10։

## Մեղք։

Ամենայն, որ զմեղս գործէ, նա և զանօրէնութիւն առնէ՝ և ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է։ Ա․ Յօհ․ Գ․ 4։

Ամենայն անիրաւութիւն՝ մեղք են․ և են․ մեղք որք մահու չափք են։ Ա․ Յօհ․ Ե․ 17։

Ծառայ՝ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ, և ոչ պատրաստեսցի ըստ կամաց նորա՝ արբցէ գան բազում։ Իսկ որ ոչն գիտիցէ, և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ

## Մեղքեր։

Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է անում՝ և մեղքն հէնց ինքըն անօրէնութիւն է։ Ա․ Յօհ․ Գ․ 4։

Ամեն անիրաւութիւն՝ մեղք է․ և մեղքերը կան որ մահու չափ են։ Ա․ Յօհ․ Ե․ 17։

Էն ծառայն՝ որ իւրան Տէրի կամքն գիտում է, և նորա կամքին պէս չի պատրաստել, շատ կըթակվի։ Իսկ էն որ չի գիտել, և ծեծելու արժանի բան կըգործէ

արբցէ գան սակաւ։ ամե-նայնի որում շատ տուեալ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ. և որում բազում աւանդե-ցաւ, առաւել ևս պահան-ջեսցեն ՚ի նմանէ։ Ղուկ. ժբ. 47. 48։

ծէ, քիչ կըծեծվի։ Ամենին ում որ շատ տուվաւ, շատ կըխնդրվի նորանից. և ում որ շատ պահ տուվաւ, էլ աւելի կուզեն նո-րանից։ Ղուկ. ժբ. 47. 48։

---

### Օրէնօքն մարդ ոչ կարէ ապ-րել։

Պահեսջի՛ք զամենայն հրա-մանս իմ և զամենայն զի-րաւունս իմ, արասջի՛ք ըզ-նոսա։ զոր արարեալ մար-դոյ՝ կեցցէ նոքօք։ Ես եմ Տէր Աստուած ձեր։ Ղև. ժը. 5։

Որ ոք զամենայն օրէնսն պահիցէ, և միով իւիք ինչ գթլիցէ՝ եղև ամենայն օրի-նացն պարտական։ Զի որ ասացն՝ թէ մի՛ սպանանիցես ասաց թէ և՝ մի՛ շնայցես. զի եթէ սպանանիցես ոչ, բայց շնայցես՝ եղեր յան-ցաւոր օրինացն։ Յակ. բ. 10. 11։

Անի-

---

### Օրէնքովը մարդ չէ կարող ապրել։

Պահեցէ՛ք իմ ամեն հրա-մանքս, և իմ ամեն իրա-ւունքս, անէ՛ք նորանց։ մարդն էն անելով, նորան-ցով կապրէ։ Ես եմ Տէրն ձեր աստուածն։ Ղև. ժը. 5։

Ո՛վ որ ամեն օրէնքը կը-պահէ, և մինով հենց՝ ինչ որ լինի, թեքվի, ամեն օրէնքին պարտական կըլի-նի։ Պատճառը՝ նա որ ա-սեց՝ թէ չի՛ սպանես, ասեց էլ թէ շնութիւն չի՛ անես. պատճառը որ՝ թէ չի սպա-նես, բայց շընութիւն ա-նես, օրէնքը զանց արիր։ Յակ. բ. 10. 11։

Անի-

Անիծեալ ամենայն մարդ՝ որ ո՛չ կայցէ յամենայն բանս օրինացս այսոցիկ՝ առնել զնոսա. և ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի։ Բ. Օ-րէն. իէ. 26։

Ի գործոց օրինաց ո՛չ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա (Այ)։ քանզի օրինօքն է գիտութ մեղաց։ Հռօմ. գ. 20.

Որք միանգամ 'ի գործոց օրինացն են։ ընդ անիծիւք են։ քանզի գրեալ է թէ անիծեալ ամենայն մարդ՝ որ ո՛չ կայցէ յամենեսեան գրեալսն 'ի գիրս օրինաց՝ առնել զամենայն։ Զի օրինօքն ոչ ո՛ք արդարանայ առաջի Աստուծոյ։ այն յայտ իսկ է։ զի արդարն՝ ասէ, ի հաւատոց կեցցէ։ Գաղատ։ գ. 10. 11։

Անիծեալ է ամեն մարդն՝ որ չի կենայ էն օրէնքի ամեն խօսքերումն, որ անէ սորանց. և պիտի ասէ ամեն ժողովուրդն՝ Թող լինի։ Բ. Օ-րէն. իէ. 26։

Օրէնքի գործքերիցը չի արդարանալ ամեն մարմին նր (Այ) առաջին. պատճառը որ՝ օրէնքովն է մեղքերի գիտութինն։ Հռօմ. գ. 20։

'Նոքա որ մին անգամ օրէնքի գործքերիցն են. անէծքի տակին են, պատճառը որ՝ գրուած է, թէ անիծեալ լինի ամեն մարդ՝ որ չի մնալ օրէնքի ամեն գրվածի մէջն՝ որ կատարէ ամենն էլ. պատճառը որ՝ օրէնքովն ոչով չի արդարանալ այ առաջին. էն էլ յայտնի է. ինչու որ ասումէ՝ թէ արդարն հաւատով կապրի. Գաղատ. գ. 10. 11։

---

## Ուխտն աւետարանական 'ի ձեռն ՅԻ ՔԻ մեր խոստանայ հաւատացելոց։

### ա. Փրկութիւն։

Ո՛չ եթէ ամօթ ինչ համարիմ

---

## Աւետարանական ուխտն միջնորդութեամբ մեր (*) խոստանումէ հաւատացողներին։

### ա. Փրկութիւնը։

Չէ թէ ամօթ եմ համա-

(*) Տուքն։

մարում

մաչեմ զաւետարանն. քանզի զօրութիւն Այ է ի փրկութիւն՝ ամենայն հաւատացելոց. նախ Հրէի, և ապա հեթանոսի։ Զի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի ի հաւատոց ի հաւատս. որպէս և գրեալ է. թէ արդարն ի հաւատոց կեցցէ։ Հռոմ. ա. 16. 17։

Կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց։ Հռոմ. Ժ. 4։

Բայց արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է, վկայեալ յօրինաց անտի՝ և ի մարգարէից։ Քանզի արդարութիւնն Աստուծոյ ի հաւատոց անտի Յիսուսի Քի յամենայն հաւատացեալս։ Հռոմ. Գ. 21 22։

Ամենեքեան մեղան. և նուազեալ են ի փառացն Այ։ Արդարանան ձրի նորին շնորհօք՝ ի ձեռն

մաչում աւետարանը, պատճառը որ՝ Այ զօրութին է ամեն հաւատացողներին փըրկութեն համար. առաջ Հրէին, (*) և յետոյ կռապաշտին. պատճառը որ՝ Այ արդարութին յայտնվումէ նորանով հաւատիցն հաւատի մէջ, ինչպէս որ գրված է, թէ արդար (մարդն) հաւատով կապրի։ Հռոմ. ա. 16. 17։

Օրէնքի վերջն քրիստոսն է՝ որ արդարացնող է ամեն հաւատացողներին։ Հռոմ. Ժ. 4։

Բայց հիմիկ առանց օրէնքին հենց Այ արդարութին յայտնված է, էն որ վկայութին տուված է օրէնքիցն՝ և մարգարէներիցն։ Պատճառը որ՝ Այ արդարութին հաւատիցն է յիսուսի քրիստոսի ամեն հաւատացողներին մէջ։ Հռոմ. Գ. 21. 22։

Ամեն մարդիք մեղանչեցին։ և նուազված են Այ փառքիցն։ Արդարանումեն ձրի (2) նորա շնորհքովն՝ փրկութեն

(1) ջհուդըն (2) մուֆթա.

ձեռն փրկութեան որ Ք՟ն Յի՟սուս։ Զոր յառաջն եդ Աստուած ՚ի քաւութիւն ՚ի ձեռն հաւատոցն արեամբ նորա, ՚ի հանդէս արդարութ՟ե ն՟ր վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց. ՚ի ներելն Աստուծոյ, ՚ի հանդէս արդարութեան նորա ՚ի ժամանակի յայսմիկ։ զի եղիցի նա արդար. և արդարացուցէ զայն՝ որ ՚ի հաւատոցն Յիսուսի։ Վասնզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝ առանց գործոց օրինաց։ Հռո՟մ. Գ. 23–26. 28.

Յուցցէ ՚ի յաւիտեանսն՝ որք գալոց են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ՝ ՚ի մեզ ՚ի Քրիստոս Յիսուս։ Զի շնորհօք նորա էք փրկեալք ՚ի ձեռն հաւատոց. և այս ոչ ՚ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգև է։ Ոչ ՚ի գործոց, զի մի՛ ոք պարծեսցի։ Եփե՟ս. Բ. 7—9.

փրկութի՟նովն, որ քրիստոսով յիսուսով (էր—), նորան որ Ա՟ծ առաջ դրաւ քաւութի՟ լինելոյ համար. նորա արիւնին հաւատալով որ իւր արդարութի՟նը ցոյց տայ առաջ գործած մեղքերը թողելու համար. երբ որ Ա՟ծ ներեց, իւր արդարութի՟նը էս ժամանակումս երևայնելու համար որ նա լինի արդար և արդարացնէ նորան՝ որ յԻ՟ հաւատից է։ Պատճառը որ՝ համարումենք՝ թէ մարդ առանց օրէնքի գործքերին հաւատով է արդարանում։ Հռո՟մ. Գ. 23—26. 28։

Ցոյց պիտի տայ յաւիտենական ժամանակներումն՝ որ կըգան՝ իւրան շնորհքի աւելի մեծութի՟նը՝ քաղցրութի՟նով մեզ համար քս՟ով յս՟ով։ Պատճառը որ՝ նորա շնորհքովն փրկվել էք հաւատովն. և էս էլ չէ թէ ձեզանից, բայց Ա՟յ պարգև է։ Չէ թէ գործքերից, որ ոչ ով չի պարծենայ։ Եփե՟ս. Բ. 7—9։

Այնմ որ ոչն գործիցէ՝ բայց հաւատայցէ յայն՝ որ արդարացուցանէ զամբարիշտս, համարին հաւատք նորա արդարութիւն ըստ առաջնորդութեան շնորհին աստուծոյ։ Հռով. դ. 4. 5։

---

## Ե. Օրհնութիւն և ժառանգութիւն յաւիտենական կենացն։

Որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել․ որոց հաւատացեն յանուն նորա, որք ոչ յարենէ․ և ոչ ՚ի կամաց մարմնոյ՝ և ոչ ՚ի կամաց առն․ այլ յԱստուծոյ ծնան։ Յօհ. ա. 12. 13։

Տեսէք՝ զորպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեցուք և եմք՝ վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ ծանեաւ զնա։ Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք․ և չև ևս է յայտ՝ եթէ զի՞նչ

Այն (մարդն) որ չի գործել՝ բայց կըհաւատայ նորան՝ որ ամբարիշտները արդարացնում է, նորա հաւատն կըհամարուի արդարութեան տեղ աստուծոյ առաջ սահմանուած շնորհքին պէս։ Հռով. դ. 4, 5։

---

## Ե. Աստուծոյ լինելը և յաւիտենական կեանքին ժառանգելը։

Այնտունք որ ընդունեցին նորան, նորանց իշխանութիւն տուեց՝ որ աստուծոյ որդիք լինին՝ նորանց որ կըհաւատան նորա անունին․ նորանք որ ոչ արիւնից, և ոչ մարմնի կամքից, և ոչ մարդոյ կամքից՝ բայց աստուծուց ծնուեցին։ Յօհ. ա. 2. 13։

Տեսէք՝ ինչպիսի սէր շնորհեց մեզ Հայրն, որ մեզ որդիք կոչվինք և ենք․ նորա համար աշխարհն մեզ չի ճանաչում՝ պատճառը որ չի ճանաչեց նորան։ Սիրելիներ՝ հիմի՛ մեզ որդիքներ ենք, և դեռ էլ յայտնի չէ՝ թէ

զինչ լինելոց իցեմք։ գի-
տեմք, զի յորժամ նա յայտ-
նեսցի՝ նման նմա լինելոց
եմք. զի տեսանելոց եմք
զնա՝ որպէս և էն։ ա. Յօհ.
գ. 1. 2։

Յորժամ քաղցրութիւն և
մարդասիրութիւն փրկչին
մերոյ Աստուծոյ յայտնեցաւ,
ոչ ՚ի գործոց արդարութե՝
զոր արարաք մեք. այլ ըստ
իւրում ողորմութեանն ապ-
րեցոյց զմեզ ՚ի ձեռն աւա-
զանին միւսանգամ ծննդեա-
նըն, և նորոգո. թ Հոգւոյն սբյ,
Զոր եհեղ ՚ի մեզ առա-
տութ, ՚ի ձեռն Յի Քի
փրկչին մերոյ։ Զի արդա-
րացեալք շնորհօք եղիցուք
ժառանգաւորք յուսով կե-
նացն յաւիտենականաց։ Տիտ.
գ. 4—7։

Օրհնեալ է ած՝ և Հայր
Տեառն մերոյ Յիսուսի Քի.
որ ըստ բազում ողորմու-
թեան իւրում ծնաւ զմեզ
վերստին ՚ի յոյս կենդանի.
՚ի ձեռն յարութեն Յի Քի
՚ի մեռելոց, յանեղծ և յա-
նարատ

թէ ինչ պիտի ըլլինք, գի-
տումենք թէ երբ նա կը-
յայտնուի՝ նորա նման պիտի
ըլլինք, պատճառը որ՝ կը-
տեսնենք նորան ինչպէս որ
կայ. ա. Յօհ. գ. 1. 2։

Երբ որ մեր Ած փրկչի
քաղցրութիւն և մարդասիրու-
թիւնն յայտնուեցաւ, չէ թէ
արդարութեն գործքերուն՝
որ արինք մենք. բայց իւ-
րան ողորմութիւնովն ապրացը-
րուց մեզ նոր մին էլ ծըն-
վելոյ աւազանովն՝ և սբ Հոգ-
ւոյ նորոգվելովն. նորան որ
առատութիւնով թափեց մե-
զանում մեր փրկիչ Յի-
սուսով քրիստոսով. Որ
շնորհքով արդարցած ժա-
ռանգող ըլլինք յու-
սով յաւիտենական կեանքին,
Տիտ. գ 4—7։

Օրհնեալ է ած՝ և մեր
Տէր Յի Քի Հայրն, որ իւր
շատ ողորմութիւնովն կրկին
ծնեց մեզ կենդանի յուսի
մէջ Յիսուսի Քի յարու-
թիւնովն մեռածներէ մէջէն,
չի ապականվելի և անա-
րատ

նարատ, և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ձեզ։ Ա. Պետ. Ա. 3. 4։

Նոյն հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։ և եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Այ՝ և ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդք լինիցիմք, և փառացն հաղորդք լինելոց եմք։ Հռօմ. Ը. 16. 17։

րատ և անթառամ ժառանգութեան մէջ՝ որ երկնքումըն պահված է ձեզ Ա. Պետ. Ա. 3. 4։

Հոգին ինքն վկայումէ մեր հոգւոյն, որ մեք որդիք ենք։ և թէ որ որդիք, յայտնի է թէ ժառանգողներ էլ (ենք), Աստուծոյ ժառանգողներ՝ և քրիստոսի ժառանգող ընկերներ. թէ որ չարչարանքին ընկեր ենք, փառքին էլ ընկեր կըլինինք։ Հռօմ. Ը. 16. 17։

---

Նոյն հաւատոյ պարտին հետեւանք լինել։

Ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփատութիւն ինչ կարող է՝ և ոչ անթլփատութիւն. այլ հաւատք՝ սիրով յաջողեալք։ Գաղատ. Ե. 6։

Մարմին առանց հոգւոյ մեռեալ է. սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են։

Գու

Բայց հաւատը պէտք է որ հետեւանք լինի։

Յիսուս Քրիստոսին թլփատելն՝ (*) և չթլփատելն ոչ ինչ չի կարող. բայց հաւատն՝ սիրով յաջողված։ Գաղատ. Ե. 6։

Մարմինն առանց հոգւոյ մեռած է, ինչպէս էլ հաւատն առանց գործքերին մեռած

(*) սիւննաթելըն։

Դու հաւատաս՝ զի մի է
Ա՛ծ. բարւոք առնես. և
դևք հաւատան, և սարսին։
Կամի՞ս գիտել ո՛վ մարդ-
մնոտի, զի հաւատք առանց
գործոց մեռեալ են։ Յակ.
Բ. 26. 19. 20։

Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝
Տէր՝ Տէր. մտցէ յարքայու-
թիւն երկնից. այլ որ առ-
նէ զկամս հօր իմոյ՝ որ յեր-
կինս է. Մատ. Է. 21։

Եթէ հայր կոչիցէք զայն, որ
առանց ակնառուութեան դատէ ը
իւրաքանչիւր գործոց. ապա
երկիւղիւ զձերոյ պանդըխ-
տութեան ժամանակս գնաս-
ջիք։ Զի ոչ ապականացու
արծաթեղինօք՝ և ոսկեղի-
նօք փրկեցայք 'ի ձերոց ու-
նայնութեան հայրենատուր
գնացիցն. այլ պատուական
արեամբն Ք՛ի. իբրև ան-
բիծ և անարատ գառին։
Որք նովաւ հաւատացիք
յԱ՛ծ՝ որ յարոյցն զնա 'ի
մեռելոց

մեռած է։ Դու հաւատու-
մես՝ որ ած մին է. լաւ ես
անում, դևերն էլ են հա-
ւատում, և դողում։ կամե-
նումես գիտել ով ոչինչ
մարդ. որ հաւատն առանց
գործքերի մեռած է։ Յակ.
Բ. 26. 19. 20։

Ոչ թէ ամենն որ ինձ ա-
սումէ՝ Տէր՝ Տէր. կմտնի
երկնքի արքայութեն. բայց
ով որ իմ հօր կամքը կա-
տարումէ՝ որ երկնքումն է։
Մատ. Է. 21։

Եթէ որ նորան հայր էք
կանչում, որ առանց երես
տեսնելոյ դատումէ ամենին
(է-բարեց) գործքերին չափ.
ուրեմն վախով ձեր պան-
դըխտութեան (*) ժամանակն
գնացէք։ պատճառը որ՝ ա-
պականվելի արծաթեղէն՝
կամ ոսկեղէն բաներով չէք
փրկվեցէք ձեր հօրից տուր-
ված դատարկ վարքերցն,
բայց պատուական արիւնովն
Քրիստոսի՝ ինչպէս անբիծ
և անարատ գառին։ Դուք
որ

(*) ղարիպութեան։

մեռելոց։ և ետ նմա փառս· զի հաւատքն ձեր և յոյս լի-ցին յԱծ։ ա. Պետ. ա. 17—19. 21։

որ նորանով հաւատացէք Ածուն՝ նա որ մեռածնե-րից նորան վերկացրուց, և նորան փառք տուհաւ· որ ձեր հաւատն և յոյսն լի-նի դէպ 'ի Ած։ ա. Պետ. ա. 17—19. և 21։

Որ յարեաւ 'ի կատարեալ օրէնս ազատութեան հայեցի, և 'ի նմին կացցէ՝ ոչ եղև նա լսօղ մոռացութեան՝ այլ առնօղ գործոյն։ Նա՝ յառ-նելն իւրում լիցի երանելի Յակ. ա. 25։

Նա որ աշխատում կատա-րել օրէնքին հաստատ մտիկ տայ և նորանում կըկենայ՝ նա չէլաւ մոռացող լսող՝ բայց գործ կատարող· նա իւր կատարելովն երանելի կը-լինի։ Յակ. ա. 25։

---

# ԳԼՈՒԽ Ը։

## Յաղագս եկեղեցւոյ Այ։

### Նա ժողովուրդ է Այ։

Այս է ուխտ՝ զոր ուխ-տեցից տանդ Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ Տր. տաց զօրէնս իմ 'ի միտս նո-ցա՝ և 'ի սիրտս նոցա գը-րեցից

## Այ եկեղեցւոյն համար։

### Նա ժողովուրդ է Այ։

Այս է ուխտն՝ որ պիտի դնեմ Իսրայէլի տանն հետ էն օրերից յետոյ՝ ա-սումէ Տէրն. կըտամ իմ օ-րէնքս նորանց մտքի մէջն՝ և

րեցից զնոսա. և եղէց նո-
յա յԱստուած. և նոքա ե-
ղիցին ինձ 'ի ժողովուրդ։
Եւ ոչ ևս ուսուցանիցեն
իւրաքանչիւր զընկեր իւր.
իւրաքանչիւր զեղբայր իւր
ասել՝ թէ ծանիր զՏէր.
զի ամենեքեան ծանիցեն զիս
'ի փոքրկանց նոցա մինչև
'ի մեծամեծս՝ ասէ Տէր.
զի քաւիչ եղէց անիրաւու-
թեանց նոցա. և զմեղս նո-
ցա ոչ ևս յիշեցից։ Երեմ.
լա. 33. 34։

և նորանց սիրտների մէջ
էնոտունք կըգրեմ, և կըլի-
նեմ նորանց Աստուած. և
նորանք կըլինեն ինձ ժո-
ղովուրդ. Եւ ամէն մէկն
իւրանց ընկերը էլ չեն սո-
վորցնել ամէն մէկն իւրանց
եղբօրն ասելով՝ թէ ճա-
նաչիր տէրին, պատճառը
որ՝ ամէնքն ինձ կըճանաչեն
փոքրներիցը մինչև մեծերն,
ասումէ Տէրն. պատճառը որ՝
ես նորանց անիրաւութիւններին
քաւող կըլինեմ. և նորանց
մեղքերը էլ չեմ յիշիլ։
Երեմ. լա. 33. 34։

Դուք ազգ էք ընտիր,
թագաւորութիւն քահա-
նայութիւն, ազգ սուրբ,
ժողովուրդ սեպհական. որ-
պէս զի զձեր առաքինու-
թիւնս նուիրիցէք այնմ, որ
զձեզ 'ի խաւարէն կոչեաց
յիւր սքանչելի լոյսն։ Որք
երբեմն ոչ ժողովուրդ՝ բայց
արդ ժողովուրդ Աստու-
ծոյ։ որք չողորմեալք՝ այժմ
ողորմութիւն գտէք։ Ա.
Պետ. Բ. 9. 10։ ) Մար-

Դուք ընտրած ազգ էք
թագաւորութիւն, քահանայութիւն,
ն̃բ ազգ սեպհական (*) ժո-
ղովուրդ. որ ձեր առաքինու-
թիւնները տաք նորան, որ
ձեզ խաւարիցն կանչեց իւր
զարմանալի լուսին մէջ։ Որ
մին ժամանակ ժողովուրդ
չէիք՝ բայց հիմիկ Ա̃յ ժողո-
վուրդն էք։ դուք որ ողորմ-
ված չէիք՝ հիմիկ ողորմու-
թիւն գտաք։ Ա. Պետ. Բ.
9. 10։ ) Դ̃ՆԷ

(*) Էինալու

Մարմին Քնի։

( Աստուած ) զամենայն ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա (Քրիստոսէ) Եւ զնա ետ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ. որ է մարմին նորա և լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու։ Եփես. Ա. 22. 23։

Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ։ Եփես. Ե. 23։

Քնի մարմինը։

( Աստուած ) ամեն ինչ հնազանդացրուց նր (Քնի) ոտների տակին։ Եւ նորան գլուխ կարգեց ամեն եկեղեցւոյ բանի վր որ մարմին, և լցնող է նորան՝ որ ամեն բանը ամեն բանի մէջ լցնում է. Եփես. Ա. 22. 23։

Քնս եկեղեցւոյն գլուխն է. և ինքն է մարմնի փրկող։ Եփես. Ե. 23։

Հօտ Քնի։

Ես եմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիմսն, և ճանաչեն յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր, և զանձն իմ դնեմ ՚ի վերայ ոչխարաց։ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն. և ես ճանաչեմ զնոսա. և զկնի իմ գան։ Եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս

Քնի հօտ։ (1)

Ես եմ քաջ հովիւն (2) և իմոնքը ճանաչում եմ, և ճանաչվում եմ իմոնցիցն։ Ինչպէս Հայրն ինձ գիտում է, ես էլ Հայրն եմ գիտում, և իմ անձնս դընում եմ ոչխարներին վերայ։ Իմ ոչխարներն իմ ձայնս լսում են, և ես նորանց ճանաչում եմ։ և իմ ետնէս գա-

(1) ոչխարի սիւրիւ (2) գօչաղ չօպանն։

կամս. և մի՛ կորիցեն 'ի յաւիտեան. և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց իմոց: Յօհ. Ժ. 14. 15. 27. 28:

գալիս են: Ու ես նորանց տալիս եմ յաւիտենական կեանքը, և չի պիտի կորչեն յաւիտեան. և ոչով չի կարող խլել նորանց իմ ձեռիցս: Յօհ. Ժ. 14.15. 27. 28:

---

## Տուն ԻԸ:

Գիտասցես, թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջիլ. որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաստատութե ճշմարտութեան: Ա. Տիմ. Գ. 15:

Զհիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն՝ որ է Յիսուս Քրիստոս: Ա. Կորն. Գ. 11:

## ԻԸ տուն:

Պէտք է գիտես, թէ ինչպէս պէտք է քեզ աստուծոյ տանն մէջն գալ. որ կենդանի աստուծոյ եկեղեցին է: Ճշմարտութեն սիւն և հաստատութիւն: Ա. Տիմ. Գ. 15:

Մէկն չի կարող ուրիշ հիմն դնել քանց դրվածն՝ որ յիսուս քրիստոսն է: Ա. Կորն. Գ. 11:

## ԻԹ:

Մի մարմին՝ և մի՛ հոգի. որպէս և կոչեցայք 'ի մի յոյս կոչման ձերոյ: Մի Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն, ԱԾ, և հայր ամենեցուն. որ 'ի վերայ ամե-

նայնի

## ԻԹ:

Մի մարմին՝ և մի հոգի. ինչպէս որ կանչվեցիք ձեր կանչվելոյ մին յուսի մէջն: Մի Տէր, մի հաւատ, մի մկրտութին, մի ԱԾ, և հայր ամենին. որ կայ ամենին

վերայ

նայնի և ընդ ամենեսին և յամենեսին 'ի մեզ: Եփես. Դ. 4—6:

Որպէս 'ի միում մարմնի բազում անդամս ունիմք. և անդամքն ամենեքեան ոչ զնոյն գործ ունին, նոյնպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս. այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք: Հռով. ԺԲ. 4. 5:

Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք՝ զՔրիստոս զգեցեալ էք: Չիք խտիր. ոչ Հրէի՝ և ոչ հեթանոսի. ոչ ծառայի, և ոչ ազատի. ոչ արուի, և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք 'ի Քրիստոս Յիսուս: Գաղատ. Գ. 27. 28:

վերայ, և ամենից հետ, և մեր ամենիս մէջ: Եփես. Դ. 4—6:

Ինչպէս որ մին մարմնի մէջ շատ անդամներ ունենք և ամէն անդամներն մին գործ չունին, էնպէս մենք, որ շատ ենք, մին մարմին եմք Քրիստոսումն. բայց ամենքս մին մինի անդամներ ենք: Հռով. ԺԲ. 4. 5:

Դուք որ միանգամ քրիստոսումն մկրտուեցիք՝ Քրիստոսը հագել էք: Ջոկութին չէ կայ. ոչ Հրէի (1)՝ և ոչ կռապաշտին. ոչ ծառային, և ոչ ազատին (2). ոչ որձին, և ոչ էգին. պատճառը որ՝ դուք ամենքդ մին էք Քրիստոս Յիսուսին մէջը: Գաղատ. Գ. 27. 28:

Սուրբ:

Քրիստոս սիրեաց զեկեղեցի՝ և զանձն իւր մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին

Սուրբ:

Քրիստոս սիրեց եկեղեցին՝ և իւրան անձն մատնեց նորա համար: որ նորան սրբէ աւազանի սրբութեով խօս-

(1) չհաւատին: (2) աղային:

զանի՛ն բանիւ, զի կայուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի՝ զի մի՛ ունիցի ինչ զարատ՝ կամ զաղտեղութիւն կամ զայլ ինչ յայնպիսեաց, այլ զի իցէ սուրբ և անարատ։ Եփես. Ե. 25—27։

## Ընդհանրական։

Երթայք յաշխարհ ամենայն. և քարոզեցէք զաւետարանն արքայութեան ամենայն արարածոց։ Մարկ. ԺԶ. 15։

Ո՛չ գոյ խտիր հրէի և հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն. բաւական յամենեսին, որք կարդան առ նա. Զի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։ Հռով. Ժ. 12. 13։

## Առաքելական։

Այսուհետև ո՛չ էք օտարք և պանդուխտք. այլ քաղաքակից

խօսքովը. որ ինքն կանգնացնէ իւր աչքի՛ առաջին փառաւոր եկեղեցի՝ որ չունենայ պակասութի՛, կամ աղտոտութի՛, կամ ուրիշ բան էսպէսներից, բայց որ ըլնի սուրբ և անարատ, Եփես. Ե. 25—27։

## Հասարակ։

Գնացէք ամէն աշխարհքը, քարոզ տուէք արքայութեան աւետարանը ամէն ստեղծուածներին։ Մարկ. ԺԶ. 15։

Զոկութի՛ չկայ հրէի (1) և կռապաշտին, պատճառը որ՝ էլ էն Տէրն է ամէնքին, հերիք ամէնքին համար, որ կանչումեն դէպի նա. պատճառը՝ ով որ Տէրի անունը կըկանչէ կապրի։ Հռով. Ժ. 12. 13։

## Առաքելական։

Հիմիկաց ետև օտար և պանդուխտ (2) չէք, բայց

մը

(1) Ջհուդին։ (2) Ղարիբ։

քաղաքակիցք սրբոց՝ և ընտանիք Աստուծոյ։ Շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց և մարգարէից։ որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յ՟ս. Յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ՝ աճէ ՚ի տաճար ս՟բ Տէրամբ։ Յորում և դուք ընդ նմին շինիք ՚ի բնակութիւն Աստուծոյ հոգւով։ Եփես. Բ. 19—22։

սուրբերին քաղաքակից էք՝ և աստուծոյ ընտանիքներ Շինված էք առաքեալների և մարգարէների հիմին վերայ. որ նորա անկիւնի (*) գլուխն Ք՟ս Յ՟սն է։ Որ նորանում ամեն շինվածն կապված և յամարված շատանումէ Տէրով սուրբ տաճար լինելոյ համար։ Նորանում դուք էլ նորա հետ շինվումէք որ Աստուծոյ բնակութիւն լինիք հոգովն։ Եփես. Բ. 19—22։

---

Առաքելական եկեղեցւոյ։

Ո՛չ եթէ խռովութեան է Աստուած այլ խաղաղութեան. որպէս յամենայն եկեղեցիս սրբոց։ Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութ՟բ և ըստ կարգի լինիցի։ Ա՟. Կորն. ԺԴ. 33. 40։

Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և

յերկրի-

Եկեղեցւոյ առաքելականը։

Չէ թէ Աստուած խռովութեան (Աստուած) է՝ բայց խաղաղութեն. ինչպէս որ էլ ամեն սրբերի եկեղեցիներումն։ Եւ ձեր ամեն բանն էլ սրբութ՟ով և կարգով պիտի լինի։ Ա՟. Կորն. ԺԴ. 33. 40։

Տուաւ ինձ ամեն իշխանութին երկնքումն և երկ-

րումս

(*) քօշէ։

յերկրի։ Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ՚ի կատարած աշխարհի։ Մատթ. Իը. 18. 20։

րումս։ Ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհքիս վերջնը։ Մատթ. Իը. 18. 20։

Նա ետ զոմանս առաքեալս. զոմանս մարգարէս. զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս, և վարդապետս. առ ՚ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն Քի։ Եփես. Դ. 11. 12։

Նա մին քանիսը առաքեալներ կարգեց մին. քանիսը մարգարէներ, մին քանիսը աւետարանիչներ, մին քանիսը հովիւներ (1), և վարդապետներ (2), որ սուրբերը հաստատվին պաշտելու գործին համար, Քի մարմնի շինութեան համար։ Եփես. Դ. 11. 12։

Զգոյշ կացէք անձանց՝ և ամենայն հօտին յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տն, զոր ապրեցոյց արեամբն իւրով։ Գործք. Ի. 28։

Աչքաբաց կացէք ձեր անձներին՝ և ամեն (ոչխարի) հօտին, որ նորանց մէջ դրաւ ձեզ սուրբ Հոգին՝ որ տեսնող լինիք և պահպանէք Տէրի ժողովուրդը, էնտունք որ ապրեցրուց իւրան արիւնովն։ Գործք. Ի. 28։

Դու քարոզեա զբանն. հաս ՚ի վերայ՝ ժամու և տարաժամու։ յանդիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ և վար-
դապե-

Դու քարոզիր խօսքը։ վերահասիր հասած և չի հասած ժամանակումն։ յանդիմանիր՝ սաստիր՝ մխիթարիր ամեն համբերութենով
և

(1) չոպաններ (2) սովորցնողներ

դապետութեամբ։ Բ. Տիմ. Դ. 2։

Այսպէս համարեսցին ՚զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի՝ և հազարապետտըս խորհրդոյն Աստուծոյ։ Ա. Կորն. Դ. 1։

Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել՝ որպէս և Աստուծոյ տնտեսի ....... Հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ։ վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեան զի կարող իցէ մխիթարել ողջմտութբ̃ վարդապետութեն և զհակառակորդսն կըշտամբել։ Տիտ. Ա. 7—9։

## Հերձուածք։

Լինէին և սուտ մարգարէք ՚ի ժողովրդեանն՝ որպէս և այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք

սպրտեալ

և սովորցնելով։ Բ. Տիմ. Դ. 2։

Այսպէս պիտի համարեն մեզ մարդիկք ինչպէս Քրի̃ ծառայք՝ և վերակացու Այ̃ խորհուրդներին։ Ա. Կորն. Դ. 1։

Պէտք է, որ եպիսկոպոսն անարատ լինի՝ ինչպէս աստուծոյ տնտեսը....... Հիւրասէր (1), բարին սիրող, ցած, (2) արդար, սըրբակաց, համբերող, որ վարդապետութեան հաւատարիմ խօսքի վերակացու լինի. որ կարող լինի մխիթարել առողջամիտ վարդապետութիւնով և հակառակները յանդիմանել։ Տիտ. Ա. 7—9։

## Հերձուածք։

Սուտ մարգարէներ էլ լինումէին ժողովուրդին մէջ՝ ինչպէս էլ հիմիկ ձեզանում կըլինեն սուտ

վար-

(1) ղօնաղասէր։ (2) ալչախ։

սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան: Եւ զտէրն որ գնեաց զնոսա՝ ուրացեալք՛ ածեն 'ի վերայ անձանց զերագահսն կորուստ: Եւ բազումք անսկեալք երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վ՟ որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեսցի: Եւ ագահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ վաճառանդիս: որոց դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ: եւ կորուստ նոցա ոչ նիրհեսցէ: Բ. Պետ. Բ. 1—3:

Զգոյշ լերուք՝ մի՛ ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ եւ սնոտի խաբէութեամբ. որք ըստ մարդկան աւանդութեան եւ ըստ տարերց աշխարհիս եւ ոչ ըստ Քրիստոսի: Կողոս. Բ. 8:

Եթէ ոք այլազգ ինչ ուսու-

սու-

վարդապետներ՝ որ մէջ ընկնելով մէջ կբերեն կորչելու հերձուածներ: Եւ տէրը որ գնեց նորանց կուրանան կըբերեն անձիններին վերայ շուտ հասնող կորուստը: Եւ շատերն վեր կընկնեն, եւ նորանց անառակութիւններին ետնայ կըգընան: Նորա համար ճըշմարտութեն ճանապարհն կըհայհոյվի: Եւ ագահութիւնով մտքից հնարված խօսքով ձեզ տեղահան կանեն, նորանց դատաստանն վաղուց դատարկ չի մնում, եւ նորանց կորուստն քուն չի լինիլ: Բ. Պետ. Բ. 1—3:

Աչքաբաց կացէք՝ մէկն չի լինի որ ձեզ կողոպտէ (*) ճարտարմտութիւնով եւ դատարկ խաբէութիւնով՝ որ մարդկանց սովորցրածին պէս եւ աշխարհքիս բաներին յարմար (է) եւ ոչ Քրիստոսին: Կողոս. Բ. 8:

Եթէ մէկն մարդ ուրիշ կերպ

սովոր-

(*) Թալանէ:

ուցանիցէ, և ոչ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ և ըստ ածպաշտութեան վարդապետութեանն. այնպիսին հպարտացեալ է, և ոչ ինչ գիտէ. այլ տապի ՚ի խնդիրս և ՚ի բանս հակառակութեան։ ուստի լինին նախանձ, հեռ հայհոյութիւնք կարծիք չարեաց։ Խարդաւանութիւնք ապականելոց մտաց մարդկան, և օտարացելոց ՚ի ճշմարտութենէ անտի, որք շահավաճառ համարին զածպաշտութիւն։ բայց դու մերժեսջիր յայնպիսեացն։ Ա. Տիմ. Զ. 3–5։

սովորցնէ, և մեր Տէր Յի Քի ողջամիտ խօսքերին ականջ չէ դնէ, և վարդապետութեան որ ածպաշտութեան վայել է՝ էնպիսին հպարտացած է, և ոչինչ չէ գիտում, բայց տապվումէ (1) վէճերով և հակառակ խօսքերով, որ էնտեղից կը լինի նախանձ, քէն, ուշունց տալ, և չար կարծիքներ, խարդախութիւններ (3) մտքով ապականված և ճշմարտութիւնից հեռացած մարդկանց, նորանք՝ որ ածպաշտութիւնը առուտուր են համարում. բայց դու էնպիսիներից հեռացիր։ Ա. Տիմ. Զ. 3–5։

Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո՝ երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայր քո։ Ապա թէ ոչ լուիցէ քեզ առ ընդ քեզ միւս ևս՝ կամ երկուս. զի ՚ի բերանոյ երկուց

Թէ որ քո եղբայրն քեզ դէմ մեղանչի՝ գնա յանդիմանիր նորան՝ երբ որ դու և նա մենակ կըլինիք. թէ որ լսէ քեզ, քո եղբայրդ շահեցիր։ Ապա թէ որ չի լսէ քեզ, վեր առ քեզ հետ մին էլ կամ երկու (եղբայր), պատ-

---

(1) Հաւէտ է Գաւէտ (3) Հաբոնշատայս—Րէսն։

կուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։ Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ ասասջիր յեկեղեցւոջ. ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր։ Մատ. ժը. 15—17։

պատճառը որ երկու կամ երեք վկաների բերանով կըհաստատուի ամեն բան։ Բայց եթէ նորանց էլ չի լսէ, եկեղեցւոյն ասա, ապա թէ որ եկեղեցւոյն էլ չի լսէ, կըլինի նա քեզ ինչպ կռապաշտ և մաքսաւոր (3)։ Մատ. ժը. 15—17։

Եթէ ոք եղբայր անուանեալ՝ կամ պոռնիկ իցէ, կամ կռապաշտ՝ կամ ագահ՝ կամ բամբասօղ՝ կամ արբեցօղ՝ կամ յափշտակօղ՝ ընդ այնպիսում և ոչ հաց մի ուտել։ Բարձէք զչարն ՚ի միջոյ ձերմէ։ Ա. Կորն. Ե. 11 և 13։

Եթէ որ մէկն եղբայր (քրիստոնեայ) լինի կոչված և պոռնիկ լինի, կամ կռապաշտ, կամ ագահ (2), կամ բամբասող, կամ հարբեցող, կամ յափշտակող՝ էնպէսին հետ հաց էլ չի ուտէք։ Չարն ձեր միջիցն վերացրէք։ Ա. Կորն. Ե. 11 և 13։

---

## ԳԼՈՒԽ Թ.

### Յաղագս խոնարհութեան։

### 1 Աւետարանէն։

Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթա-

### Խոնարհութեան համար։

### 1. Աւետարան։

Գնացէք հիմիկուց ետև՝ սովորեցրէք ամեն հեթանոսներին

(1) կէօմրիւկճի (2) թամահքեար։

թանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։ Մատ. իը. 19։

Ոմանք յօժարութեամբ ընկալեալք զբան նորա (պետրոսի) մկրտեցան՝ և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք։ Գործ. բ. 41։

Որ հաւատասցէ և մկրտեսցի կեցցէ։ և որ ոչն հաւատասցէ, դատապարտեսցի։ Մարկ. ժզ. 16։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ. եթէ ոք ոչ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Յօհ. գ. 5։

Ասէ Յիսուս. Թոյլ տուք մանկտոյդ՝ և մի՛ արգելուք զդոսա գալ առ իս։ զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ Մատ. ժթ. 14։

Ապաշխարեցէք՝ և մկրտեսցի իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ յանուն Տեառն Յի Քի ՚ի

թողու-

ներին։ մկրտեցէք նորանց Հօր՝ և որդւոյ՝ և սուրբ հոգւոյ անունովն։ Մատ. իը. 19։

Ոմանք յօժար (պետրոսի) կամօք խօսքն ընդունեցին, մկրտվեցին՝ և աւելցան էն օրումն երեք հազարին մօտ հոգիք։ Գործ. բ. 41։

Ով որ կըհաւատայ և կըմկրտվի, կապրի. և ով որ չի հաւատալ, կըդատապարտվի։ Մարկ. ժզ. 16։

Պատասխան տուաւ Յսն և ասեց նորան. ճշմարիտ ճըշմարիտ ասումեմ քեզ. թէ ով որ չի ծնվի ջրիցը և հոգուցը՝ չի կարող աստուծոյ արքայութիւնը մտնել. Յօհ. գ. 5։

Յսն ասեց. թող արէք էդ երեխաներին՝ և չի խափանէք դորանց ինձ մօտ գալն։ պատճառը որ՝ էդպէսներին է երկնքի արքայութիւնն։ Մատ. ժթ. 14։

Փոշիմանեցէք և մկրտվի ձեզանից ամեն մէկն Յսն Քրիստոսի անունովն, որ

մեղքերի

թողութիւն մեղաց. եւ ընկալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ։ Գործք. Բ. 38։

Զի՞ հեղգաս. արի, մկրտեաց եւ լուա զմեղս քո 'ի կարդալն զանուն նորա (Քի)։ Գործք. ԻԲ. 16։

Ամենեքին որդիք աստուծոյ էք հաւատովք 'ի Յիսուս Քրիստոս։ Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք՝ զՔս զգեցեալ էք։ Գաղատ. Գ. 26. 27։

Ոչ 'ի գործոց արդարութեան զոր արարաք մեք. այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն, եւ նորոգութեամբ հոգւոյն սրբոյ։ Զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ, 'ի ձեռն Յի Քի փրկչին մերոյ։ Տիտ. Գ. 5. 6։

Ո՞չ գիտէք՝ զի որք միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս Յիսուս՝ 'ի մահ անդր նորա մկրտեցաք։ Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն

'ի

մեղքերի թողութեան և սբ Հոգւոյ աւետիսն ընդունէք։ Գործք Բ. 38։

Ինչի՞ ես թուլանում, վեր կաց՝ մկրտուիր՝ և լուացիր քո մեղքերը նորա (Քի) անունը կանչելով։ Գործք. ԻԲ. 16։

Ամենքդ էլ որդիք էք Յիսուս Քրիստոսի հաւատովը։ Դուք որ միանգամ Քրիստոսովն մկրտուեցիք՝ Քրիստոսը հագել էք։ Գաղատ. Գ. 26. 27։

Չէք թէ արդարութեան գործքերովը՝ որ արինք մենք, բայց իւրան ողորմութիւնովն ապրացրուց մեզ նոր մին էլ ծնվելոյ աւազանովն՝ և սուրբ հոգւոյ նորոգելովն։ Նորան որ առատութիւնով թափեց մեզ վր մեր փրկիչ յսով քսով. Տիտ. Գ. 5. 6։

Չէ՞ գիտում՝ թէ մենք որ միանգամ յսուսին քսուսին նր մահուանն մկրտուեցինք։ Թաղուեցինք մկրտութիւնովն նր հետ մահի մէջ, պատճառը որ ինչպէս

Քս

ի մահ. զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառօք Հօր՝ նոյնպէս և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջեսցուք: Հռօմ. Զ. 3. 4:

Կենդանի եմ այսուհետև՝ ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս, այլ որ այժմ կեամ մարմնով՝ հաւատովք Որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեացն զիս՝ և մատնեաց զանձն վասն իմ: Գաղ. Բ. 20:

Քրիստոս վեր կացաւ մեռածներէ մէջիցն Հօր փառքովն. էնպէս էլ մենք նորոգուած կեանքումն պիտի մանգանք: Հռօմ. Զ. 3. 4:

Կենդանի եմ հիմիկաց ետև՝ չէ թէ ես՝ բայց կենդանի է ինձանում Քրիստոս. էլ որ հիմիկ մարմնով ապրում եմ՝ Աստուծոյ որդւոյ հաւատովն եմ ապրում: որ սիրեց ինձ և իրան մատնեց ինձ համար: Գաղատ. Բ. 2:

---

## 2. Հաղորդութիւն:

Տէր Յիսուս 'ի գիշերին յորում մատնէր, էառ զհաց գոհացաւ՝ եբեկ՝ և ասէ. առէք՝ և կերայք՝ այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի: զայս արարէք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն էառ և ասէ. այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ

## 2. Հաղորդութիւն:

Տէր Յիսուսն՝ էն գիշերումն որ մատնվումէր, հացը առաւ գոհացաւ՝ կոտրեց և ասեց. առէք և կերէք էս է իմ մարմինս, որ ձեզ համար կոտըրվի. էս արէք ինձ յիշելոյ համար: Էնպէս էլ ընթրիքից ետև՝ բաժակը առաւ և ասեց. էս բաժակս նոր ուխտ (*) է իմ արիւնովս. էս արէք՝ քանի անգամ

---

(*) Կտակ:

գամ թէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի։ Վասնզի անգամ եթէ ուտիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք՝ զմահ Տեառն պատմեցէք մինչև եկեսցէ նա։ Այսուհետև՝ որ ուտիցէ զհացս. կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր. և ապա 'ի հացէ անտի կերիցէ. և 'ի բաժակէն արբցէ։ Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ։ զի ոչ խտրէ զմարմինն Տն։ Ա. Կորն. ԺԱ. 23—29։

Բաժակն օրհնութեան՝ զոր օրհնեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի։ Հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի։ Զի մի հաց՝ մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ հա-

ցէ

գամ որ խմէք, ինծի յիշելու համար։ Վասնի անգամ որ ուտէք էս հացս, և էս բաժակս խմէք տէրի մահը պատմեցէք, մինչև ինքը կըգայ։ Հիմիկաց ետև ով որ ուտէ էս հացս, կամ խմէ տէրի բաժակն անարժանութիւնով, պարտական կըլինի Տէրի մարմնին և արիւնին։ Մարդ առաջ իւրան անձն պիտի փորձէ. և յետոյ էն հացիցն ուտէ. և էն բաժակիցն խմէ։ Նորա համար ով որ անարժանութիւնով ուտէ և խմէ իւր անձնին դատաստանը է ուտում և խմում; պատճառը որ՝ Տէրի մարմինն չի ջոկում։ Ա. Կորն. ԺԱ. 23—29։

Օրհնութեան բաժակն՝ որ օրհնում ենք, չէ՞ որ Քի արիւնին մասնակից լինիլն է։ էն հացն որ կտրում ենք՝ չէ՞ որ Քի մարմինին մասնակից լինիլն է։ Պատճառը որ մի հաց մին մարմին ենք շատերս։ ինչու որ ամենքս էլ էն մին հացիցն ենք վայելում։

ցէ անտի վայելեմք։ Ա. Կորն. Ժ. 16. 17։

Ամէն, Ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ՝ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ։ ունի զկեանս յաւիտենականս. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է. և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ, և ես ՚ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս, և նա կեցցէ վասն իմ։ Յօհ. Զ. 54—58.

---

լում։ Ա. Կորն. Ժ. 16. 17։

Ճշմարիտ ճշմարիտն ասումեմ ձեզ. թէ որ որդւոյ մարդոյ մարմինն չի ուտէք, և նորա արիւնը չի խմէք, ձեր անձներումն կեանք չունիք։ Նա որ իմ մարմինս ուտումէ, և իմ արիւնս խմումէ՝ յաւիտենական կեանք կունենայ. ես էլ նորան ետի օրումն յարութիւն կը տամ։ պատճառը որ՝ իմ մարմինս ճշմարիտ ուտելի է և իմ արիւնս ճշմարիտ խմելի։ Նա՝ որ իմ մարմինս ուտումէ, և իմ արիւնս խմումէ՝ ինձանում կը բնակվի, և ես նորանում։ Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրն, և ես կենդանի եմ Հօր համար. նա էլ որ ինձ ուտումէ, նա էլ կապրի ինձ հմր։ Յօհ. Զ. 54-58։

---

### 3. Պրոշն։

Իբրև լուան, որք յերու-

սաղէմ

### 3. Պրոշն։

Երբ որ լսեցին առա-

քեալ

սաղէմ առաքեալքն էին, թէ և 'ի սամարիայ ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զպետրոս և զյօհաննէս: Որք իջեալք կային յաղօթս 'ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին սուրբ: Զի ցայնժամ չև ևս էր և ոչ 'ի վերայ միոյ նոցա հասեալ. բայց միայն մկրտեալք էին յանուն Տեառն Յի: Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ նոցա՝ և առնուին զՀոգի սուրբ: Գործ. Ը: 14—17.

Որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս, և որ եօծ զմեզ՝ ած է: Որ և կնքեաց զմեզ. և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր: Բ. Կոր. Ա. 21: 22:

Դուք օծութիւն զոր ընկալայք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի ձեզ. զի չէ ինչ պիտոյ՝ այլ

քեալներըն. որ երուսաղէմումն էին, թէ սամարացւոց երկրումն էլ աստուծոյ խօսքը ընդունեցին, ուղարկեցին նորանց մօտ պետրոսը և յօհաննէսը: Նորանք վէր եկին, և աղօթք արին նորանց վերայ, որ սուրբ հոգին առնեն. Պատճառը որ մինչև էն ժամանակը դեռ չէր հասել նորանց ոչ մինին վերայ: Բայց մենակ մկրտվել էին Տէր յիսուսի անունովն. Էն ժամանակը ձեռները նորանց վերայ դրին՝ և սուրբ հոգին առնումէին. Գործ. Ը. 14—17,

Նա որ հաստատեց մեզ ձեզ հետ Քրիստոսումն, և որ մեզ օծեց՝ աստուած է: Նա էլ կնքեց (*) մեզ և տուաւ սուրբ հոգւոյ գըրաւը մեր սրտի մէջն: Բ. Կոր. Ա. 21. 22:

Էն օծումն՝ որ դուք ընդունեցիք նորան, ձեզանում կըբնակվի. որ պէտք չէ՝

բայց

(*) Մօհրէց

թէ ոք զձեզ ուսուսցէ· այլ որպէս նորա օծութիւն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի՝ և ճշմարիտ է՝ և չէ սուտ. և որպէս ուսոյց զձեզ, կացէք ՚ի նմա։ Ա. Յօհ. Բ. 27։

որ ձեզ մինն սովորցնէ· բայց ինչպէս նորա օծումն ձեզ սովորցնումէ ամեն բանի համար՝ ինչպէս ճշմարիտ է՝ և սուտ չէ, և ինչպէս սովորցրուց ձեզ, նորանում կացէք։ Ա. Յօհ. Բ. 27։

---

## 4. Ապաշխարութիւն։

Որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց ՚ի նոսա և ասէ· առէք զՀոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։ Յօհ. Ի. 21—23։

Ո՛չ կամիմ զմահ մեղուցելոյն՝ ասէ Ադօնայի Տէր· այլ զի դարձցի ՚ի ճանապարհաց իւրոց չարաց. և կեցուսցէ զանձն իւր· արդ՝ եկա՛յք՝ դարձարուք՝ և կեցջի՛ք։ Եզեկ. ԺԸ. 32։

Ասէ

## 4. Ապաշխարութիւն։

Ինչպէս որ իմ Հայրս ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում։ Եւ երբ որ էս ասեց՝ փչեց նորանց վերայ, և ասեց. առէք սուրբ հոգին՝ թէ ում որ մեղքերը կըթողէք՝ թողված կըլինին նորանց. և թէ մէկին կապէք՝ կապված կըլինին։ Յօհ. Ի. 21—23.

Չեմ կամենում մեղաւորի մահը՝ Տէր Ա՛ծն ասումէ· բայց որ դա՛րձ գայ իւր չար ճանապարհիցն, և իւր անձն ապրացնէ. հիմիկ՝ եկէք՝ դա՛րձ եկէք՝ որ ապրէք։ Եզեկ. ԺԸ. 32։

Չեր

Ասէ Տէր Ած ձեր. դարձարուք առ իս յամենայն սրտէ ձերմէ. պահօք՝ և լալով և կոծով։ Պատառեցէք զսիրտս ձեր՝ և մի զհանդերձս. և դարձարուք առ Տէր Աստուած ձեր՝ զի ողորմած՝ և գթած է՝ երկայնամիտ՝ և բազումողորմ. որ զղջանայ ՚ի վերայ չարեաց։ Յովէլ Բ. 12. 13։

Ձեր Տէր Աստուածն ասումէ. դարձէք եկէք ձեր բոլոր սրտովն ինձ մօտ. պասովը լաց և սուգ անելով։ Ձեր սրտները պատառեցէք և ոչ շորերը. և ետ դառէք ձեր Տէր Այ մօտն՝ պատճառը որ՝ ողորմած՝ և գթած է՝ համբերող՝ և շատ ողորմ. նա զղջանումէ չարերի (պատիժների) վերայ։ Յովէլ Բ. 12. 13։

Երանի ում թողութիւն եղև մեղաց. և ծածկեցան ամենայն յանցանք նորա։ Երանի առն՝ որում ոչ համարի Տէր զմեղս նորա. և ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նորա։ Լռեցի ես՝ և մաշեցան ամենայն ոսկերք իմ. յաղաղակել իմ առ Տէր զօրհանապազ. ՚ի տուէ և ՚ի գիշերի։ Ծանրացաւ ձեռն քո ՚ի վերայ իմ. դարձայ ՚ի թշուառութիւն իմ. զի հարան յիս փուշք։ Զմեղս իմ ցուցի քեզ. և զանօ-

Երանի նորան, որ մեղքերին թողութիւն եղաւ. և նորա ամեն յանցանքն ծածկվեցան։ Երանի է. մարդին, որ նորա մեղքերին Տէրը չի համարիլ. որ նորա բերանումն խաբեբայութիւն չի կայ։ Սուս կացայ ես՝ և մաշվեցին ամեն իմ ոսկորներս, իմ կանչելոյ ժամանակն դէպ ՚ի Տէրն ամեն օր. ցերեկ և գիշեր։ Ծանրացաւ քո ձեռնդ ինձ վերայ. իմ խեղճութեան մէջ ընկայ. պատճառը որ՝ փու-

զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի ՚ի քէն։ Սաղմ. լա. 1—5։

փուշէրին, ինձ ծածկեցին. իմ մեղքերս քեզ ցոյց տուի և իմ անօրէնութիւնները քեզանից չի ծածկեցի։ Սաղմ. լա. 1—5։

Ոչ պիտոյ է բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։ Երթայք, ուսարուք զինչ է՝ զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ։ զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ Մատ. Թ. 12. 13։

Բժիշկն (՟) առողջներին պէտք չէ՝ բայց հիւանդներին։ Գնացէք, սովորեցէք ի՞նչ է՝ ողորմութիւնը եմ կամենում, և ոչ մատաղը. պատճառը որ՝ չեմ եկել արդարները կանչելու համար, բայց մեղաւորները։ Մատ. Թ. 12. 13։

Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր դուք սպանիք կախեալ զփայտէ։ Զնա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն իւրով՝ տալ զապաշխարութիւն Իսրայէլի. և զթողութիւն մեղաց։ Գործ. Ե. 30. 31։

Մեր հէրերի Աստուածն յարութիւն տուաւ Յիսուսին՝ նորան որ դուք փայտից կախ անելով սպանեցիք։ Նորան Աստուած առաջնորդ և փրկիչ ([illegible] համար) բարձրացրուց իւր աջովն՝ որ Իսրայէլին ապաշխարութիւն. և մեղքերի թողութիւն տայ։ Գործ. Ե. 30. 31։

Եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր՝ հաւատարիմ է նա՝ և արդար առ ՚ի թողուլ մեզ զմեղս մեր. և սրբել

Եթէ որ մենք մեր մեղքերը խոստովանվինք՝ նա հաւատարիմ է՝ և արդար, որ մեզ մեր մեղքերը թողի. և.

---

(՟) հաքիմն.

բել զմեզ յամենայն անիրաւութենէ. Ա. Յօհ. Ա. 9։

Խոստովան եղերուք միմեանց զմեղս. և աղօթս արարէք 'ի վերայ միմեանց՝ որպէս զի բժշկիջիք. քանզի յոյժ զօրաւորք են աղօթք արդարոյ յօգնականութիւն։ Յակ. Ե. 16։

և մեզ սրբէ ամեն անօրէնութիւնից։ Ա. Յօհ. Ա. 9.

Մէ՛կ մէկի խոստովանվեցէ՛ք մեղքերը. և մի՛ մէկի վերայ աղօթք արէ՛ք՝ որ բժշկվէ՛ք. պատճառը որ՝ արդարի աղօթքներն շատ զօրաւոր են օգնականութեամբ։ Յակ. Ե. 16։

5. Ձեռնադրութիւն։

Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երիցունս. աղօթս արարեալ համդերձ պահօք՝ յանձն արարին զնոսա Տեառն՝ յոր հաւատացեալն էին։ Գործ. ԺԴ. 22։

Մի՛ անփոյթ առնէր 'զշնորհացդ՝ որք 'ի քեզ են. որք տուեան քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեն։ Ա. Տիմ. Դ. 14։

Առջիք զզօրութիւն 'ի հասանիլ հոգւոյն սրբոյ 'ի

վե՛ր

5. Ձեռնադրութիւն։

Նորանց ամեն մէկ եկեղեցւոյն երէցներ ձեռնադրեցին. աղօթք անելով և պաս պահելով յանձնեցին նորանց Տէրին, նորան որ հաւատացել էին։ Գործ. ԺԴ. 22։

Ինչու չե՛մ կենաս էն շնորհքին համար՝ որ քեզանում են. էնտուրք որ մարգարէութենով քեզ տուված են երէցների ձեռնադրութենովն։ Ա. Տիմ. Դ. 14։

Զօրութիւնը կառնէք սուրբ հոգւոյ ձեզ վերայ հասնե-

լոյ

վերայ ձեր. և եղիջիք
ինձ վկայք յԵրուսաղէմ, և
յամենայն Հրէաստանի, և
՚ի Սամարիա. և մինչև ՚ի
ծագս երկրի։ Գործ. Ա. 8։

Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և
որ զձեզ անարգէ, զիս ա-
նարգէ. և որ զիս անարգէ՝
զառաքիչն իմ անարգէ. և
որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ
որ առաքեացն զիս։ Ղուկ.
Ժ. 16։

Յիշեցէք զառաջնորդս
ձեր, որք խօսեցան ձեզ
զբանն Աստուծոյ. հայե-
ցեալք յելս գնացից նոցա.
նմանօղք եղերուք հաւա-
տոցն։ Եբր. ԺԳ. 7։

Զերիցունս այսուհետև ա-
ղաչեմ, իբրև երիցակից՝ և
վկայ չարչարանացն Քրի.
որ և հանդերձելոց փառա-
ցըն յայտնելոց հաղորդ։
Արածեցէք՝ որ ՚ի ձեզ
հօտդ

լոյ ժամանակը. և կըլլինք
ինձ վկաներ Երուսաղէմի
մէջ, և ամեն Հրէաստանի
(1) և Սամարայւոց երկրին
մէջ, և մինչև երկրի ծայ-
րերը (2)։ Գործ. Ա. 8։

Ով որ ձեզ լսումէ, ինձ է
լսում։ և ով որ ձեզ անար-
գումէ, ինձ է անարգում։
և ով որ ինձ է անարգում,
իմ ուղարկողին է անարգում
և ով որ ինձ լսումէ՝ նո-
րան է լսում, որ ինձ ու-
ղարկեց։ Ղուկ. Ժ. 16։

Յիշեցէք ձեր առաջնորդ-
ները, որ ձեզ խօսեցին
Այ խօսքն. մտիկ տուէք նո-
րանց վարքի վերջը, նմա-
նեցէք (նորանց) հաւատքին։
Եբր. ԺԳ. 7։

Հիմիկաց եմ աղաչումեմ
երեցներիդ. ինչպէս երեց-
ների ընկեր՝ և Քի չարչա-
րանքին վկայ, և էլ գալու
փառքին ընկեր, որ պիտի
յայտնվի։ Արածեցէք՝ Այ
հօտն

---

(1) Ջհուտաստանի։ (2) ղը-
րաղները։

հօտդ է Աստուծոյ։ վերակացու լինել՝ մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ։ մի՛ զօշաքաղութեամբ. այլ յօժարութբ։ Մի՛ իբրև տիրելով վիճակացն. այլ լինել օրինակ հօտին։ Զի յերևել Հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ։ Ա. Պետ. Ե. 1—4։

հօտն (1) որ ձեզ մօտ է Վերակացու պէտք լինիք՝ չէ թէ ակամայ՝ բայց կամքով այ հաճոյ։ ոչ թէ փողի շահըն սիրելով. բայց յօժար կամքով։ Վիճակներին չէ տէրութիւն անելով. բայց հօտին օրինակ լինելով։ Պատճառը որ՝ հովուապետի (2) երևելոյ ժամանակը անթառամելի փառքի պսակն ընդունիք։ Ա. Պետ. Ե. 1—4։

Օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով, սրբութբ։ Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանն՝ և ՚ի դմին յամեսջիր։ Զայդ եթէ առնիցես՝ և զանձն քո ապրեցուսցես, և զայնոսիկ՝ որք քեզն լսիցեն։ Ա. Տիմ. Դ. 12. 16։

Հաւատացողներին օրինակ պէտք լինիս՝ խօսքով վարքով, սիրով, հաւատով, սըրբութիւնով։ Հոգս պէտք քաշես (քո) անձնիդ և վարդապետութեան (3)՝ և դորանում պէտք մնաս։ Էդ թէ որ կանես քո անձնդ կապրացնես, և էլ նորանց որ քեզ կըլսեն։ Ա. Տիմ. Դ. 12. 16։

---

6. Պատկ։

Արար Աստուած զմարդն ՚ի

6. Պատկ։

Ած մարդը իւրան պատկերին

---

( ) ոչխարին (2) չօբանի գլխաւորին։ (3) ուսուցմունքիդ։

՚ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա: արու և էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ. աճեցէք և բազմացարո՛ւք՝ և լցէք զերկիր: Ծննդ. Ա. 27. 28:

Որ հաստատեացն ՚ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա, և ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ՝ և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի: Ապա ուրեմն ո՛չ են երկու՝ այլ մի մարմին. արդ՝ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ: Մատթ. ԺԹ. 4—6:

Արք՝ սիրեցէ՛ք զկանայս ձեր. որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի. և զանձն իւր մատնեաց վասն նորա: Եփես. Ե. 25:

Կանայք իւրեանց արանց հնազանդք լիցին իբրև Տեառն: Զի այր է գլ-
լուխ

կերպի նման արաւ. Այ պատկերին նման արաւ նորան: որձ և էգ արաւ նորանց: Եւ օրհնեց նորանց Աստուած՝ և ասեց. շատացէք՝ և աւելացէք՝ և երկիրս լցրէք Ծննդ. Ա. 27. 28:

Նա որ հաստատեց առաջուց՝ որձ և էգ ստեղծեց նորանց, և ասեց սորան համար, մարդ իւր հայրը և մայրը կըթողնէ և կըդնայ իւր կնկան ետնայ՝ և երկուսն մին մարմին կըլինին: Ուրեմն երկու չեն բայց մին մարմին. Հիմիկ էն որ ած միաւորացրուց՝ չէ պէտք որ մարդս ջոկէ: Մատթ. ԺԹ. 4—6:

Մարդիկ՝ ձեր կնանիքը սիրեցէք, ինչպէս որ Քս եկեղեցին սիրեց, և իւր անձն մատնեց նորա համար: Եփես. Ե. 25:

Կնանիքն իւրանց մարդկանցն հնազանդ պիտի լինին ինչպէս Տէրին: Պատ

ճառը

լուխ կնոջ՝ որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ։ Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենայնի։ Եփես. Ե. 22–24։

Պատուական է ամուսնութիւն. և սուրբ անկողին։ բայց զշունս և զպոռնիկս դատէ Աստուած։ Եբր. ԺԳ. 4։

Հարք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր՝ այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն։ Եփես. Զ. 4։

ձանը որ՝ կնկան գլուխն մարդն է՝ ինչպէս որ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է մարմնի փրկողն։ Բայց ինչպէս եկեղեցին հնազանդ է Քրիստոսին. էնպէս էլ կնանիքն իւրանց մարդկանցն ամեն բանի մէջ։ Եփես. Ե. 22—24։

Ամուսնութիւն պատուական է, և տեղուբարձն մը է։ բայց շնացողներին և պոռնիկներին կըդատէ Ա.Ծ. Եբր. ԺԳ. 4։

Ով հէրեր ձեր որդիքներըը (զաւակ պէտքը) չէք բարկացընէք՝ բայց մեծացրէք նորանց տէրի խրատովն և սովորցնելովն։ Եփես. Զ. 4։

## Է. Վերջին օծումն։

Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյ՝ և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս։ օծցեն իւղով յանուն Տեառն։ Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն՝ և

յարուսցէ

## Է. Վերջին օծումն։

Ձեզանից մինն որ հիւանդանայ՝ եկեղեցւոյ երէցները պիտի կանչէ՝ և նորա վերայ աղօթք անեն։ եղով օծեն Տէրի անունովն։ Եւ հաւատով աղօթքներն՝ կըփրկեն տկարացածը՝ և Տէրն

վեր

յարուսցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա: Յակ. Ե. 14. 15:

վերկըկացնէ նորան. և թէ մին մեղք գործած լինի՝ կըթողվի նորան: Յակ. Ե. 14. 15:

# ԳԼՈՒԽ Ժ.

## Յաղագս երկրորդ գալստեանն Քրիստոսի:

Սոյն Յիսուս՝ որ վերացաւն ՚ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զդա երթալ յերկինս: Գործ. Ա. 11:

Յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ արեգակն խաւարեսցի. և լուսին ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք երկնից թօթափեսցին. և զօրութիւնք յերկինս շարժեսցին. և յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութեամբ, և փառօք բազմօք: Մարկ. ԺԳ. 24-26:

Յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք և ամ հրեշտակք ընդ նմա. յայնժամ

## Քրիստոսի երկրորդ գալուն համար:

Էն Յիսուսը՝ որ երկինքն վեր ելաւ ձեզանից, (էլ) էսպէս պիտի գայ՝ ինչպէս որ տեսէք դորա երկինքը գնալը: Գործ. Ա. 11.

Էն օրերումն էն նեղութենից ետն արեգակն կըխաւարվի, և լուսինն իւր լոյսն չի տալ, և աստեղներն երկնքիցն վեր կըթափվին. և երկնքի զօրութիւններն կըշարժվին. և էն ժամանակ կըտեսնեն մարդոյ որդին ամպերով եկած՝ զօրութենով և շատ փառքով: Մարկ. ԺԳ. 24–26:

Երբ որ մարդոյ որդին իւրան փառքովն և ամեն հրեշտակներն իւրան հետ կըգայ, էն

ժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք. և մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց՝ որպէս հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց։ Մատ. ԻԵ. 31. 32։

էն ժամանակն կընստի իւր փառքի աթոռին վերայ. Եւ կըհաւաքվին ամեն ազգերն նորա առաջն. և կըջոկէ նորանից մին մինից ինչպէս որ հովիւն կըջոկէ ոչխարները էծերից։ Մատ. ԻԵ. 31. 32։

Վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ որդի՝ բայց միայն Հայր։ Մատ. ԻԴ. 36։

Էն օրին և էն ժամին (1) համար ոչ ով չի գիտում, ոչ երկնքի հրեշտակներն՝ և ոչ որդին՝ բայց մենակ Հայրըն։ Մատ. ԻԴ. 36։

Արթուն կացէք. զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։ Մատ. ԻԴ 42։

Արթուն կացէք. որ չէք գիտում թէ որ ժամումն (1.) ձեր Տէրն գալիս է։ Մատ. ԻԴ. 42։

Եկեսցէ օր Տեառն իբրև գող յորում երկինք տագնապաւ անցցեն. և բնութիք հրով կիզեալք լուծցին. և երկիր՝ և որք ՚ի նմա գործք գտանիցեն։ Բ. Պետ. Գ։ 10։

Տէրի օրն գողի նման կըգայ, նորանում երկինքն շատ տագնապով (2) անց կըկենան. և բնութիւններն կրակով էրված կըհալվին. երկիրն էլ՝ և իւր միջին ինչ որ գործեր կըգտանվին։ Բ. Պետ. Գ. 10։

Մի լիցի ՚ի ձէնջ ծածկեալ՝ սիրելիք. զի մի օր Տն

Սիրելիք՝ չի լինի ձեզանից ծածկված. որ Տէրի մին օրն՝ հազար

(1) սահաթին։ (2) շտապով։

Տեառն իբրեւ զհազար ամ է. եւ հազար ամ իբրեւ զմի օր։ Ոչ յամենցուցանէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին. այլ երկայնամիտ լինի առ ձեզ։ քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ. այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն։ Բ. Պետ. Գ. 8. 9։

հազար տարու պէս է. եւ հազար տարին ինչպէս մին օր։ Տէրն չի ետացնիլ բարի խոստմունքը ինչպէս մին քանի-նը ետի են համարում. բայց իւրան համբերող կըպահէ դէպ 'ի ձեզ. պատճառը որ՝ չի կամենում որ մինն էլ կորչի բայց որ ամեն մարդ էլ ապաշխարութեան համնի Բ. Պետ. Գ. 8. 9։

---

## Դատաստան։

Աստուած կայ եւ մնայ յաւիտեան։ Պատրաստ արար զաթոռ իւր 'ի դատաստանի։ Նա ինքն դատէ զաշխարհս արդարութեամբ եւ զժողովուրդս իւր ուղղութեամբ. Սաղմ. Թ. 7—9։

Ասեմ ձեզ. թէ ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ՝ տացեն համար յաւուրն դատաստանի։ Զի 'ի բանից քոց արդարասցիս. եւ 'ի բանից քոց պարտաւորեսցիս։ Մատ. ԺԲ. 36. 37։

Յաւուրն

---

## Դատաստան։

Ած կայ՝ եւ մնում է յաւիտեան. Իւր աթոռը պատրաստեց դատաստանի համար։ Ինքն կըդատէ աշխարհս արդարութիւնով եւ ժողովուրդներին շիտակութիւնով։ Սաղմ. Թ. 7—9։

Ասում եմ ձեզ. թէ ամեն դատարկ խօսքին համար՝ ինչ որ խօսումեն մարդիկ՝ դատաստանի օրը համար պիտի տան։ Պատճառը որ՝ քո խօսքերովդ կարդարանաս. եւ քո խօսքերովդ կըդատապարտվիս։ Մատ. ԺԲ. 36. 37։

Ան

Յաւուրն յորում դատիցէ Աստուած զգաղտնիս մարդկան՝ ըստ աւետարանիս իմոյ, ՚ի ձեռն Յի՟ Քի՟։ Հռով. Բ. 16։

Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն և կորնչին. և որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դատեսցին։ Հռով. Բ. 12։

Որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում։ Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի Որդի, մարդոյ է։ Յով. Ե. 26. 27։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ՝ և հաւատայ այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս և ՚ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։ Յով. Ե. 24։

Այն օրումն, որ պիտի աստուած դատէ մարդկանց թագուն բաները Յիսուսի Քրիստոսի ձեռքովը. ինչպ՟ որ ես աւետարանումեմ Հռով. Բ. 16։

Նորանք որ մէկ անգամ օրէնքից դուրս մեղանչեցին, օրէնքից դուրս էլ կըկորչեն։ և նորանք որ օրէնքի տակին մեղանչեցին էլ պիտի օրէնքովն դատվին։ Հռով. Բ. 12։

Ինչպ՟ որ Հայրն իւր անձնումն կեանք ունի, էնպ՟ էլ որդուն տուաւ, որ իւր անձնումն կեանք ունենայ։ Եւ իշխանութիւն տուաւ նորան որ դատաստան անէ. պատճառը որ՝ մարդոյ որդի է։ Յով. Ե. 26. 27։

Ճշմարիտ ճշմարիտ եմ ասում ձեզ. նա որ իմ խօսքս լսումէ՝ և հաւատումէ նորան որ ինձ ուղարկեց՝ նա ստանումէ յաւիտենական կեանքը և դատաստան չի մտնում բայց մահից փոխվեց կեանքի մէջը։ Յով. Ե. 24։

# ԳԼՈՒԽ ԺԸ։

## Յաղագս յարութեան մեռելոց։

Եթէ այսու կենօք միայն յուսացեալ եմք ՚ի Քրիստոս՝ ողորմելիք եմք քան զամենայն մարդիկ։ Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց։ Քանզի մարդով եղեւ մահ, և մարդով յարութիւն մեռելոց։ Որպէս Ադամաւն ամենեքեան մեռանին. նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին։ Իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ Քրիստոս, և ապա Քրիստոսեանք, ՚ի գալստեանն նորա։ Եւ ապա կատարած։ Ա. Կորն. ԺԵ. 19—24։

Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ

## Մեռածների յարութեան համար։

Թէ որ էս կեանքումս մենակ յուսացած լինինք Քրիստոսի, ամէն մարդկանց վերայ ողորմելի ենք։ Բայց հիմիկ Քրիստոս յարութիւն առաւ մեռածների միջիցն՝ ննջեցեալների առաջին պտուղն։ Պատճառը որ՝ մահն մարդով էլաւ, և մարդով մեռածների յարութիւնն։ Ինչպէս Ադամովն ամէն մարդիկ մեռնումեն. էնպէս էլ Քրիստոսովն ամէնքն էլ պիտի կենդանանան։ ամէնքն իւրանց կարգումն. առաջ Քրիստոս, և ետոյ նորանք որ Քրիստոսինն են նորա գալու ժամանակումն։ Եւ յետոյ վերջն։ Ա. Կորն. ԺԵ։ 19-24.

Ես հենց յարութիւն եմ և կեանք. ով որ ինձ հաւատայ, թէ

որ

Թէպէտ և մեռանի՝ կեցցէ։ Յօհ. ժա. 25։

Եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ՚ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա (որդւոյ մարդոյ)։ Եւ եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարութիւն կենաց. և որոց զչար արարեալ՝ ՚ի յարութիւն դատաստանաց։ Յօհ. ե. 28. 29։

Մեր առաքինութիւն յերկինս է. ուստի և փրկչին ակն ունիմք Տեառն Յի Քրիստոսի։ Որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոյ, ըստ զօրութեան՝ առ ՚ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրև զամենայն։ Փիլիպ. գ. 20. 2 ։

Սերմանի ապականութեամբ՝ և յառնէ առանց ապականութեան։ Սերմանի անարգութեամբ՝ և յառնէ փառօք

որ էլ մեռնի՝ կապրի։ Յօհ. ժա. 25։

Կըգայ ժամանակ՝ նորանում որ ամենքն էլ որ գերեզմաններումն կան, կըլսեն նորա (որդւոյ մարդոյ) ձայնը։ Եւ դուրս կըգան, նորանք որ բարի գործած լինին՝ կեանքի յարութեան համար. և նորանք որ չար գործած լինին՝ դատաստանի յարութեան համար։ Յօհ. ե. 28. 29։

Մեր առաքինութիւնն երկնքումն է, էն տեղից որ էլ փրկչին յիսուս քրիստոս Տէրին սպասումենք։ Նա որ մեր խոնարհութեան մարմինը կընորոգէ՝ որ իւր փառքի մարմնին նման լինինք՝ իւր զօրութիւնովը որ կարողանայ ամենն էլ հնազանդացնել իւրան ձեռքի տակին։ Փիլիպ. գ. 20. 21։

Սերմանվի ապականութիւնով և վեր կըկենայ առանց ապականութեան։ Սերմանվի անարգութիւնովը և վեր կըկենայ

նայ

փառօք։ սերմանի տկարութե՟` և յառնէ զօրութեամբ։ Սերմանի մարմին շնչաւոր և յառնէ մարմին հոգևոր։ Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն. և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն։ ա· Կոր· ժե· 42-44· 53։

Ամենեքեան մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրովք մարմնովն` զոր ինչ գործեաց յառաջ` եթէ բարի և եթէ չար։ բ· Կոր· ե· 10։

Ինքն Տէր հրամանաւ 'ի ձայն հրեշտակապետի, և 'ի փող Աստուծոյ իջանէ յերկնից։ և մեռեալք 'ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք` որք կենդանոյն մնացեալ իցեմք` նոքօք հանդերձ յափշտակիցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս։ և այնպէս յամենայն

ժամ

նայ փառքով։ Կըսերմանվի տկարութենովը` և վեր կըլլենայ զօրութենով։ Կըսերմանվի շնչաւոր մարմին, և վեր կըլլենայ հոգևոր մարմին։ Որ պէտք է որ էս ապականութիւնս հագնի անապականութիւնը. և էս մահկանացուս որ հագնի անմահութիւնը։ ա· Կոր· ժե 41-44· և 53։

Մենք ամենքս էլ Քի՟ ատենի (1) առաջին պիտի երևինք. պատճառը որ` պիտի առնի ամեն մարդ իւր մարմնովը` առաջ ինչ որ գործեց` թէ բարի և թէ չար։ բ· Կոր· ե· 10։

Տէրն ինքն (Ի–Ք) հրամանովն հրեշտակներու ձայնով, և Այ՟ փողով վեր կըգայ երկնքէն։ և Քի՟ ([illegible]) մեռածներն, յառաջ վեր կըլլենան, յետոյ մենք էլ որ կենդանի մնացած կըլլինինք` նորանց հետ ամպերով վեր կըքաշվինք Տէրի առաջն յօդի (2) մէջն։

և

(1) դիւանին (2) հաւայէ։

ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Այսուհետեւ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։ Ա. Թեսաղ. Դ. 15—17։

և ընդ ամեն ժամանակ Տիրոջ հետ կը լինինք։ Հիմիկուց ետը մխիթարեցէք մին մինու էս խօսքերովս։ Ա. Թեսաղ. Դ. 15—17։

# ԳԼՈՒԽ ԺԴ։

## Յաղագս հանդերձելոյ կենաց։

Ոչ եթէ ունիմք զքաղաք որ աստէն մնալոց իցէ. այլ զհանդերձեալսն խնդրեմք։ Եբր. ԺԳ. 14։

Զկեանս յաւիտենականս ետ մեզ աստուած, և այս են կեանք որ յՈրդին նորա են։ Ա. Յովհ. Ե. 11։

## Նոր գալոց կեանքին համար։

Չէ թէ ունենք (էնպէս) քաղաք՝ որ էստեղ մնալու լինի. բայց նոր գալու (բանէրն) ենք խնդրում։ Եբր. ԺԳ. 14։

Ած յաւիտենական կեանքը տուաւ մեզ։ և էս է կեանքն, որ նորա որդումն է։ Ա. Յովհ. Ե. 11։

---

### Ա. Մեծաց դատապարտելոց։

Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական. որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։ Մատթ. ԻԵ. 41։

Պարտ

### Ա. դատապարտուածների վիճակն։

Գնացէք ինձանից անիծւածներ յաւիտենական կրակի մէջն. որ պատրաստուած է սատանային և նրա հրեշտակներին. Մատթ. ԻԵ. 41։

Պարտ

Պարտէ առաջի Աստուծոյ՝
հատուցանել նեղչացն ձե-
րոց զնեղութիւնս։ Եւ ձեզ
նեղելոցդ զհանգիստ ընդ
մեզ ՚ի յայտնութեան Տեառն
մերոյ Յիսուսի, յերկնից հրեշտա-
կօք զօրութեան իւրոյ· ՚ի
բոց հրոյ առնուլ զվրէժս
յայնցանէ՝ ոյք ոչ ճանա-
չեն զԱստուած, և որք
ոչ հնազանդեն աւետա-
րանի Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի։ Որք տայցեն
վրէժս ՚ի սատակումն յա-
ւիտենից՝ յերեսաց Տեառն՝
և ՚ի փառաց զօրութեան նորա։
Բ· Թեսաղ· Ա· 6—9։

Որդն նոցա ոչ վախճա-
նեսցի· և հուր նոցա ոչ շիջ-
ցի։ և եղիցին ՚ի տեսիլ ա-
մենայն մնեղեաց։ Եսայ· ԿԶ·
24։

Որ ոք ոչ գտաւ ՚ի գիրն
կենաց գրեալ արկաւ ՚ի լիճ՝
հրոյն։ Յայտ· Ի· 15։

Ծուլայն, և անհաւատից,
և պղծոց՝ և սպանողաց, և
պոռնկաց· և կախարդաց՝ և
կռա-

Պիտի է որ առաջին՝ ձեր
նեղիչին տուողներին՝ նեղութիւն
հատուցանել։ Եւ ձեզ նե-
ղացածներիդ՝ մեզ հետ հան-
գիստ երբ որ մեր Տէրը Յիսուս
Քրիստոս յայտնուի երկնքէն իւր
զօրութեան հրեշտակներովը· որ
կրակի բոցով վրէժներ (1)
առնէ նորանցից՝ որ Աստուածը չեն
ճանաչում, և նորանցից որ
մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին
չեն հնազանդում։ Նորանք
պիտի պատիժ քաշեն յաւի-
տենական սատակուելու մէջն
Տէրոջ երեսէն և նորա զօ-
րութեան փառքէն։ Բ· Թես·
Ա· 6—9։

Նորանց որդն չի մեռնիլ· և
նորանց կրակն չի անցնիլ։ և
կըլլին ամեն ստեղծուածնե-
րուն տեսիլքի համար։ Եսայ·
ԿԶ· 24։

Ամէն որ չի գտնուաւ կեանքի
գրին մէջ քցուեց կրակի լճի
(2) մէջ։ Յայտ· Ի· 15։

Ծուլերուն և անհաւատնե-
րուն, և պիղծերուն, և սպա-
նողներուն, և պոռնիկներուն
և

---

(1) հայջնէր (3) հեօւէն։

կռապաշտից՝ և տեղատրեաց. և ամ՟ ստոց՝ ամբարշտաց. որոց բաժինն եղիցի 'ի լճին այրեցելում հրով և ծծմբով որ է մահն երկրորդ: Յայտ. Իա. 8.

և կախարդներին, և կռապաշտներին, և տեղատուողներին և ամեն սուտ ասողներին, և ամբարիշտներին՝ նորանց (ՏԵՂՆԿԷՆ) բաժինն կըլինի կըրակով և ծծմբով (*) եռված լճի մէջն՝ որ երկրորդ մահն է: Յայտ. Իա. 8:

Ծառայ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա՝ արբցէ գան բազում: Իսկ որ ոչն գիտիցէ, և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ: Ամենայնի որում շատ տուեալ, շատ խնդրեսցի 'ի նմանէ: և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ. Ղուկ. ԺԲ. 47. 48:

Այն ծառայն՝ որ իւրան Տէրի կամքն գիտումէ, և նո՛ր կամքին պէս չի պատրաստել՝ շատ կըթակվի: Իսկ էն որ չի գիտել և ծեծելու արժանի բան կըգործէ՝ քիչ կըծեծվի: ամենին էլ ում որ շատ տուըվալ շատ կըխնդրվի նորանից: և ում որ շատ պահ տուըվալ, էլ աւելի կուզեն նորանից: Ղուկ. ԺԲ. 47. 48:

Բ. Երանութիւն արդարոց:

Եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն 'ի սկզբանէ աշխարհի: Մատ. ԻԵ. 34:

Բ. Արդարների երանութինը:

Եկէք իմ հօր օրհնվածներ ժառանգեցէք արքայութինը՝ որ աշխարհքի սկսվելու ժամանակից ձեզ հա՟ր պատրաստած է: Մատ. ԻԵ. 34:

(*) ԿՈՒԿՈՒՐԹՈՎ:

Որ    Այն

Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Ա. Կորն. Բ. 9:

Այս են յաւիտենական կեանք. զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ ԱԾ. և զոր առաքեցեր զՅս Քրիստոս: Հայր՝ զորս ետուրն ինձ, կամիմ զի ուր եմս ես և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ: Յօհ. ԺԷ 3. 24:

Յորժամ Քրիստոս յայտնեսցի, կեանքն ձեր. յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք: Կողոս. Գ. 4:

Ահաւասիկ խորանն Աստուծոյ ՚ի մէջ մարդկան. և բնակեսցէ ընդ նոսա: և նոքա ժողովուրդք նմա: և սա ԱԾ նոցա: Յայտ. ԻԱ. 3:

Ի յարութեան ոչ կանայս առնեն՝ և ոչ արանց լինին. այլ են իբրև զհրեշտակս յերկինս: Մատթ. ԻԲ. 30:

Նորոց

Այն որ աչք չէ տեսաւ և ականջ չէ լսեց, և մարդոյ սրտի մէջ չէ ընկաւ, նորան որ պատրաստեց ԱԾ իւր սիրողներին: Ա. Կորն. Բ. 9:

Այս է յաւիտենական կեանքն որ ճեզ մենակ ճշմարիտ ԱԾ ճանաչեն. և նորան որ ուղարկեցիր Յս. Քսը: Հայր էնտունք որ ինձ տուէր, կամենում եմ, որ ինչ տեղ ես եմ, նորանք էլ ինձ հետ լինին. որ իմ փառքս տեսնեն: Յօհ. ԺԷ. 3. և 24:

Երբ որ Քրիստոսն կըյայտնվի ձեր կեանքն. էն ժամանակ դուք էլ փառքով նր հետ կըյայտնվիք: Կողոս. Գ. 4:

Ահա այս խորանն (*) մարդկանց մէջ. և կըբնակվի նորանց հետ: և նորանք նորա ժողովուրդ և սա նորանց ԱԾ: Յայտ. ԻԱ. 3:

Յարութե ժամանակին ոչ կնիկ են առնում. և ոչ մարդի են գնում. բայց ինչպէս երկնքի հրեշտակներ են Մատթ. ԻԲ. 30:

Նոր

(*) չատիրը

Նորոց երկնից, և նորոյ երկրի, ըստ աւետեացն հայ-եցեալ սպասիցեմք, յորս ար-դարութիւնն բնակէ։ Բ. Պետ. Գ. 13։

Տեսի երկին նոր՝ և երկիր նոր։ քանզի առաջին երկին և երկիր եանց. և ծով ոչ գոյր։ Յայտ. ի̃ա. 1։

Ասաց ցիս որ նստէր ՚ի վերայ աթոռոյն։ ահաւասիկ առնեմ զամենայն նոր։ Յայտ. ի̃ա. 5։

Նորե ըրկնքի, և նոր երկրի խոստմունքին պէս մտիք տա-լով սպասենք, նորանցում որ արդարութիւնն բնակ-վում է։ Բ. Պետ. Գ. 13։

Տեսայ նոր երկինք և նոր երկիր։ պատճառը որ առա-ջի երկինքն և երկիրս անց-կացաւ. և ծով չէր կար։ Յայտ. ի̃ա. 1։

Ասեց ինձ՝ նա որ աթոռին վերայ նստումէր։ ամենն նոր եմ շինում։ Յայտ. ի̃ա. 5։

---

## Օրհնաբանութիւն։

Ինքն Աստուած խաղա-ղութեան՝ սուրբ արասցէ զձեզ համօրէնս. և բովանդակ ձեր ոգի և շունչ և մարմին անարատ ՚ի գալուստ Տն մերոյ Յի Քի պահեսցի։ Հաւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ. որ և արասցէ զնոյն։ Ա. Թես. Ե. 23. 24։

## Օրհնաբանութիւն։

Ինքն խաղաղութեան ածն՝ սբ անէ ձեզ ամենդ էլ։ և ձեր ամեն հոգին և շունչն և մարմինն անարատ պահվլի, մինչևի մեր տէր յս քի գալստեան ժամանակն։ Հաւատարիմ է նա որ ձեզ կանչեց, որ էն էլ կանէ։ Ա. Թես. Ե. 23. 24։

# ՑԱՆԿ:


Գլ. Երես.

Յաղագս Արտասանութեան Գրոց: = = 1

Ա. Յաղագս գոյութեան և յատկութեանց Ա՟յ = 6

1. Գոյութիւն Ա՟յ = = = 6

2. Յատկութիւնք Ա՟յ = = = 9

ա. Մի է = = = = 9

բ. Հոգի = = = = 10

գ. Յաւիտենական = = = 10

դ. Ամենակարող = = = = 11

ե. Ամենագէտ = = = = 11

զ. Ամենուրեք = = = = 13

է. Սուրբ = = = = 14

ը. Արդար = = = = 14

թ. Ճշմարիտ = = = = 15

ժ. Համբերատար = = = = 16

ժա. Անհասանելի = = = = 17


*

Գլ. Երես։


Բ. Յաղագս ամենասուրբ երրորդութեան = 18

ա. Յաղագս Այ հօրն = = = 20

բ. Այ որդւոյն = = = 21

գ. Այ հոգւոյն սրբոյ = = 23

Նախասահմանութիւն = = = 26

Գ. Յաղագս արարչութեան աշխարհի = = 27

Արարչութեան կարգոյ = = = 29

Պատուիրանազանցութիւն = = = 30

Հրեշտակք = = = = 32

Սատանայ և դևք = = = 33

Դ. Յաղագս խնամակալութեան Այ = 35

Ե. Յաղագս մարմնաւորութեան որդւոյն Այ = 37

Մարգարէութիւնք և օրինակք = = 39

Ծնունդն Յիսուսի Քրիստոսի = = 44

Յիսուս օծեալ քահանայապետ թագաւոր և մար-

գարէ = = = = = 46

Կեանք և գործք Յի Քրիստոսի = = 47

Չարչարանք և մահ Յիսուսի Քի = 51

Պատճառ և արդիւնք չարչարանացն Քի = 60

Յարութիւն Քրիստոսի = = = 62

Համբարձումն Քրիստոսի = = 63

Գլ. Երես։

Զ. Յաղագս շնորհաց Աստուծոյ = = 68

Շնորհքն լուսաւորէ = = = 67

ուղղէ զկամս = = = = 69

հարկաւոր է վասն ամենեցուն = = 70

ստացեալ լինի աղօթիւք = = = 72

Տէրունական աղօթք = = = 75

Ընթերցուածք սուրբ Գրոց շնորհաբեր է = 92

Պտուղք շնորհաց = = = 93

Է. Յաղագս օրինաց Աստուծոյ = = 94

Բովանդակութիւն օրինացն = = 133

Օրէնքն Մովսէսի ոչ հարկէ պահել = = 135

Ուխտն աւետարանական 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
յոր խոստացաւ հաստատելոյ

ա. զփրկութիւն = = = 136

բ. զորդեգրութիւն և ժառանգութիւն յաւիտենական
կենացն = = = = 139

Իսկ հաւատն պարտի կենդանի լինել = 141

Ը. Յաղագս եկեղեցւոյ Աստուծոյ = = 143

Սա է ժողովուրդ Ա՟յ = = = 143

Մարմին Ք՟ի = = = = 145

Հօտ Ք՟ի = = = = 145

| Գլ. | | Երես. |
|---|---|---|
| | [illegible] | 146 |
| Ը. | սուրբ | 147 |
| | ընդհանրական | 148 |
| | առաքելական | 148 |
| | ճշմարտութեան եկեղեցւոյ | 149 |
| | Հերձուածք | 151 |
| Թ. | Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ | 154 |
| Ժ. | Յաղագս երկրորդ գալստեանն Քի | 169 |
| | Դատաստան | 171 |
| ԺԱ. | Յաղագս յարութեան մեռելոց | 173 |
| ԺԲ. | Յաղագս հանդերձեալ կենաց | 176 |
| | ա. Վիճակ դատապարտելոց | 176 |
| | բ. Երանութիւն արդարոց | 179 |
| | Բովանդակութիւն | 130 |


ԳՐԱԴԱՐԱՆ ԳՈՍ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ ՀՍՍՀ-ССРА ИМ. А. МЯСНИКЯНА Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գիրքը ենթարկվել է ախտահանման

1/VI —— 43 թ.